Հավատարիմ մնալով Սրբության շարժման ավանդույթին՝ կանայք կարևոր դեր էին կատարում վաղ հոգեգալստական շարժման մեջ և «Աստծո ժողովներում»՝ որպես ավետարանիչներ, միսիոներներ և հովիվներ: Սկզբնական շրջանում Գլխավոր խորհուրդը նշանակում էր կանանց միայն որպես ավետարանիչներ և միսիոներներ, բայց 1935թ.-ից նրանց սկսեցին նշանակել նաև որպես հովիվներ: Այնուամենայնիվ, մինչև 1935թ.-ը, բազմաթիվ կանայք արդեն ծառայում էին որպես հովիվներ՝ առանց համապատասխան հարանվանական ճանաչում ունենալու: Այս կանանց համար Աստծո կանչն ավելի մեծ նշանակություն ուներ, քան պաշտոնական եկեղեցական հավանությունը: Բողոքական շարժման սկզբունքներից մեկը բոլոր հավատացյալների քահանայությունն է: Հոգեգալստական շարժումն արմատական կերպով կիրառեց

այս սկզբունքը՝ հավանություն տալով կանանց ծառայությանը:

Մինչև 1950թ.-ը ավելի, քան հազար կին ավետարանիչ ճանապարհորդեցին ողջ երկրով մեկ՝ ավետարանելով և եկեղեցիներ հիմնելով: Մեծ ազդեցություն ունեցող կանանց թվում էին Ջեյմա Արգյուն, Մարի Բեջիս Բրաունը, Էտտա Կալիոնը, Էլիս Ռեյնոլդս Ֆլաուերը, Հեթի Համոնդը, Չոնիտա Հովարդը, Էլիս Է. Լուսը, Էյմի Սեմփլ ՄակՖերսոնը («Աստծո ժողովների» կազմում 1919-ից մինչև 1922թթ.-ը), Քերի Ջադ Մոնտգոմերին, Լուիս Նանկիվելը, Ֆլորենս Սթեյդելը, Լիլիան Թրեշերը, Լուիս Ջեթեր Ուոլկերը, Ալտա Ուոշբորնը և Միլդրեդ Ուիտնին:

Թեպետ այս կին ծառայողներն առաջ էին իրենց ժամանակակից, նրանց ծառայությունը բարձրացել էր իրենց նվիրվածության, ոչ թե իրենց ժամանակակից հասարակական գաղափարախոսության պատճառով: Ծառայողական դոները բացվել էին նրանց առջև խոր հոգևոր կյանքի շնորհիվ: Հեթի Համոնդը քաջ հայտնի էր այն բանով, որ խրախուսում էր հավատացյալներին ձգտել ավելի խոր կյանքի Հիսուս Քրիստոսի մեջ. «Ես համոզված եմ, որ մենք պետք է սպասենք Տիրոջ առջև, մինչև որ հասկանանք, որ Աստծո ներկայության մեջ ենք, մինչև որ ամեն միտք գերվի, և մենք բարձրանանք աշխարհից և փակվենք Աստծո մեջ, ասես թե ողջ աշխարհում չլինեք այլևս ոչ ոք, այլ միայն Տեր Հիսուսը և մենք»²⁵:

Այնուամենայնիվ, մինչև դարի կեսերը հավատարմագրեր ունեցող ծառայող կանանց թիվը կտրուկ նվազեց, ինչը պայմանավորված էր մի շարք գործոններով: Որոշ եկեղեցիներ, օրինակ, ընդունեցին այնպիսի աստվածաբանական և մշակութային դիրքորոշում, որը հավանություն չէր տալիս կանանց հոգևոր առաջնորդությանը: Կին ծառայողների թվի նվազման գլխավոր պատճառներից մեկը, հավանաբար, այն էր, որ կանանց կողմից իրականացվող ծառայությունների պահանջարկը սկսեց նվազել: Վաղ շրջանի կին ծառայողները մեծ մասամբ հաստատված համայնքների հովիվներ չէին. նրանք ինքնուրույն էին նախաձեռնում իրենց ծառայությունը՝ որպես ավետարանիչներ կամ եկեղեցիներ հիմնադրողներ: Մինչև քսաներորդ դարի կեսերը, «Աստծո ժողովների» որոշ առաջնորդներ փորձեցին պաշտպանել հաստատված եկեղեցիները՝ թույլ չտալով, որ նոր եկեղեցիներ հիմնվեին նույն քաղաքում կամ տարածքում, ինչը նրանք մրցակցություն էին համարում: Նման քաղաքականությունն օգնեց գոյություն ունեցող եկեղեցիներին, որոնք գերադասում էին տղամարդ հովիվներ ունենալ: Վերջին տասնամյակներին այս միտումը փոխվում է: Կին ծառայողների թիվն «Աստծո ժողովներում» ավելացել է



Թոմաս Ֆ. Ցիմմերմանը (աջ կողմից) զրուցում է Հարոլդ Օքենգայի հետ «Ավետարանականների ազգային միության» ամենամյա համաժողովին Գրանդ Ռեփիդում՝ Միչիգանում, 1961թ.-ին: Ցիմմերմանը, ով ամենաերկար ծառայած Գլխավոր վերակազմում էր (1959-1985թթ.), կամուրջներ էր կառուցում հոգեգալստականների և ավետարանականների միջև:

14.9%-ից՝ 1990թ.-ի տվյալներով, մինչև 22.3%-ը՝ 2013թ.-ի տվյալներով: Կին ավագ հովիվների թիվն ավելացել է 400-ից՝ 2000թ.-ի տվյալներով, մինչև 529-ը՝ 2012թ.-ի տվյալներով, թեև նրանցից ոմանք առաջնորդում են եկեղեցիներ, որոնք չեն մտնում «Աստծո ժողովների» մեջ: Այս շրջադարձին նպաստող գործոններից են մշակութային անցումը, որի պատճառով փոխվեց վերաբերմունքը կին ծառայողների հանդեպ, հարանվանական առաջնորդների աջակցությունը և նորովի ծագած անհրաժեշտությունը եկեղեցիներ հիմնելու մեջ:

Համագործակցություն

Վաղ հոգեգալստականները հաճախ էին համագործակցում տեղական մակարդակի վրա քաղաքային ավետարանչական ծառայությունների և նմանատիպ կամպանիաների ժամանակ: Նրանք հատում էին ռասայական, հարանվանական և հասարակական սահմանները գործնական ծառայողական ջանքերով: Այսպես էր 100 տարի առաջվա վրանային հավաքույթների ժամանակ, 1950-ական թվականների փրկության և բժշկության կամպանիաների ընթացքում և 1960-1980-ական թվականների խարիզմատական նորոգման շրջանում:

«Աստծո ժողովները» ղեկավարում էր 1940-ական թվականներին հիմնադրված մի քանի նոր կազմակերպություններ, որոնք միավորում էին ավետարանական

և հոգեգալստական քրիստոնյաներին: «Աստծո ժողովները» 1942թ.-ին կազմված «Ավետարանական քրիստոնյաների ազգային միության» (ԱՔԱՄ) հիմնադիր անդամ էր: ԱՔԱՄ-ը դարձավ ազգային ավետարանական շարժման ձայնը մի շարք հարցերում, որոնց թվում էին կրոնի ազատությունը, ինչպես նաև խրախուսեց համագործակցությունը՝ համաշխարհային ավետարանչության համար: Անդամությունն ԱՔԱՄ-ում օգնեց «Աստծո ժողովներին» նույնանալ ավելի լայն ավետարանական շարժման հետ, և հենացրեց աղանդի կարգավիճակը, որով մի քանի դիտորդներ պիտակել էին այն: Աստծո ժողովների Գլխավոր վերակազմում Թոմաս Ֆ. Ցիմմերմանը (1959-1985թթ.), ավելի, քան այլ հոգեգալստականներ, ջանում էր կամուրջներ կառուցել ավետարանական և հոգեգալստական քրիստոնյաների միջև:

«Աստծո ժողովները» նույնպես հիմնադրեց «Հոգեգալստական համաշխարհային համաժողովը» (1947թ.) և «Հյուսիսային Ամերիկայի Հոգեգալստական ընկերակցությունը» (1948թ.), ինչպես նաև համագործակցեց «Լոզանի համաշխարհային ավետարանչության կոմիտեի», «Համաշխարհային ավետարանական միության» և «Վեսլիական Սրբության կոնսորցիումի» հետ:

Հոգեգալստականները կասկածանքով են վերաբերվել այն էկումենիկ միտումներին, որոնք առկա են խոշոր

հարանվանություններին պատկանող եկեղեցիներում՝ համարելով դրանք փոխզիջում վարդապետության և էթիկայի մեջ հանուն կազմակերպական միաբանության: Այդ իսկ պատճառով, «Աստծո ժողովները» չի ընդգրկվել այնպիսի միջեկեղեցական խորհուրդներ ներկայացնող կազմակերպություններում, ինչպիսիք են «Եկեղեցիների ազգային խորհուրդը» և «Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը»:

Արթնության նոր շարժումներ

Աստծո հետ ավելի մտերիմ լինելու քաղցը, նաև Քրիստոսին և Նրա առաքելությանը լիովին նվիրված լինելու ցանկությունը «Աստծո ժողովների» հոգևոր ԴՆԹ-ի մասն է: «Աստծո ժողովները» ծնվել է քաներորդ դարի սկզբի արթնության արդյունքում: «Աստծո ժողովների» հիմնադիրներն աղոթում էին Աստծո Հոգու թարմ թափումների համար ապագայում: 1938թ.-ին Էնդրյու Արգյուն գրեց. «Մենք գտնվում ենք դեռ երիտասարդ շարժման մեջ, որը լի է երիտասարդներով: Այս շարժումը կենդանի է, որովհետև այն ստեղծվեց պայքարելով հավատքի համար, և այն կենդանի կմնա, քանի դեռ շարունակի պայքարել հավատքի համար»²⁶:

Նախորդ 100 տարվա ընթացքում երևան եկան նոր արթնության շարժումներ, որոնք բերեցին և խրախուսեցին, և դժվարություններ: Նոր արթնության շարժումներից մեկը, որը կոչվեց «Վերջին անձրևի նոր կարգ», ծագեց «Շերոն» հանրային դպրոցների և «Շերոն» մանկատան հոգեգալստականների մեջ Նորթ Բեթֆորդում՝ Սասկաչևանում, Կանադայում, 1948թ.-ին: «Վերջին անձրևի» կողմնակիցները, ինչպես և վաղ հոգեգալստականները, հավատում էին, որ իրենք վերականգնում էին նորկտակարանյան եկեղեցուն տրված Սուրբ Հոգու բոլոր պարգևները: Այնուամենայնիվ, «Վերջին անձրև» շարժման մեջ ներգրավված մարդիկ սկսեցին առանձնանալ այլ հոգեգալստականներից:

«Վերջին անձրևի» որոշ կողմնակիցներ կոնգրեգացիոնալիզմի (ինքնակառավարվող տեղական համայնքների) եռանդուն ջատագովներ էին, ինչը գործնականում հանգեցրեց այն բանի, որ նրանք ոչ ոքի հաշվետու չէին: Բացի այդ՝ հայտնվեցին մի քանի վիճարկելի բարոյական նկարագիր և վարդապետություններ ունեցող ինքնահոշակ մարգարեներ և առաքյալներ, որոնք վարկաբեկեցին ողջ Հոգեգալստական շարժումը: Հոգեգալստական հարանվանությունների մեծ մասը, ներառյալ «Աստծո ժողովները», դատապարտեցին նրանց ծայրահեղությունները: Թեև այս շարժումը չհանգեցրեց հարանվանական պառակտման, որոշ առաջնորդներ և համայնքներ անջատվեցին «Աստծո ժողովներից»:



Աղոթքը մշտապես եղել է Գլխավոր խորհրդի հավաքույթների կարևոր մասը: Այս լուսանկարում մարդիկ հավաքվել են խորանի մոտ 1959թ.-ի Գլխավոր խորհրդի հավաքույթներից մեկի ժամանակ Սան Անտոնիոյում՝ Տեխասում:

Միևնույն ժամանակ, ուշ 1940-ական թվականներին առաջացավ մեկ այլ շարժում, որի շեշտադրումը փրկությունը և բժշկությունն էր: Այն ընդգրկում էր մի շարք ակնառու ավետարանիչների (Է. Է. Ալեն, Ու. Վ. Գրանտ, Ջեյ Կոու), ովքեր սկսեցին իրենց ծառայությունն «Աստծո ժողովներում», բայց, ի վերջո, կազմեցին անկախ ծառայություններ: Այդ շարժման ամենամտահոգիչ հետևանքներից մեկը ազդեցիկ անկախ ավետարանիչների մեծ ցանցի ձևավորումն է, որոնք գրեթե հաշվետու չեն ոչ ոքի:

Փրկություն և բժշկություն քարոզող ավետարանիչները գրավեցին բազմաթիվ ոչ հոգեգալստականների ուշադրությունը, ինչի արդյունքում 1950-ական թվականներին բռնկվեց հոգեգալստական արթնություն այնտեղ, որտեղ հոգեգալստականներն ամենից քիչ էին ակնկալում՝ խոշոր հարանվանություններին պատկանող եկեղեցիներում: Այս արթնությունը, որը հայտնի դարձավ որպես խարիզատական նորոգում, որոշակի շփոթումը ստեղծեց հոգեգալստականների միջև, ովքեր չգիտեին, թե ինչպես արձագանքել դրան:

Հոգեգալստականները կարծում էին, որ նոր խարիզատները կթողնեն իրենց հին եկեղեցիները և կմիանային հոգեգալստական եկեղեցիներին, բայց խարիզատներից շատերը չհեռացան իրենց համայնքներից: «Վերջին անձրևի» առաջնորդները նույնպես միացան այս արթնությանը՝ փոփոխելով իրենց ուսմունքները և հարմարեցնելով դրանք խարիզատական լսարաններին: Խա-

րիզատական նորոգման ընթացքում «Վերջին անձրևի» շեշտադրումները կրկին սկսեցին քարոզվել, այդ թվում՝ ուսմունքները դևեր հանելու մասին, աշակերտության շարժումը, դրական դավանության աստվածաբանությունը և հետաքրքրությունը ժամանակակից առաքյալների և մարգարեների հանդեպ:

Հոգեգալստականները և խարիզատները հաղորդակցվում էին միմյանց հետ բազմաթիվ միացյալ աղոթքախմբերի, համաժողովների և այլ միջոցառումների ժամանակ: «Աստծո ժողովների» առաջնորդներն առաջարկեցին չափավոր արձագանք խարիզատական նորոգմանը 1972թ.-ին.

«Հոգու քամիներն ազատորեն փչում են հայտնի Հոգեգալստական ընկերակցության սահմաններից դուրս... «Աստծո ժողովները» հավանություն չի տալիս այն ամենին, ինչն ակնհայտորեն սուրբգրային չէ վարդապետության և վարքի մեջ: Բայց մենք ոչ էլ կտրականապես դատաարտում ենք այն ամենը, ինչը լիովին չի... համապատասխանում մեր չափանիշներին... Կարևոր է գտնել մեր ճանապարհը ողջամիտ սուրբգրային կերպով՝ խուսափելով երկու ճայրահեղություններից, որոնք են այնպիսի էկումենիզմը, որը փոխզիջման է ենթարկում սուրբգրային սկզբունքները, և այնպիսի բացառողականությունը, որը չի ընդունում ճշմարիտ քրիստոնյաներին»²⁷:

Նոր արթնության շարժումները, ինչպիսիք են «Պենսակոլայի թափումը» Բրաունսվիլի «Աստծո ժողովների» եկեղեցում (Պենսակոլա, Ֆլորիդա), որը սկսվեց 1995թ.-ին և գրավեց ավելի քան 2.5 միլիոն այցելուի, հոգևորապես կազդուրեց և զորացրեց «Աստծո ժողովների» բազմաթիվ հետևորդների:

Ապագան

Առաջին հարյուրամյակը հատելու շեմին «Աստծո ժողովներն» առաջընթացի լուրջ նշաններ է ցույց տալիս, և նույնպես կանգնած է մեծ մարտահրավերների առջև: Անցյալ տասնամյակի ընթացքում «Աստծո ժողովները» սկսեց նորովի կենտրոնանալ եկեղեցիներ հիմնելու, կրթության, միսիայի, նաև կանանց և ազգային փոքրամասնություններին ավելի արդյունավետ կերպով եկեղեցիների առաջնորդական կազմի մեջ ընդգրկելու վրա: «Աստծո ժողովները» հետևողական աճ է ցույց տալիս, որը շատ ավելին է, քան Միացյալ Նահանգների խոշոր հարանվանությունների մեծ մասի աճը: Ունենալով ավելի քան 3.1 միլիոն հետևորդ 2013թ.-ին՝ «Աստծո ժողովներն» իններորդ հարանվանությունն է Միացյալ Նահանգներում իր հետևորդների թվով:

Թերևս կա վտանգ, որ այս խրախուսական վիճակագրությունը կարող է գերազանցության զգացում առաջացնել: Այն հավատացյալները, ովքեր հիմնադրեցին «Աստծո ժողովները», գովեստի են արժանի միլիոնավոր մարդկանց Քրիստոսին բերելու համար, ինչպես

նան հավատարիմ ծառայության համար, որի նպատակն էր՝ իրականացնել Մեծ Հանձնարարականը: Այնուամենայնիվ, հոգեգալստական պատմությունը ցույց է տալիս, որ ամեն ինչ այդքան պարզ չէ. դրանում կան թե՛ վկայություններ փրկված կյանքերի, վերականգնված ընտանիքների և բժշկված մարմինների մասին, թե՛ պատմություններ մարդկային թուլության, կորուստների և դժվարությունների մասին:

Գրեթե բոլոր արթնության շարժումները քրիստոնեության պատմության մեջ կորցրել են իրենց կրակ մի քանի սերունդ անց՝ թողնելով իրենցից հետո հաստատություններ, որոնք լի են մարած հուշերով իրենց ծնունդ տվող հոգևոր ջերմանդության մասին: Արդյո՞ք «Աստծո ժողովները» կպահպանի իր հոգեգալստական ինքնությունը: Արդյո՞ք այն կշարունակի խրախուսել մարդկանց քրիստոսին և Նրա առաքելությանը լիովին նվիրվելու համար:

Հոգեգալստականները սկսեցին քսաներորդ դարը որպես փոքրիկ մեկուսացված խումբ, որը տարբերվում էր իրեն շրջապատող հասարակությունից իր կենսաոճով: Մինչև դարի ավարտը, Հոգեգալստական շարժման սովորաբար հատվածներ հարմարվեցին ամերիկյան հասարակության մշակութային նորմերին: Մի ժամանակ անձի հաջողությունը գնահատվում էր մաքրությամբ, իսկ ներկայումս բազմաթիվ հոգեգալստականներ մերժում են աշխարհից առանձնանալը՝ դա օրինապաշտություն համարելով:

Ինչպիսին է լինելու «Աստծո ժողովների» ապագան: 1953թ.-ին նախկին Գլխավոր վերակազմի Վ. Տ. Գաստոնը (1925-1929թթ.) առաջարկեց. «Եթե մենք ցանկանում ենք ունենալ այնպիսի ապագա, որն ավելի լավ է մեր անցյալից կամ նույնիսկ համեմատելի է մեր անցյալի հետ և արժանի է դրան, մենք պետք է կրկին որոշ դասեր քաղենք մեր անցյալից»²⁸: Նա գրում էր, որ ամենակարևոր դասերից մեկը, որը մենք պետք է նորովի յուրացնենք, «մաքուր և անբիծ» կրոնը խթանելն է:

Համաձայն Գաստոնի՝ պատմության «ողբերգական դասն» այն է, որ թեև եկեղեցին ամուր հիմքը ունի, «ներսի մարմնական տարրերը», միևնույն է, կարող են ապականվել: Նա արեց այս գզուշացումն այն ժամանակ, երբ մի քանի հոգեգալստական հեռուստատեսային բժշկող ավետարանիչներ, որոնց անբարո կենսաոճը բացահայտվել էր, շարունակում էին տարածել իրենց ոչ աստվածաշնչյան ուղերձն այն մասին, որ Աստված ֆինանսական բարգավաճում է երաշխավորում:

Գաստոնը հիշեցրեց «աղքատության կամ հարստության կամ սոցիալա-

կան կարգավիճակի լիովին անտեսումը», որի ականատեսը նա եղել էր վաղ շրջանի հոգեգալստական շարժման մեջ. «Լիովին բավականացած՝ առանց այս աշխարհի փայլազարդերի, և գոհ՝ լինելու այս աշխարհի ծաղրի և ատելության առարկաները, այդ խստաբարո առաջագնացների մեջ կար այնպիսի բան, ինչը հրապուրիչ և համոզիչ էր դարձնում նրանց»:

Գաստոնի դիտարկումները պետք է դրդեն «Աստծո ժողովներին» ներկա անդամներին քննել իրենց անձերը: Ես աղոթում եմ, որ հոգևոր կյանքը, որը պետք է ապրել սրտի մաքրությամբ և Խոսքը վկայելու գործությամբ, շարունակի մնալ մեր հոգեգալստական առաջնահերթությունը: Եթե երիտասարդ հոգեգալստականներն ականջ դնեն ավագ սերնդի դասերին, «Աստծո ժողովների» ապագան ապահով ձեռքերում կլինի:



Դարին Զ. Ռոջերը Հունանիտար գիտությունների մագիստրոս և Իրավագիտության դոկտոր է, «Ֆլուորե» հոգեգալստական ժառանգության կենտրոնի տնօրենը և «Աստծո ժողովների ժառանգություն» ամսագրի խմբագիրը:

ՆՇՈՒՄՆԵՐ

- 3 Ն. Ռեյ. «Գլխավոր խորհրդի նպատակները», «Քրիստոնեական Ավետարան», դեկտեմբերի 19, 1914թ., էջ 1:
- 2 Ֆրենկ Բարթոլմեյ. «Ինչպես Հոգեգալստը եկավ Լոս Անջելես» (Լոս Անջելես, Կալիֆորնիա, հրատ.-աձ հեղ.-ի կողմից, 1925թ.), էջ 54:
- 3 Ֆ. Բ. Լոուրենս. «Վերականգնված առաքելական հավատքը» (Սենթ Լուիս, Միսուրի, «Ավետարան» հրատարակչություն, 1916թ.), էջ 86:
- 4 Ֆ. Բ. Լոուրենս. «Վերականգնված առաքելական հավատքը» (Սենթ Լուիս, Միսուրի, «Ավետարան» հրատարակչություն, 1916թ.): Սթենլի Հովարդ Ֆրոդշեմ. «Նշաններ, որոնք հետևում են», վերն.-աձ հրատ. (Սփրինգֆիլդ, Միսուրի, «Ավետարան» հրատարակչություն, 1946թ.):
- 5 Հենրի Հ. Նեսս. «Սուրբ Հոգու դրսևորումը՝ հայտնված Սուրբ գրքերում և հաստատված մեծ արթնությունների ժամանակ» (Սիթթի, «Հոլիվուդ Թեմփլ», 1940-ական թթ., հատակ տ.թ.-ն անորոշ է), էջ 5:
- 6 Ուոլտեր Զ. Հիգինս, պատմված Դեյտոն է. Վեբերին. «Հոգեգալստի առաջագնացները. Իմ փորձառությունները ծառայության 46 տարվա ընթացքում» (Բոստոնիա, Կալիֆորնիա, հրատ.-աձ հեղ.-ի կողմից, 1958թ.), էջ 42:
- 7 Դարին Զ. Ռոջերս. ««Աստծո ժողովները» և երկար ճանապարհը դեպի ռասայական հաշտությունը», «Աստծո ժողովների ժառանգություն» հմ. 28 (2008), էջեր 54-58:

- 8 «Հոթ Սփրինգսի ժողովը. Աստծո փառքի ներկայությունը», «Խոսք և վկայություն», հմ. 10.4 (ապրիլի 20, 1914թ.), էջ 1:
- 9 Իթելի Ա. Վեմմոն. «Եպիսկոպոս Չ. Հ. Մեյսոնը և «Աստծո եկեղեցին Քրիստոսում» հարանվանության արմատները» (Բեյքերսֆիլդ, Կալիֆորնիա, «Մենամ Լայֆ» հրատարակչություն, 1996թ.), էջ 71:
- 10 Ռոջերս, էջեր 54-58:
- 11 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», ապրիլ 1914թ., էջ 4:
- 12 Բյուրա է. Ռոսլայ. ««Աստծո ժողովներին» Արբացման վարդապետությունը» (Թեկնածուական դիտարկում, Դալլասի Աստվածաբանական համալսարան, 2008թ.): Ռոսլայը պնդում է, որ «Կատարված աշխատանք» կոչվող սրբացման տեսակետը և՛ Վեսլիական է, և՛ պատկանում է «ակնթարթային սրբացման» տեսակետը չընդունողներին, և երբեմն սխալմամբ բնութագրվում է որպես Վերափոխված աստվածաբանության կամ Մկրտական տեսակետ:
- 13 Դարին Զ. Ռոջերս. «Պատմական բացատրություն ծառայողներին ոչ ծառայողների հետ կրթելու վերաբերյալ «Աստծո ժողովների» Գլխավոր խորհրդին պատկանող դպրոցներում», չհրատ. հոդված, 2011թ., ՖՀԺԿ:
- 14 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», նոյեմբեր 1914թ., էջ 12:
- 15 Դոնի Կ. Դոնև. «Իվան Վորոնսև. Սլավոնական հոգեգալստական առաջագնաց և նահատակ», «Աստծո ժողովների ժառանգություն», հմ. 30 (2010թ.), էջեր 50-57:
- 16 Էնջելին Թաքեր. «Նա երկնքում է» (Նյու Յորք, «ՄակԳրո-Հիլ», 1965թ.):
- 17 Զ. Ֆիլիպ Հոգան «Հոգին շարժվում է աշխարհի վրա», «Հոգեգալստական Ավետարան», մայիսի 21, 1972թ., էջ 13:
- 18 Միլիա Լ.Է. «Բիլլի Դեյվիս. կրթության և ճանաչման ծայր», «Աստծո ժողովների ժառանգություն», հմ. 19.2 (ամսա, 1999թ.), էջ 6:
- 19 Այգել և Մարթա Նիլի, ծառայողական և միսիոներական գործեր, ՖՀԺԿ:
- 20 Վիլյամ Զ. Մոուլնար. «Միջմշակութային ծառայությունները ԱՄՆ-ի Միսիայում. Տոնելով ծառայության 75 տարին» (Սփրինգֆիլդ, Միսուրի, «Ավետարան» հրատարակչություն, 2012թ.), էջեր 52-69: Մոուլնարն ընդգրկում է ազգային կամ լեզվական ճյուղերի, շրջանների և ընկերակցությունների աղյուսակ:
- 21 Ռոջերս, «Աստծո ժողովները», էջեր 50-61:
- 22 Բոբ Հարիսոնը Զիմ Մինտզոմերիի հետ. «Երբ Աստված սևամորթ էր» (Գրանդ Ռեփիդս, Միչիգան, «Չոկոլետ», 1971թ.), էջ 159:
- 23 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1989թ., էջեր 117-118:
- 24 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1995թ., էջեր 72-74:
- 25 Հեթի Համնոլդ. «Մոտենալ Աստծուն», «Հոգեգալստական Ավետարան», օգոստոսի 18, 1928թ., էջ 6:
- 26 Է. Հ. Արգյու. «Երբ Աստված ուղարկեց «Վերջին անձրևը», «Հոգեգալստական Ավետարան», մարտի 19, 1938թ., էջ 3:
- 27 «Խարիզմատիկ հետազոտության գեկույց», «Էրվինս», նոյեմբեր, 1972թ., էջ 3:
- 28 Վ. Տ. Գաստոն. «Հակել մեր անգլի ժառանգությունը», «Հոգեգալստական Ավետարան», օգոստոսի 16, 1953թ., էջեր 3-4, 11:



Թոմաս Քինգ և Մերի Լեոնարդները կանգնած դրսում՝ Մեդիայում, Փենսիլվանիայում տեղի ունեցող ճամբարային հավաքույթին, մոտ 1920թ.:

Թոմաս Քինգ Լեոնարդ. Ճշմարտապես անփոխարինելի մարդ

Փ. Դագլաս Չեփմեն

Երբ 1914 թվականին առաջին Գլխավոր խորհրդի պատվիրակները հավաքվեցին Հոթ Սփրինգսում՝ Արկանզասում, քչերը կարող էին կանխատեսել, որ մի անհայտ, աննկատ հովիվ Օհայոյից անջնջելի հետք էր թողնելու «Աստծո ժողովների» պատմության մեջ՝ մի հետք, որը երևում է մինչ օրս: Թոմաս Քինգ Լեոնարդը (1861-1946թթ.) սովորական մարդ չէր. նա հովիվ, ավետարանիչ, հրատարակիչ և խմբագիր էր, ինչպես նաև Աստվածաշնչյան դպրոցի հիմնադիր, ուսուցիչ, և իմաստուն ու նախաձեռնող անձնավորություն¹:

Հովիվ Լեոնարդի ավանդն «Աստծո ժողովների» մեջ այդ Գլխավոր խորհրդի ժամանակ լիովին փաստագրված է. նա գլխավորեց այն հանձնաժողովը, որը կազմեց ընկերակցության սահմանադրության նախաբանը և բանաձևը: Նա առաջարկեց նորատեղծ ընկերակցության պաշտոնական անվանումը՝ «Աստծո ժողովներ»: Նա նվիրաբերեց ընկերակցությանը իր «Ավետարան» հրատարակությունը: Նա նվիրաբերեց իր տունը Ֆինդլիում՝ Օհայո նահանգում, որպես ընկերակցության առաջին գլխավոր ազգային գրասենյակ: Նա ընտրվեց գործադիր երիցական կազմի մեջ, և նրա Աստվածաշնչյան դպրոցն առաջադրվեց որպես Գլխավոր խորհրդի առաջին կրթական հաստատությունը ծառայողների համար²: Զարմանալի չէ, որ պատմաբան Կառլ Բոյումբաքն անվանեց Թ. Ք. Լեոնարդին «ճշմարտապես անփոխարինելի մարդ Հոթ Սփրինգսում»³: Անկախ այս տպավորիչ աջակցությանը՝ զարմանալիորեն քիչ տեղեկություններ են հրապարակվել այս մարդու կյանքի և ծառայության մասին⁴:

Վաղ տարիները

Թոմաս Քինգ Լեոնարդը ծնվել է 1861թ.-ի փետրվարի 14-ին Վեսթ Ինդեփենդենս բնակավայրում, որը Հենքոք Քանթոնում է Օհայոյում: Նա հինգերորդն էր Սթիվեն (1833-1905թթ.) և Մելվինա (1835-1879թթ.) Ուելս-Լեոնարդների տասնմեկ երեխաներից⁵: Արդեն հասուն տարիքում նա վերագրում էր իր հանդիպումն Աստծո հետ իր մոր աղոթքներին. «Ես շնորհակալ

եմ Աստծուց այնպիսի մոր համար, ով գիտեր, թե ինչպես աղոթել, և երբ նա «ճեղքեց աղոթքի մեջ», Աստված պատասխանեց և հավեց իմ սրտին»⁶:

1879 թվականի նոյեմբերի 27-ին նա ամուսնացավ Էլիս Մ. Է. Ռեյդերի հետ (1862-1888թթ.): Այս միությունից ծնվեց երեք երեխա՝ Լյուսի Է.-ն (1882-1968թթ.), Էլլա Մ.-ը (1883-1886թթ.) և Ջոն Մայքլը (1887-1894թթ.)⁷: Հիվանդությունները և մահերը հաճախ էին տեղի ունենում Թ. Ք.-ի կյանքում: Թոբախատը կործանեց նրա ընտանիքը. նրա կինը, մայրը, երկու քույրերը, եղբայրներից մեկը և նրա հորաքույրներից և հորեղբայրներից մի քանիսը մահացան այս սարսափելի հիվանդությունից⁸: Նրա երեխաներից երկուսը՝ Էլլան և Ջոնը, վարակվեցին դիֆտերիայիով և մահացան վաղ հասակում⁹:

Էլիսի վաղաժամ մահից 14 ամիս անց, Լեոնարդն ամուսնացավ Մերի Էլլա Բրաունի հետ (1871-1947թթ.): Նրանք չորս երեխա ունեցան՝ Էյթեր Վիոլան (1892-1968թթ.), Փոլ Էլսվորտը (1894-1976թթ.), Ջորջ Վաշինգտոնը (1896-1974թթ.) և Լորա Նատմին (1905-1989թթ.)¹⁰: 1890-ական թվականների կեսերին Թոմաս Քինգը և Մերին վարակվեցին թոբախատով, բայց Տերը բժշկեց նրանց¹¹:

Ամենավաղ հիշատակումը Լեոնարդի ծառայողական կյանքի մասին թվարկվում է 1890թ.-ին, երբ նա համագործակցում էր «Քրիստոնեական միության» հետ (որը փոքր տեղական ավետարանական հարանվանություն էր): Նա նույնպես մասնակցություն ցուցաբերեց, երբ այն միացավ «Քրիստոնեական եկեղեցուն»¹²: 1894թ.-ի ամռանը Հյուսիսային Օհայոյի ամենամյա խորհուրդը նշանակեց նրան Հյուսիսային Օհայոյի Քարտուղարի և Ավետարանիչ պաշտոնին¹³: Վեց տարի անց՝ 1901թ.-ի նոյեմբերի 20-ին, նա ձեռնադրվեց «Օհայոյի Հյուսիսարևմտյան քրիստոնեական համաժողովին» կողմից, որի հավաքույթներն անցնում էին Սփենսերվիլում՝ Օհայոյում¹⁴:

Ծառայողական պատրաստություն ստանալու համար 1892թ.-ին Լեոնարդն ընդունվեց «Ֆինդլի Քոլեջ», որտեղ նա ուսումնասիրեց աստվա-

ծաբանություն և ճարտասանություն երկու տարվա ընթացքում¹⁵: Այդ համալսարանի հրատարակություններից մեկում գրված էր, որ «Վերայ. Թոմաս Քինգ Լեոնարդն» անցկացրեց մի քանի «շատ հաջողակ արթնության հավաքույթներ Հենքոք և Վայննոտ բնակավայրերում» 1894թ.-ի ձմռան ընթացքում¹⁶:

1894-1906թթ.-ի ընթացքում Լեոնարդը հովվել է երեք եկեղեցի «Քրիստոնեական միության» կազմում, որոնք, համաձայն առկա տեղեկությունների, գտնվում էին Դյուվիլիում, ՄակԿոմբում և Հոյտվիլում¹⁷: Իր հովվական պարտականությունների հետ մեկտեղ, նա ժամանակ էր գտնում արթնությունների հավաքույթներ և հոգեհանգիստների ծառայություններ անցկացնելու համար հյուսիս-արևմտյան Օհայոյի ողջ տարածքով մեկ¹⁸:

Իր ծառայության այս շրջանում Լեոնարդն ուներ մի բարգավաճ ազգային, որը մոտ երեք կիլոմետրով հեռու էր ՄակԿոմբից: Այնուամենայնիվ, նա հավատում էր, որ Աստված կանչել էր իրեն սարելու հավատքով: «Թվում էր՝ Հոգին հանգիստ չէր տալիս ինձ», - հիշում էր նա 1912թ.-ին, - «մինչև որ ես ստիպված եղա վաճառել իմ ունեցվածքը և նվիրել ինձ՝ իմ հոգին, անձը և մարմինը, Տեր Հիսուսին ծառայելուն»²⁰: 1906թ.-ի սեպտեմբերին Թոմաս Քինգը վաճառեց իր ազարակը և պատրաստվեց «լիովին վստահել Նրան»²¹:

Տեղափոխություն Ֆինդլի, Օհայո

Լուրերը Սուրբ Հոգու թափման մասին Լոս Անջելեսի Ազուգա փողոցի Առաքելական հավատքի միսիայի շենքում բորբոքեցին մարդկանց քաղցը Հոգեգալստի հանդեպ ողջ երկրով մեկ, ինչպես նաև Օհայոյում: 1906թ.-ի վերջում Ֆինդլիի Քրիստոնեական և Միսիոներական միության շենքում, որը հայտնի էր «Փանուել» անվանումով, արթնության հավաքույթներ սկսվեցին: Վերայ. Քլոդ Ա. ՄակԿինին, ով ավետարանիչ էր Օհայո նահանգի Ակրոնի «Միացյալ Ավետարանի Միսիայից», հոչակեց Հոգեգալստի ուղերձը: Հոգեգալստի գործունեությունն իջավ, և շատերը մկրտվեցին Սուրբ Հոգով և ստացան լեզուներով խոսելու նշանը:

Այդ մարդկանց թվում էր նաև Թ. Ք. Լեոնարդը²²:

Որոշ ժամանակվա ընթացքում Լեոնարդը մտածում էր միսիոներական աշխատանք սկսելու մասին Ֆինդլիում՝ Հանքոք Քանթրիի ամենամեծ քաղաքում, որի բնակչությունը 1900թ.-ին գերազանցում էր 17.600-ը²³: Նա ավետարանչական վրանային հավաքություն էր անցկացրել այդտեղ, և նրա գործընկերներից մի քանիսը խոստացել էին ֆինանսապես աջակցել նրան այդ գործում²⁴: 1907թ.-ի հունվարին նրանք գնման պայմանագիր կնքեցին «Օփ» հյուրանոցի համար, որը գտնվում էր Իսթ Սենդասկի փողոց, 406 հասցեով²⁵: Նրանք գնեցին այս 20.000 դոլար արժողությամբ գինետունը և հյուրանոցը, որը նաև օգտագործվում էր որպես հասարակաց տուն, 5.000 դոլարով, և ծրագրեցին անմիջապես վերանորոգում սկսել՝ կրոնական ծառայություններ անցկացնելու նպատակով²⁶: Այս շենքում պետք է լինեին եկեղեցի, որը կոչվելու էր «Առաքելական տաճար», Աստվածաշնչյան դպրոց և Միսիոներների կրթական տուն, որը կոչվելու էր

Լեոնարդը որոշել էր, որ իր հիմնադրման պահից ի վեր եկեղեցին ծառայելու էր բոլոր ռասաներին և հասարակական խավերին պատկանող մարդկանց:

հատկացնեին Սուրբ Հոգու աշխատանքին: Նրա համախոհներից շատերը, այնուամենայնիվ, համաձայն չէին այդպիսի շեշտադրման հետ, և նրանք արագորեն լքեցին նախագիծը՝ թողնելով Լեոնարդին և Օուեն Յուզին ՄակԿլիրիին (1870-1932թթ.) նրա ծառայողական գործընկերներից մեկին «Քրիստոնեական միությունից», թե՛ շենքի, թե՛ դրա պարտքի հետ²⁸: Հետագայում Աննա Ռեյֆը Չիկագոյից տեղեկացնում էր, որ Լեոնարդը «թողնված էր առանց որևէ երկրային աջակցության կամ օգնության, բայց

«Առաքելական տաճարում» 1907թ.-ի մարտից: Հաջորդ ամիս «Առաքելական տաճարը» 30 օր տևող արթնության հավաքությունների համահովանավոր դարձավ: Հավաքությունները տեղի էին ունենում «Փանուել» միսիայի շենքում, և հյուր քարոզիչը վերապ. Ք. Ա. ՄակԿիննին էր: Ավելի, քան քառասուն մարդ ընդունեցին մկրտությունը Սուրբ Հոգով, երեսուն մարդ վկայեցին, որ բժշկվել էին, և տասներեք հոգի մկրտվեցին ջրով Լեոնարդի եկեղեցական շենքում³⁰: Մինչև այդ ամառվա վերջը, Լեոնարդը գովազդում էր իր եկեղեցու գործունեությունը տեղական թերթում³¹: Երկու տարի անց նա անվանեց իր աճող համայնքը «Աստծո ժողով»³²:

Այս համայնքի առանձնահատկություններից մեկը միջոցառական կազմն էր և հոգատարությունն աղքատ ու ճնշված մարդկանց հանդեպ: Լեոնարդը որոշել էր, որ իր հիմնադրման պահից ի վեր եկեղեցին ծառայելու էր բոլոր ռասաներին և հասարակական խավերին պատկանող մարդկանց: Նա ասաց. «Վերջապես ես Միսիա սկսեցի Ֆինդլիում, և իրավիճակի աղքատներին, սևամորթներին և սպիտակամորթներին, բոլոր մաշկի գույն ունեցողներին և բոլոր հասարակական խավերի ներկայացուցիչներին, և այն խեղճերից մի քանիսը, ովքեր հարբում էին նույն այս շենքի նախկին բարում (որովհետև նախկինում այն գինետուն էր), հիմա գալիս են խորանի մոտ աղոթելու. նրանց սրտերը փոխվել են, և նրանցից շատերը մկրտվել են Սուրբ Հոգով»³³: Աստված օգտագործեց մի քանի սևամորթ ամերիկացի անդամների, որոնց թվում էր մի նախկին ստրկուհի, ով հայտնի էր «Մորաքույր Կլարա» անունով, և «Եղբայր Գալլիֆորդ» անունով մի վարսավոր կոտրելու համար ռասայական կարծրատիպերը և խթանելու համար միջոցառական ներդաշնակության ճշմարիտ հոգին³⁴:

Որպես եկեղեցու ավետարանչական ծրագրի մաս՝ մշակվեց աղքատներին կերակրելու ծրագիր Մերի Լեոնարդի ղեկավարությամբ: Նա «խոհարարը, տնտեսավարուհին և գլխավոր շշեր վաճառողն էր»³⁵: Թոմաս Քինգը վկայում էր, որ մինչև 1921 թվականը «Մենք անվճար բաժանել էինք ավելի, քան 100.000 բաժին կերակուր աղքատներին և քարոզիչներին և մեզ հանդիպող մարդկանց, փառք Աստծուն»³⁶:

Ավետարանական դպրոցը
Մինչև 1907 թվականի սեպտեմբերը, Լեոնարդը բացեց «Առաքելական դպրոցը», որն առաջարկում էր «Հոգեգալստի գործությունը, Աստվածաշնչի ուսումնասիրություն և միսիոներական կրթություն»³⁷: Նա տեսնում էր այնպի-



«Օփ» գինետունը. լուսանկարը նախքան 1907թ.-ն է, երբ Լեոնարդը գնեց այն: Առաջին հարկում գինետունն էր, իսկ երկրորդ հարկում՝ 22 հյուրանոցային սենյակ (գրամադրել է Փ. Դազլաս Չեփմենը):

«Առաքելական դպրոց», ինչպես նաև տպագրատուն, որը կարճ ժամանակ անց հայտնի էր լինելու որպես «Ավետարան» հրատարակչություն²⁷:

Համոզված լինելով, որ Ֆինդլիում անհրաժեշտ է շարունակական հոգեգալստական աշխատանք իրականացնել Լեոնարդը որոշում կայացրեց, որ «Առաքելական տաճարը» և Աստվածաշնչյան դպրոցը պետք է մեծ տեղ

Աստված երբեք չթողեց նրան, և կարողություն տվեց շարունակելու Աստվածաշնչյան դպրոցը, օգնեց նրան մարել ծանր պարտավորությունները և հոգաց նրա ամենօրյա կարիքները»²⁹:

Աստծո ժողովը
Լեոնարդը և ՄակԿլիրիին սկսեցին շաբաթական ծառայություններ վարել



Ավետարանի միջազգային եկեղեցու» հետ ձուլվելու ծախողված փորձից հետո⁴⁹:

Հոգեգալստական համաժողովներ

Ֆինդլիում սկիզբ առավ մեկ այլ բնույթի հոգեգալստական ծառայություն առաջին ուսումնական տարվա ընթացքում, երբ հայտարարվեց, որ 1907թ.-ի սեպտեմբերի 4-ից մինչև 15-ը «Առաքելական դպրոցում» հոգեգալստական հավաքություններ» էին անցկացվելու⁵⁰: Այդ հավաքություններն ակնհայտ հաջողություն ունեցան, և եկեղեցին սկսեց պարբերաբար նման հատուկ միջոցառումներ կազմակերպել: Հաջորդ 30 տարվա ընթացքում Լեոնարդն իր եկեղեցական համայնքի հետ հովանավորեց հարյուրից ավելի հոգեգալստական ճամբարային հավաքություններ, արթնության հավաքություններ և համաժողովներ⁵¹: Տարին չորս անգամ նշանավոր հովիվներ, ավետարանիչներ և միսիոներներ ողջ Ամերիկայից ուղևորվում էին Ֆինդլի, որպեսզի քարոզեին, աղոթեին, և ծառայեին ողջ Օհայոյից, Ինդիանայից և Միչիգանից հավաքված մարդկանց:

«Առաքելական դպրոցը»՝ մոտ 1907-1909թթ.-ին, մինչև որ դրա անվանումը փոխվեց «Առաքելական ավետարանական դպրոցի»: «Առաքելական դպրոցի» ձախ կողմի շենքում գտնվում էր Ավետարանական դպրոցի հանդեսի գրասենյակը և տպագրատունը: Սա «Ավետարան» հրատարակչության առաջին շինությունն է (տրամադրել է Փ. Դազլաս Չեփմենը):

սի դպրոց, որը նման չէր իր ժամանակվա Աստվածաշնչյան և միսիոներական կրթական հաստատություններին: «Կրթության պակասը չէ պատճառը, որ այսօրվա եկեղեցին այս աստիճան անգոր է, այլ Աստծուն և Սուրբ Հոգու զորությունը ճանաչելու պակասը... Աստված կամենում է, որ մենք մասնագիտություն դարձնենք Հոգևորը... Աստծո ներքո, մենք առաջարկում ենք տալ Սուրբ Հոգուն Իր տեղն այս Դպրոցում»³⁶: Ուսումնական դասընթացն ընդգրկում էր Հին և Նոր Կտակարանների մեկնություն, Աստվածաշնչի թեմատիկ և հաջորդական ուսումնասիրություն, ընտրված աստվածաշնչյան ուսուցումներ, անգլերեն լեզու, գործիքային և վոկալ երաժշտություն, քարոզաբանություն, եկեղեցու պատմություն և Աստվածաշնչյան աշխարհագրություն³⁹: Բացի երկամյա ծրագրից, առաջարկվում էր Աստվածաշնչի ուսուցման տնային ծրագիր, որը կարելի էր ավարտել մեկ տարում⁴⁰:

1909թ.-ին դպրոցն անվանափոխվեց «Առաքելական ավետարանական դպրոցի»: Երկու տարի անց անվանումը կրկին փոխվեց՝ «Ավետարանական դպրոցի», որը պահպանվեց հաջորդ քսան տարիների ընթացքում⁴¹: Գլխավոր խորհուրդը հավանություն տվեց «Ավետարանական դպրոցին» 1914թ.-ին՝ խրախուսելով «այն մարդկանց այդ տարածքում, ովքեր ցանկանում են աստվածաշնչյան ուսուցում ստանալ, դիմել այդտեղ»⁴²:

«Ավետարանական դպրոցը» ձուլվեց Չիկագոյում գտնվող «Թաբոր սարի Աստվածաշնչի ուսուցման դպրոցի» հետ 1917թ.-ի աշնանը, և Թ. Ք. Լեո-

նարդը իր անձնակազմի մի մասի հետ տեղափոխվեց Իլինոյս՝ այդ դպրոցում ծառայելու համար⁴³: Անհայտ պատճառներով, այս համաձայնությունը տևեց ընդամենը մեկ տարի. Լեոնարդը վերադարձավ Ֆինդլի, և «Ավետարանական դպրոցը» վերսկսեց իր գործունեությունը 1921թ.-ի հոկտեմբերին⁴⁴: Հասկանալով, որ դպրոցն ավելի մեծ շենքի կարիք ուներ՝ Լեոնարդը ծրագրում էր ձեռք բերել Հենքոք Քանթրիի նախկին մանկատան շենքը: Այն գտնվում էր Վեսթ Փարքում՝ Բիլսս պողոտայի և Մորիկալ բուկարի հարավ-արևելյան անկյունում, ինչը մոտավորապես երեք կիլոմետրով հեռու էր եկեղեցու շենքից: Վեսթ Փարքի շենքը, որը կառուցվել էր 50.000 դոլարով, կտեղավորեր դպրոցը, կտրամադրեր մեծ տարածք ամառային ճամբարային հավաքությունների համար՝ մեծ վրանի տակ, և կծառայեր որպես եկեղեցու միսիոներական կենտրոն⁴⁵:

Թեև այս «Ավետարանական դպրոցի» մասին տեղեկություններ չեն գտնվել, հնարավոր է ի մի բերել որոշ տեղեկություններ ուսանողների թվի մասին: Ալթեա ՄակԿլիրի Էրլար՝ Օ. Է. ՄակԿլիրիի դուստրը, ով եղել է դպրոցի տնօրենը գրեթե ողջ 1920-ական թվականների ընթացքում, հիշում էր, որ ուսանողների թիվը «մոտ 35-40 էր, իսկ երբեմն՝ ավելի»⁴⁶: 1921թ.-ին սովորում էր 29 ուսանող⁴⁷: Տասնմեկ ուսանող ավարտեց 1924թ.-ին, և ինը՝ 1927թ.-ին⁴⁸:

«Ավետարանական դպրոցը» շարունակեց Աստվածաշնչյան և միսիոներական ուսուցումներ անցկացնել մինչև 1930թ.-ը: Համաձայն մեզ հայտնի տեղեկությունների՝ այն դադարեցրեց իր գործունեությունը «Քառակողմ

Լեոնարդի հետ ծառայող քարոզիչների թվում էին Վիլյամ Հ. Դարհեմը՝ «Հյուսիսային Պողոտայի Միսիա» եկեղեցու հովիվը Չիկագոյում⁵², Էյմի Սեմփլ ՄակՖերսոնը՝ «Քառակողմ Ավետարանի միջազգային եկեղեցու» ապագա հիմնադիրը⁵³, Ֆ. Է. Իյոկամը՝ բժշկող ավետարանիչ Լոս Անջելեսից⁵⁴, Ռոբերտ Է. ՄակԱլիսթերը՝ «Կանադայի Հոգեգալստական ժողովների» ապագա առաջնորդը⁵⁵, Ջեյմս Հեբդենը՝ «Իսթ-Էնդ Միսիա» եկեղեցու հովիվը Տորոնտոյում, որն առաջին հոգեգալստական համայնքն էր Կանադայում⁵⁶, Թիմոթի Արշենը՝ միսիոներ Երուսաղեմում⁵⁷, Յ. Ն. Բեյլը՝ Աժ Գլխավոր խորհրդի առաջին նախագահը⁵⁸, Դ. Ու. Կերրը՝ վաղ շրջանի հոգեգալստական ուսուցիչ⁵⁹, Է. Հ. Արգյուի Ավետարանական թիմը⁶⁰, Կ. Ա. ՄակԿինին, ով առաջիններից մեկն էր ընդունել մկրտությունը Սուրբ Հոգու Օհայոյում⁶¹, Ջ. Է. Վիլկերսոնը՝ «Կոչ դեռահասներին» ծառայության հիմնադիր Դեյվիդ Վիլկերսոնի հայրը⁶², և Դ. Ու. Մայլենդը՝ առաջին հոգեգալստական աստվածաբաններից մեկը, Ա. Փ. Քոլինսը⁶⁴ և Է. Ն. Ռիչին⁶⁵:

Այս արթնության ծառայությունների հայտարարությունները, որպես կանոն, մոտավորապես այսպիսի բովանդակություն ունեին. «Բոլոր հոգեգալստական ավետարանիչները, հովիվները և գործիչները սրտանց հրավիրվում են մասնակցել և ազատ լինել Հոգու մեջ՝ Տիրոջ գործին օգնելու համար: Մասնակիցները հրավիրվում էին «Եկ, շտապիր, ընդունիր խոստումը» խոսքերով⁶⁶: Կան տեղեկությո-

յուններ այն մասին, որ հազարավոր մարդիկ էին հավաքվում այդ ծառայություններին⁶⁷:

Մեկ այլ ակնառու ծառայություն, որը հիմնադրեց Լեոնարդը, հրատարակական գործը և գրականության տարածումն էր: Սկսելով 1901թ.-ից՝ նա հրատարակեց մի թերթ, որը կոչվում էր «Քրիստոնեական միաբանության ազդարար»: Ֆինդլի տեղափոխվելիս դրա անվանումը փոխվեց «Առաքելական ազդարարի», և մինչև 1909թ.-ը՝ «Քրիստոնեական ավելարանական ազդարարի»: Այն վերջին անգամ փոխեց իր անվանումը 1912թ.-ին՝ դառնալով «Ավետարանական դպրոցի հանդես»⁶⁸: Թ. Բ.-ն միավորեց իր թերթը «Խոսք և Վկայություն» թերթի հետ 1914թ.-ին⁶⁹: Այնուամենայնիվ, Լեոնարդը վերականգնեց «Ավելարանական դպրոցի հանդեսի» հրատարակությունը 1915թ.-ին՝ 1.000 օրինակով⁷⁰: Այս թերթն ընդմիջումներով լույս տեսավ մինչև 1927թ.-ը⁷¹:

Գլխավոր խորհուրդը

Թ. Բ. Լեոնարդի առաջնորդությունը շատ ավելի գերազանցում իր տեղական եկեղեցու շրջանակները: Առաջին Գլխավոր խորհրդից հետո ավելի, քան տասնհինգ տարվա ընթացքում նա ահռելի ներդրում ունեցավ «Աստծո ժողովների» մեջ, թե՛ ազգային, թե՛ շրջանային մակարդակի վրա: Նա ծառայեց որպես Գլխավոր խորհրդի գործադիր երեց 1914-1915թթ.-ին, և որպես Գլխավոր խորհրդի անդամ՝ 1914-1921 և 1923-1929թթ.-ին⁷²:

Գլխավոր խորհրդի կոմիտեի անդամ

Որպես Գլխավոր երիցական կազմի անդամ՝ Լեոնարդը ծառայեց Գլխավոր խորհրդի մի քանի կոմիտեներում. համաժողովների կոմիտեում՝ 1914թ.-ին, օրենսդիր կոմիտեում՝ 1916թ.-ին, և նշանակման կոմիտեում՝ 1917 և 1923թթ.-ին⁷³: Միգուցե նրա ամենանշանակալից ներդրումը Երիցական կազմում 1916 թ.-ին էր, երբ նա ծառայեց Հիմնարար ճշմարտությունների դավանանքը կազմող կոմիտեում⁷⁴:

Չբաղեցնելով գործադիր երեցի պաշտոնը՝ Լեոնարդը համակարգեց ծառայողական հավատարմագրերի տրամադրումը «Աստծո ժողովների» անունով երկրի հյուսիսային և արևելյան հատվածներում ապրող բոլոր ծառայողների համար⁷⁵:

Գլխավոր խորհրդի խոսնակ

Մի քանի Գլխավոր խորհուրդների ժամանակ ազգային առաջնորդները հենվում էին Թոմաս Քինգի իմաստությանը, առաջնորդությունը և պարզաբանումներին Աստվածաշնչյան կարևորություն ունեցող հարցերում: 1914թ.-ին նա մասնակցեց ընդհանուր

THE GOSPEL SCHOOL REVIEW

Published Monthly
Vol. 15

by The Gospel School,
Findlay, Ohio, U. S. A. May, 1922

12 issues for 25 cents.
Special Number.



OUR NEW BUILDING.

This valuable building, (the Orphans Home) cost the city and county over fifty thousand dollars and has been put in good repair and is most suitable for school purposes. We purchased the same over a year ago and lodged our school of about 30 students, teachers, etc. for seven months of successful school. The next term will open October 2, 1922 to continue until in May, 1923.

Send for THE GOSPEL SCHOOL REVIEW "Special School Information Number" and Application Blank which will be sent promptly.

We are showing above a picture of our new building. With it there is a large new barn and twenty lots. Ten surround the building affording ample room for Garden, Vineyard and Lawn where we pitched our tents for Camp-meeting. The other ten lots are in alfalfa.

The main part of the Building is 100x60 feet. It has its own Water System, supplied from an excellent well. Has Steam Heating Plant, Electric Lights, Baths and Toilets. The rooms are all to the outside and are well lighted and ventilated, and will afford accommodations to fifty students when fully equipped. Hence,

to furnish it with the necessary furniture, beds, mattresses, range, etc., besides laying in a supply of coal we are calling upon the friends of the work for any help the Lord suggests.

WANTED, WANTED.
As a means to systematically provide a fund, and give all an opportunity to have a part in this work, the Directors decided on a plan to secure 500 "Helping Hands" to pledge One Dollar each per month for One Year. This will enable them to set things in order and have all in readiness in due season for the next term of School, which begins October 2nd

Here is an opportunity for you to come to the help of the Lord. Write us at once that you will be one of the 500 "Helping Hands." If you think you can only do half this amount, get some one to assume the other half, and combine forces.

The following Board of Directors in conjunction with the Central District Council Co-operative and Advisory Committee will carefully guard the interest and finances of the School.
Eld. T. K. Leonard, 404 East Sandusky St., Findlay, Ohio, Chairman.
B. F. Fry, East Sandusky St., Findlay, Ohio, Treasurer.
B. F. Davis, Findlay, O.

Eld. R. W. Hudson, Toledo, Ohio.
Eld. C. A. McKinney, Cuyahoga Falls, Ohio.

COUNCIL COMMITTEE
J. N. Gortner, Cleveland, Ohio
J. R. Kline, Detroit, Mich.
E. L. Banta, Mattoon, Ill.

We have printed Pledge Cards which will enable us to systematize our accounts, which we will furnish to those wishing to help us. Also we will much appreciate the co-operation of pastors and friends of the School, and will gladly furnish pledge cards to those desiring them to secure pledges.

We need Quilts, Comforts, Pillows, etc., to furnish the beds in the School. Please send your donation plainly marked that we may acknowledge same.

Send all pledges and money to
T. K. LEONARD, Findlay, Ohio.

ROOM IN OUR BARN.

We have room in our barn for four good milk cows. Have you more cows than room and feed? The Lord hath need of it. Bring it and tie it to our manger. Also there is room in our hay loft for several more loads of feed, don't stack it out, put it under our roof.

Թոմաս Քինգ Լեոնարդի «Ավետարանական դպրոցի հանդեսի» առաջին էջը՝ «Ավետարանական դպրոցի» շենքի լուսանկարով Վեսթ Փարքում, մայիս, 1922թ.:

նիստի, որտեղ քննարկվում էր եկեղեցու բնությունը⁷⁶: Երկու տարի անց, նա խոսեց ավետարանչության թեմայի մասին⁷⁷: 1918թ.-ին նա խոսեց Սուրբ Հոգով մկրտվելու կարևորության մասին, և դրան ուղեկցող սկզբնական ֆիզիկական նշանի, որը այլ լեզուներով խոսելն է⁷⁸: 1925թ.-ին նա «մի տպավորիչ ուղերձ քարոզեց աղոթքի մասին»⁷⁹:

Խոսնակ Հյուսիսային Ամերիկայում

Թոմաս Բ. Լեոնարդը մշտապես քարոզում էր Հիսուս Քրիստոսի Ավետարանը և հոգեգալստական ուղերձը: Նա կտրում-անցնում էր ողջ երկիրը՝ Նյու Յորքից Կալիֆորնիա և Կանադայից Տեխաս, որպեսզի քարոզեր շրջանային խորհուրդներին, վրանային հավաքույթներին և տեղեկան

եկեղեցիների արթնության ծառայություններին: 1914-1929թթ.-ի ընթացքում նա քարոզեց տասնհինգ նահանգներում և ծառայեց իր ժամանակվա ամենաազդեցիկ հոգեգալստական եկեղեցիներից մի քանիսում, որոնց թվում էին «Քար» եկեղեցին Չիկագոյում, որի հովիվը Ռ. Լ. Էրիկսոնն էր, «Առաքելական հավատքի ժողովը» Ինդիանայի իստում, որի հովիվը Գ. Թ. Շելվուդն էր, «Բարի Լուր ժողովը» Նյու Յորք Սիթիում, որը հովվում էին Ռոբերտ և Մերի Բրաունները, և «Հրեշտակալի տաճար» եկեղեցին, որի հովիվն էլ մի Սենվիլ ՄակՖերսոնն էր⁸⁰: Նրա քարոզներն ընդունվում էին մեծ խանդավառությամբ, շնորհակալությամբ և գնահատանքով: «Մենք հրաշալի ճամբարային հավաքույթ անցկացրինք Թոփեթայում (Կանզասում)», - գրում

էր Ս. Է. Ֆոսթերը 1914թ.-ին: - «Աստված օգտագործեց եղբայր Թ. Ք. Լեոնարդին՝ տալով մեզ այն ուսմունքը, որի կարիքը մենք շատ ունեինք, և, անկասկած, սրբերը վայելեցին դա... Մենք հավատում ենք, որ դա լավագույն ճամբարային հավաքույթն էր, որը մենք երբևէ անցկացրել էինք այստեղ...»⁸¹: Օհայոյի հովիվներից մեկը նշեց. «Ես երբեք չէի լսել, թե ինչպես էր եղբայր Թ. Ք. Լեոնարդը քարոզում այսպիսի օծության ներքո. նրա բառերը հավում էին մարդկանց սրտերին»⁸²: Փենսիլվանիայի թերթերից մեկը նկարագրեց նրան որպես «հիստ և հնաճոհ հավատքի քարոզիչ, ով զորավոր ուղերձներ է ներկայացնում ամեն ծառայությանը»⁸³:

Կենտրոնական Շրջանի խորհուրդ

Հոթ Սփրինգսի 1914թ.-ի հավաքույթից երեք ամիս անց Լեոնարդը հայտարարեց, որ ցանկանում էր «հիմնադրել մի Շրջան կամ Միջնահանգային խորհուրդ, որը պետք է համագործակցեր «Աստծո ժողովների» հետ ԱՄՆ-ում, Կանադայում և օտար երկրներում»: Նա հրավիրեց բոլոր «հոգեգալստական ծառայողներին Օհայոյից, Ինդիանայից և Միչիգանից» ժամանել Ֆինդլի հուլիսի 12-ից 14-ը՝ «խորհելու գործունեության լավագույն աստվածային միջոցների մասին Հոգեգալստական շարժման մեջ»⁸⁴: Օհայոյի և Միչիգանի պատվիրակները ներկայացան, և կազմեցին «Միջնահանգային հոգեգալստական կոնվենցիա՝ ընտրելով Լեոնարդին որպես նախագահ: 1915-1917թթ.-ի ընթացքում Ֆինդլիում անցկացվեց Միջնահանգային խորհրդի առնվազն չորս հավելյալ հանդիպում»⁸⁵:

Միևնույն ժամանակ, 1917թ.-ի նոյեմբերին Միչիգան նահանգի ծառայողները հանդիպեցին Դետրոյտում, որպեսզի ստեղծեն «Աստծո ժողովների» Կենտրոնական շրջանը⁸⁶: 1920թ.-ի հոկտեմբերին հինգ նահանգներից ժամանած պատվիրակները հանդիպեցին Քլիվլենդում՝ Օհայոյում, որպեսզի վերակազմավորեն Կենտրոնական շրջանի խորհուրդը և ընդգրկեն «Միչիգանը, Օհայոն և Ինդիանան, և Իլինոյսի և Կենտակիի այն հատվածները, որոնք ընդգրկված չեն որևէ Շրջանային խորհրդում»⁸⁷: Այդ խորհրդին Թոմաս Ք. Լեոնարդն ընտրվեց որպես յոթ շրջանների երեցներից մեկը: Նա զբաղեցրեց այս դիրքը հաջորդ ինը տարուց վեց ընթացքում: Դրա հետ մեկտեղ, նա ընտրվեց նշանակման կոմիտեի մեջ, և մնաց այդ պաշտոնում հաջորդ յոթ տարվա ընթացքում⁸⁸:

1922-1927թթ.-ին Լեոնարդը հասավ իր առաջնորդության գագաթնակետին Կենտրոնական շրջանում: Նրա եկեղեցին հյուրընկալեց Կենտրոնական շրջանի խորհրդի հավաքույթները 1922

և 1925թթ.-ին⁸⁹: Նա ծառայեց Կենտրոնական շրջանում որպես նախագահի օգնական 1924-1925թթ.-ին, նահագահեց 1925 թվականի Շրջանային խորհուրդը և ընտրվեց որպես նախագահի օգնական 1926-1927թթ.-ին⁹⁰:

1920-ական թվականների ընթացքում «Ավետարանական դպրոցի» կարգավիճակը և կապը Կենտրոնական շրջանի հետ հաճախ էր քննարկվում շրջանային խորհրդի հավաքույթներին: Ընդունվեցին մի քանի բանաձևեր, որոնք առաջարկեցին, որ Կենտրոնական շրջանի խորհուր-

րանքի զգացում, որը եղբայր Լեոնարդը կարող էր ունենալ այդ որոշման պատճառով, խորհուրդը վստահության քվե տվեց նրան⁹³:

Երկու տարի անց Կենտրոնական շրջանի խորհուրդը ճանաչեց «Ավետարանական դպրոցը» որպես շրջանի հետ համագործակցող հաստատություն, որի ուսումնական ծրագիրը համապատասխանում էր Աստծո ժողովների հիմնարար ուսմունքներին, և որ հովիվները և ավետարանիչները պետք է խրախուսեին երիտասարդներին հաճախել այդ դպրոցը: Դրա



Ուսանողները և ուսուցիչներն «Ավետարանական դպրոցի» առջևի մասում, մոտավորապես 1922թ.-ին: Հայտնի են հետևյալ մարդիկ. Մերի և Թ. Ք. Լեոնարդը (ետևի շարքի մեջտեղում), Օ. Է. ՄակԿլիրին (կանգնած առջևում, վերջինը աջից), Ալեքսանդր Բենջամինը (կանգնած ՄակԿլիրիից ձախ), Ալթեա ՄակԿլիրին (նստած առջևի շարքում, 2-րդն աջից), Տկն. Ալթա ՄակԿլիրին (նստած 2-րդ շարքում, 2-րդն աջից), Ռոբերտ Բենջամինը (ետևի շարքում, 4-րդն աջից):

դը համագործակցեր դպրոցի հետ և տնօրինել այն⁹¹: 1926թ.-ի խորհրդի ժամանակ Լեոնարդը գեկուցեց, որ «Ավետարանական դպրոցը» «հիմնականում ֆինանսավորվել է Ֆինդլիի տեղական համայնքի կողմից», և խնդրեց շրջանին թե բարոյապես, թե ֆինանսապես աջակցել դպրոցին⁹²: Դրանից հետո նա առաջարկեց վաճառել «Ավետարանական դպրոցը», դրա շենքը և գույքը Կենտրոնական շրջանի խորհրդին 6.000 դոլարով, և որ նա անձամբ կնախաձեռներ առաջին 2.000 դոլարի հանգանակությունը: Այս առաջարկին աշխույժ քննարկում հետևեց: Սկզբում խորհուրդը կողմ քվեարկեց, իսկ հետո փոխեց իր դիրքորոշումը՝ դեմ քվեարկելով: Միգուցե փորձելով մեղմել ցանկացած վիրավոր-

անք մեկտեղ, այն առաջարկեց, որ գործադիր երեցները համագործակցեն «Ավետարանական դպրոցի» տնօրինության հետ «որպես խորհրդականներ»: Այնուամենայնիվ, դրան չհետևեց ոչ մի ֆինանսական աջակցություն⁹⁴: Այնպիսի տպավորություն էր, որ Լեոնարդը հիասթափվել էր «Ավետարանական դպրոցի» ֆինանսական աջակցության բացակայության պատճառով: Նա գրեց 1927 թվականին. «նույնիսկ հովիվներն են երբեմն հանցավոր կերպով անտարբեր» դպրոցի կարիքներին, բայց և ավելացրեց. «մենք կսպասենք այն օրվան, երբ ժողովների աջակցությունը կլուծի այս խնդիրը»⁹⁵:

Այդ ընթացքում, երկու շրջանային հովիվներ առաջարկեցին ստեղծել

նոր Աստվածաշնչյան ուսումնական հաստատություն, որը կպատկաներ Կենտրոնական շրջանի խորհրդին և կղեկավարվեր վերջինիս կողմից: Այս ուսումնական հաստատությունը լինելու էր «Ընկերության կազմում պատշաճ կերպով ընդգրկված Աստվածաշնչյան ինստիտուտ՝ Խորհրդի աջակցությունը և վավերացումն ունեցող հավատարմագրված դասախոսական կազմով»⁹⁶: Նրանց առաջարկը ներկայացվեց Կենտրոնական շրջանի գործադիր երիցական կազմին 1928թ.-ի հուլիսի 24-ին, որը և լիազորեց «Փառուել» Աստվածաշնչյան ինստիտուտի ստեղծումը Դեյտոնում՝ Օհայոյում⁹⁷: Այդ հաստատությունը բացվեց Օ. Է. ՄակԿլիրիի ղեկավարությամբ 1928թ.-ի հոկտեմբերի 18-ին, 27 ուսանողով⁹⁸: 1929 թվականի Շրջանային խորհրդի պատվիրակները հասատեցին այս որոշումը և հանգանակեցին 1.078 դոլար և 29 սենթ՝ կանխիկով և խոստումներով, նոր ուսումնական հաստատության համար⁹⁹: Այս դպրոցը երկար չգոյատևեց Մեծ Դեպրեսիայի պատճառով, և փակվեց 1933թ.-ին: 1933թ.-ին կայացած Կենտրոնական շրջանի խորհուրդը խրախուսեց սեփական շրջանի ուսանողներին հաճախել Կենտրոնական Աստվածաշնչյան ինստիտուտ¹⁰⁰:

Մինչ այս իրադարձությունները ծավալվում էին, հովիվ Լեոնարդն ուղևորվեց Կալիֆորնիա 1928թ.-ի սեպտեմբերին՝ ընտանեկան արձակուրդի համար: Այդտեղ լինելու ընթացքում նա համաձայնություն կնքեց իր դպրոցի գնման վերաբերյալ Լոս Անջելեսում գտնվող Էյմի Սեմփլ ՄակՖերսոնի «ԿՅԱՆՔ Աստվածաշնչյան դպրոցի» հետ¹⁰¹: Օհայո վերադառնալուն պես, Լեոնարդը հանդիպեց Կենտրոնական շրջանի գլխավոր երիցական կազմի մյուս անդամների հետ՝ քննարկելու համար «նրա դիրքորոշումը Դեյտոնի Աստվածաշնչյան համալսարանի, «Քառակողմ» շարժման և Գլխավոր ու Շրջանային խորհուրդների վերաբերյալ»¹⁰²: Երկու ամիս անց նա վերադարձավ Հարավային Կալիֆորնիա, որտեղ հայտարարեց Հրեշտակային տաճարում. «...մենք և «Ավետարանական դպրոցը» լիովին միավորվել ենք «Միջազգային քառակողմ փարոսների» հետ»¹⁰³: Լեոնարդը հրաժարվեց իր պաշտոնից «Աստծո ժողովներում» 1929թ.-ի հունվարի 28-ին¹⁰⁴:

Թվում էր՝ «Քառակողմ Ավետարանի միջազգային եկեղեցին» ստանձնեց վերանվանված «Քառակողմ Ավետարանական դպրոցի» ղեկավարումը 1929թ.-ի փետրվարին, երբ Ֆինդլի ուղարկվեց մի քանի անձանցից բաղկացած թիմ՝ դպրոցի ամենօրյա գործունեությունը վերահսկելու համար¹⁰⁵: Այնուամենայնիվ, մեզ անհայտ պատ-

ճառներով միությունը Լեոնարդի «Ավետարանական դպրոցի» և «Քառակողմ» ծառայության միջև տևական չեղավ: Երբ «Ավետարանական դպրոցը» բացվեց 1929թ.-ի աշնանը, այդտեղ չկար որևէ ներկայացուցչություն «Քառակողմ եկեղեցուց»¹⁰⁶:

Վերջին տարիները

1929-1938թթ.-ին Թ. Ք. Լեոնարդը շարունակում էր հովվել իր եկեղեցին Ֆինդլիում՝ «Աստծո ժողովների» Գլխավոր խորհրդից առանձին: Եկեղեցին շարունակում էր իր կիրակնօր-



Թ. Ք. Լեոնարդը՝ թոշակի անցած (պրամադրել է Պոլեպ Ջիրինգը):

յա ծառայությունների սովորական ընթացքը. Կիրակնօրյա դպրոցը ժամը 9:30-ին էր, ծառայությունները ժամը 10:30-ին և 19:30-ին, իսկ Երիտասարդական ծառայությունը՝ ժամը 6:30-ին: Աղոթքի հավաքույթներն անցկացվում էին երեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 19:30-ին¹⁰⁷: Կիրակնօրյա դպրոցը և կիրակնօրյա ծառայություններն անցկացվում էին «Ավետարանական դպրոցի» շենքում՝ Վեսթ Փարքում, որը քաղաքի ծայրամասն էր, առնվազն մինչև 1938թ.-ը¹⁰⁸: Ուշադրությամբ վերանայելով Ֆինդլիի թերթերը Լեոնարդի ծառայության ցանկացած տարում՝ կարող ենք տեսնել, որ նա սովորաբար տարեկան մի քանի տասնյակ թաղման արարողություններ է անցկացրել ողջ տարածքում:

Ողջ 1930-ական թվականների ընթացքում եկեղեցին անցկացնում էր

եռամսյակը մեկ տեղի ունեցող «Հոգեգալստական համաժողովի և միության» արթնության հավաքույթները, որոնք շատ արդյունավետ էին մարդկանց Հիսուս Քրիստոսի փրկարար գիտությանը բերելու մեջ¹⁰⁹: Համաժողովներից մեկի ընթացքում արթնության հավաքույթները շարունակվեցին վեց շաբաթ՝ 1932թ.-ի փետրվար և մարտ ամիսներին. ամեն երեկո եկեղեցին լեկ-լեցուն էր մարդկանցով, և 102 մարդ մկրտվեց ջրով¹¹⁰:

Հովիվ Լեոնարդի ազդեցությունն իր բնակավայրում շատ ավելի լայն էր իր եկեղեցու շրջանակներից¹¹¹: Նա օգնում էր տեղական դատավորին՝ խորհրդատվություն տալով այն զույգերին, որոնք ամուսնալուծության դիմում էին ներկայացնում դատարան: Տեղական շերիֆը եկեղեցի էր բերում բանտարկյալներին քաղաքային բանտից, որտեղ նրանք ընդունում էին Քրիստոսին և մկրտվում էին¹¹²: Լեոնարդը կրոնական ծառայություններ էր անցկացնում «Շրջակա միջավայրի պահպանման քաղաքացիական կորպուսում», օգնում էր Հենքոք Քանթրիի Ձինվորների, նավաստիների և պիոներների միության ամենամյա զբոսախնջույքի միջոցառման անցկացմանը, և 1933թ.-ին դարձավ ԱՄՆ-ի Սահմանադրությանը նվիրված կրոնական և հայրենասիրական հանրահավաքի նախագահը¹¹³: 1935- 1939թ.-ին նա «Թաունսենդ ակումբի» ակտիվ անդամ էր: Այս 5 միլիոն «տարեց մարդկանցից» բաղկացած ազգային կազմակերպությունը պահանջում էր կառավարությունից 200 ԱՄՆ դոլարի չափ թոշակ տրամադրել 60-ն անց բոլոր մարդկանց¹¹⁴:

Թեև այս շրջանում Լեոնարդը պաշտոնապես «Աստծո ժողովների» անդամ չէր, նա շարունակում էր ծառայել «Աստծո ժողովների» եկեղեցական համայնքներում: «Դանկիրկ ժողով» եկեղեցին հյուրընկալվեց Լեոնարդի շենքում՝ մկրտության ծառայություն անցկացնելու համար¹¹⁵: Նա հուղարկավորման ծառայություն անցկացրեց «Բեթելի Աստծո ժողով» եկեղեցում (տեղական միսիայի եկեղեցիներից մեկը, որը հաստատվեց Ֆինդլիում Լեոնարդի հրաժարականից հետո)¹¹⁶: Նա ծառայեց որպես ավետարանիչ մի քանի արթնության հավաքույթներին, որոնք անցկացնում էր «Ֆոստորիայի ժողովը», և նրա համայնքը հյուրընկալեց «Աստծո ժողովների» հուլիսի 4-ին նվիրված մի հանրահավաք, որտեղ ներկա էին Հյուսիս-Արևմտյան Օհայոյի և Հյուսիս-Արևելյան Ինդիանայի Աժ-ի եկեղեցիները¹¹⁷:

Այս տարիների ընթացքում Լեոնարդն անդամակցեց մի քանի փոքր քրիստոնեական միությունների: 1929թ.-ի հու-

Այս լեզվական խմբերն ավելի բարձր դիրք ձեռք բերեցին 1945թ.-ին, երբ դրանք հանձնվեցին Ներքին միսիայի ղեկավարությանը: Առանձին մասնաճյուղը դարձավ հավասար առանձին շրջանային խորհրդի: Այն ուներ ներկայացուցչություն Գլխավոր երիցական կազմում և լիարժեք անդամություն Գլխավոր խորհրդում: Միակ տարբերությունը մասնաճյուղի և շրջանի մեջ այն էր, որ մասնաճյուղը ոչ աշխարհագրական էր և «սահմանափակ էր առանձին ռասայական և լեզվական խմբի ներկայացուցիչներին ծառայելով»: Մասնաճյուղերը պետք է խորհրդակցեին Ներքին միսիայի հետ և համագործակցեին աշխարհագրական շրջանների հետ՝ «փոխադարձ եղբայրական հարաբերություններ կառուցելու համար»⁴⁵:

1973թ.-ի Գլխավոր խորհուրդը որոշում կայացրեց լեզվական մասնաճյուղերը շրջանների վերածելու մասին: Հաստատվեց հետևյալը. «նման շրջանի տարածքը սահմանափակ է առանձին լեզվական խմբերի ծառայելով, և այդ պատճառով, դրանց գործունեության աշխարհագրական տարածքները կարող են զուգարկապես կամ համընկնել մեկ կամ ավելի շրջանային խորհուրդների հետ»⁴⁶: Ոչ անգլո-ամերիկյան ծագում ունեցող մարդկանց դիրքն ավելի էր բարձրանում «Աստծո ժողովներում»: Եկեղեցիների առաջնորդները ձգտում էին բարձրացնել նոր առաջնորդների այս խմբերից, և ավելի սերտորեն ներգրավել նրանց ազ-



Ազգային խմբերի կոմիտեն «Մայքլ Կարդուն» Մեդիա կենտրոնի առջև Սփրինգֆիլդում՝ Միսուրիում, օգոստոսի 14, 2008թ.: Առաջին շարքը (ձ-ա). Ջոն Պալմեր (գլխավոր քարտուղար), Դազ Կլեյ (գլխավոր գանձապահ), Ալտոն Գարիսոն (Գլխավոր վերակազմի օգնական), Սեմյուել Ասիեդու (ԱՖրիկյան ընկերակցության նախագահ), Մայքլ Բոդուին (Հախճապի ընկերակցության նախագահ), Բարի Բոդուին (նրա կինը), Ռուդի Լոլովանգ (Ինդոնեզյան ընկերակցության նախագահ), և Ջորջ Վուդ (Գլխավոր վերակազմի):

Երկրորդ շարքը (ձ-ա). Մալկոլմ Բարլեյթ (Սևամորթների ընկերակցության նախագահ), Ռոջեր Կրի (Կլեյի և Գարիսոնի մեջտեղում) (Բնիկ ամերիկացիների ներկայացուցիչ), Նիլո «Ջարեն» Լապասարան (Ֆիլիպինյան ընկերակցության նախագահ), Ջորջ Ռաֆիդի (Արաբական ընկերակցության նախագահ), և Ջոն Է.Մարաքլ (Ջորջ Վուդի ծախ կողմում) (Բնիկ ամերիկացիների ընկերակցության նախագահ և Գործադիր երեց):

Երրորդ շարքը (ձ-ա): Վիկտոր Ջոզեֆ (Հարավային Ասիայի ընկերակցության նախագահ), Կլեմենտե Մալդոնադո (Միջին Արևմուտքի Լատինամերիկյան ընկերակցության վերակազմի), Տալոսազա Վանիլաու (Սամոական ընկերակցության նախագահ), Ֆելիքս Հարպել (Հրեական ընկերակցության նախագահ), Իսիկելի Տուրիաբլե (Ֆիջիական ընկերակցության նախագահ), Ֆիլիմոն Մաու (ԱՄՆ-ի Տոնգացիների ընկերակցության նախագահ), Գարի Ջոնս (Օվվանդի Լատինամերիկյան ընկերակցության վերակազմի), Մուուսես Կաո (Վիետնամական ընկերակցության նախագահ), Խուան Սուարես (Պուերտո Ռիկոյի շրջանի վերակազմի), Վիկտոր Պրոխոր (Սլավոնական ընկերակցության ներկայացուցիչ), և Ջոլի Սմիթ (ԱՄՆ Միսսիսիպի գործադիր տնօրեն):

Ետևի շարքը (ձ-ա): Էմորի Կ. Դայվի (Խուլերի մշակութային ընկերակցության նախագահ), Դենիել Միլլեր (Գերմանական շրջանի վերակազմի), Ջոել Ֆ. Կոստա (Բրազիլական շրջանի վերակազմի), Ռաֆաել Ռեյես (Իսպանալեզու Արևելյան շրջանի վերակազմի), Դենիս Ռիվիերա (Կենտրոնական Լատինամերիկյան շրջանի վերակազմի) և Սերխիո Նավարետե (Հարավային Խաղաղօվկիանոսյան Լատինամերիկյան շրջանի վերակազմի):

գային կառույցներում: Մինչև 20-ամյակ, կար գիտակցում այն մասին, որ «Աստծո ժողովներն» ամբողջովին չի իրագործել Ազուգա փողոցի միջոսապական սկզբունքը:

1989թ.-ի Գլխավոր խորհուրդն ընդունեց բանաձև ընդդեմ «ցանկացած կերպով դրսևորվող ռասայական խտրականության մեղքի», որն ապաշխարության կոչ էր անում ամեն մեկին, ով ռասայական խտրականություն էր ցուցաբերել «սեփական մտքերի կամ գործողությունների, կամ էլ եկեղեցական կամ հասարակական կառույցների միջոցով»⁴⁷: Թեև պատվիրակները որոշեցին գործել ընդդեմ ռասայական խտրականության և ձգտել հաշտության, որևէ կառույց գործի չդրվեց՝ այս

նպատակն իրականացնելու համար, այնպես որ դա մեծ արդյունք չտվեց: Իրավիճակը փոխվեց, երբ 1995թ.-ին Գլխավոր խորհուրդը լիազորեց ազգային/լեզվական ընկերակցությունների ստեղծումը, որոնք բաղկացած էին տարբեր շրջանների եկեղեցիներից՝ միավորված «տեղեկությունների փոխանակման, ավետարանչական գործը դյուրացնելու և սեփական խմբի մեջ եկեղեցիներ հիմնելու» նպատակով⁴⁸: Ազգային/լեզվական ընկերակցությունները նշանակվեցին ԱՄՆ Միսսիսիպի պատասխանատվության ներքո⁴⁹:

1997թ.-ին Գլխավոր խորհուրդը կողմ քվեարկեց ազգային/լեզվական ընկերակցությունների ներկայացուցիչներին Գլխավոր երիցական կազմում

ընդգրկելու համար, ինչպես նաև Գործադիր երիցական կազմն ընդլայնելու համար, որպեսզի այն կարողանա ընդունել մեկական ներկայացուցչի ամեն ազգային/լեզվական ընկերակցությունները: Այս կառուցողական փոփոխությունները էական արդյունք տվեցին: Ազգային փոքրամասնություններն ավելի պատշաճ կերպով ներկայացվեցին «Աստծո ժողովների» բարձրագույն ղեկավար մարմիններում: Դրա ամենից ակնհայտ արդյունքը, թերևս, տեսանելի դարձավ 2007թ.-ին, երբ Ջոլի Սմիթն ընտրվեց որպես «Աստծո ժողովների» ԱՄՆ Միսսիսիպի տնօրեն: Նա հայտնի էր դարձել ողջ Ընկերակցությունում այն ժամանակ, երբ ծառայում էր որպես ազգային/լեզվական

ընկերակցությունները ներկայացնող գործադիր երեց:

Ավելի ստվարացող ոչ սպիտակամորթ հետևորդների պատճառով 2009թ.-ին ստեղծվեց նոր Ազգային հարաբերությունների գրասենյակ, որը ենթակա էր Գլխավոր վերակացուին: Սքոթ Թեմսիլը թողեց Միջմշակութային ծառայության տնօրենի պաշտոնը՝ նշանակվելով Ազգային հարաբերությունների տնօրեն: Համաձայն «Աժ-ի Նորությունների», Ազգային հարաբերությունների տնօրենի պարտականություններն էին՝ նախագահել հանդիպումները, «ծառայել գոյություն ունեցող ընկերակցություններին կամ լեզվական խմբերին, աճելու և հաստատվելու հնարավորություններ ընձեռնել դրանց, օգնել այն խմբերին, որոնք ցանկանում են համաժողովի կամ շրջանային խորհրդի կարգավիճակ ստանալ, օգնել ընկերակցություններին կենտրոնանալ աշակերտելու և եկեղեցիներ հիմնելու վրա, ինչպես և կատարել այլ պարտականություններ»⁵⁰: Միջմշակութային ծառայության ներկա տնօրենը՝ Մալկոլմ Բարլեյգը, զբաղեցրեց այս պաշտոնը 2009թ.-ին: Նա ծառայեց որպես Սևամորթների ազգային ընկերակցության նախագահ 2008-2012թթ.-ին: Նա դարձավ առաջին անգլո-ամերիկացին, ով ծառայեց տնօրենի պաշտոնում: Իսկ արդեն 2013թ.-ին, ոչ սպիտակամորթները կազմում էին «Աստծո ժողովների» հետևորդների 41 տոկոսը Միացյալ Նահանգներում⁵¹:

Միջմշակութային ծառայության բաժին (1945թ.-մինչ օրս)

Միջմշակութային ծառայության բաժինը հիմնադրվեց 1945թ.-ին «Ներքին միսիոներական բաժանմունք» անվանումով՝ Ներքին միսիայի կազմում⁵²: Այդ ժամանակ ԱՄՆ-ի Միսիան բաղկացած էր եկեղեցու ընդլայնման և Ներքին միսիայի բաժանմունքներից: Ներքին միսիոներական բաժանմունքի նպատակն էր՝ ղեկավարել միսիոներական աշխատանքը տարբեր խմբերի հետ՝ հրեաների, Ալյասկայի տեղաբնակների, սևամորթ ամերիկացիների, բնիկ ամերիկացիների, խուլերի, բանտարկյալների և ոչ սպիտակամորթների հետ Միացյալ Նահանգներում: Հետաքրքրական է, որ իսպանալեզուներն այդ ժամանակ գտնվում էին Արտաքին միսիայի բաժնի ներքո (որն այժմ կոչվում է «Աստծո ժողովների» Համաշխարհային միսիա)⁵³:

Ներքին միսիայի բաժանմունքը վերանվանվեց Հատուկ ծառայությունների բաժանմունքի 1957թ.-ին⁵⁴: Արդեն 1973թ.-ին Գլխավոր խորհուրդը կատարեց երեք հավելյալ փոփոխություն, ինչն իր ազդեցությունը թողեց Հատուկ ծառայությունների բաժանմունքի վրա⁵⁵:

Առաջին՝ անվանումը փոխվեց Հատուկ ծառայության բաժնի: Երկրորդ՝ Հատուկ ծառայության բաժնի բոլոր աշխատանքների ղեկավարումը, բացի «Կոչ դեռահասներին» ծառայությունից, հանձնվեց այն շրջաններին, որտեղ այդ աշխատանքները կատարվում էին: «Կոչ դեռահասներին» ծառայությունը հայտնվեց իր կողմից նշանակված ներկայացուցչի ենթակայության ներքո⁵⁶: Երրորդ՝ այն օտար լեզուների մասնաճյուղերը, որոնք բաղկացած էին առնվազն 12 եկեղեցիներից, դարձան



Միլդրեդ Ուիտնի, կույրերին ուղղված ծառայության առաջագնացներից մեկը, բրայլյան գրամեքենայի մոտ իր տանը՝ Փիուոքիում, Վիսկոնսինում: Վաղ 1960-ական թվականներ:

օտար լեզուների շրջաններ և հեռացվեցին Ներքին միսիայի վերահսկողությունից⁵⁷:

Հատուկ ծառայության բաժինը վերանվանվեց Միջմշակութային ծառայության բաժնի 1985թ.-ին⁵⁸: Միջմշակութային ծառայությունն ունեցել է ութ տնօրեն՝ Փոլ Ռ. Մարկստրոմը (1973-1980թթ.), Ռալֆ Զ. Ֆարելը (1982թ. հունիս-1984թ.)⁵⁹, Ջեյմս Ս. Կեսլերը (1984թ. հոկտեմբեր-1994թ.), Դեյվիդ Մուրը (1994-2000թթ.), Սթիվեն Թուրվիլը (2000-2002թթ.), Զ. Պատրիկ Ֆիորեն (2002-2003թթ.), Սքոթ Թեմսիլը (2003-2009թթ.) և Մալկոլմ Բարլեյլը (2009թթ.-մինչ օրս)⁶⁰:

Միջմշակութային ծառայության ներկա և ապագա աշխատանքը

ԱՄՆ-ի ներքին միսիոներներն առնչվում էին Միջմշակութային ծառայության աշխատանքի հետ տարբեր դաշտերում, որոնց թվում էին բազմաթիվ գթության ծառայությունները, քաղաքային միսիաները, նաև միսիոներական աշխատանքները՝ ուղղված գնչուներին, մուսուլմաններին, այլ պաշտամունքներին և Ամերիկայի ներսում գտնվող բազմաթիվ մշակութային խմբերին: Գոյություն ունի ութ խոշոր միսիոներական դաշտ ներքին միսիոներների համար՝ Խուլերի մշակութային ծառայությունը, Հաշմանդամների ծառայությունը, Հրեական ծառայությունը, Մուսուլմանական ծառայությունը, Ալյասկայի բնիկների ծառայությունը, Ազգային ծառայությունները, Բնիկ ամերիկացիների ծառայությունը և Կույրերի ծառայությունը: 2013թ.-ին Միջմշակութային ծառայությունը գործում էր ԱՄՆ-ում ծառայող 324 միսիոների և միսիոներական զույգերի հետ: Այն զբկուցել է 4.381 ազգային եկեղեցական համայնքների և չորս միջմշակութային Աստվածաշնչյան դպրոցների ստեղծման մասին⁶¹: Միջմշակութային ծառայության միսիոներները կրթվում և պատրաստվում են՝ քարոզելու Ավետարանը ԱՄՆ-ում բնակվող բոլոր մշակույթների ներկայացուցիչներին: Նրանք «սովորեցնում են, քարոզում են, օգնում են, պատրաստում են, կերակրում են, աղոթում են, մխիթարում են, կառուցում են, նորոգում են և խորհրդատվություն են տրամադրում՝ օգտագործելով այն պարզակները և տաղանդները, որոնք Աստված տվել է նրանց, և անելով անհրաժեշտ ամեն ինչ՝ մեր ազգին հասնելու համար, որպեսզի ոչ ոք չկորչի»⁶²:

«Աստծո ժողովների» անդամները կարող են մասնակցություն ունենալ Միջմշակութային ծառայությանը երկու ձևով: Առաջինը՝ հնարավորություններ փնտրեք այս աշխարհի վրա ազդեցություն թողնելու համար: Երբեմն դուք կարող եք ազդեցություն թողնել այս աշխարհի վրա շատ պարզ կերպով, օրինակ՝ այցելելով ձեր դիմացի հարևանին: Երկրորդը՝ արեք հնարավորինս ամեն ինչ, որպեսզի մոտեցնեք մարդկանց Կենդանի Աստծո Հոգուն, Ով ցանկանում է, որ բոլորը գան Իրեն՝ բազմապիսի ընտանիք կազմելով: Միջմշակութային ծառայությունն օգնում է իրականացնել Մեծ Հանձնարարականը Միացյալ Նահանգներում: Այն աջակցում է մեր միսիոներներին, որպեսզի նրանք հասնեն ազգերին մեր ազգի մեջ: ✝

Բոլոր միջնակուսային Մասնաճյուղերի, Տարածքների և Ընկերակցությունների ցուցակը⁶³

Ազգային/Լեզվական խմբեր	Տարեթվեր	Նշումներ
«Աստծո ժողովների» Աֆրիկյան ընկերակցություն, ԱՄՆ	2003-	Ընկերակցության կանոնադրությունն ընդունվեց 2003թ.-ի սեպտեմբերի 27-ին, և հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2003թ.-ի նոյեմբերի 18-19-ին:
«Աստծո ժողովների» Արաբական ընկերակցություն, ԱՄՆ	2005-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2005թ.-ի նոյեմբերի 15-16-ին:
Բրազիլիական շրջան	2003-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2003թ.-ի հունվարի 21-ին:
Կենտրոնական շրջան / Դիստրիկտ Սենտրալ (նախկինում՝ Կենտրոնական շրջան, որը դրանից առաջ կոչվում էր «Կենտրոնական Լատինա-ամերիկյան շրջան»)	1972-	Կազմվեց Լատինաամերիկյան շրջանից:
Ոչ սպիտակամորթների մասնաճյուղ		1945թ.-ի Գլխավոր խորհուրդը խրախուսեց այս մասնաճյուղի ստեղծումը: 1947թ.-ի Գլխավոր խորհրդի ժամանակ նշանակվեց հետազոտական կոմիտե, որը պետք է առաջարկներ ներկայացներ 1949թ.-ի Գլխավոր խորհրդին այս մասնաճյուղի ստեղծման վերաբերյալ: Այնուամենայնիվ, ոչ մի առաջարկներ չներկայացվեցին և այս մասնաճյուղն այդպես էլ չհաստատվեց: Ստեղծվեց առանձին Սևամորթների ազգային ընկերակցություն 1989թ.-ին:
Կովբոյների ընկերակցություն	2005-	Սկզբնականորեն հայտնի որպես Կովբոյների եկեղեցական ընկերակցություն: Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2005թ.-ի նոյեմբերի 15-16-ին՝ այն վերապահումով, որ նրանք, ի տարբերություն այլ ընկերակցությունների, չեն ունենալու ներկայացուցչություն Գլխավոր երիցական կազմում:
Եթովպական ընկերակցություն	2011-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2001թ.-ի հունիսի 9-10-ին:
«Աստծո ժողովների» Ֆիլիպինյան-ամերիկյան քրիստոնեական ընկերակցություն	1976-	Հաստատվեց 1976թ.-ին: Ստացավ Ընկերակցության կարգավիճակ Գործադիր երիցական կազմի կողմից 1997թ.-ի նոյեմբերի 11-ին: Տվյալները թարմացումը Գործադիր երիցական կազմի արձանագրության մեջ՝ 2006թ.-ի հունվարի 17-ին:
Ֆլորիդայի բազմամշակութային շրջան (նախկինում՝ Հարավ-Արևելյան իսպանալեզու շրջան)	1981-	Նախկինում Իսպանալեզու Արևելյան շրջանի մասը: Կազմակերպվեց 1981թ.-ի հունվարի 29-31-ին: Անվանումը փոխվեց Ֆլորիդայի բազմամշակութային շրջանի 2013թ.-ին:
Գերմանական շրջան (նախկինում՝ Գերմանական մասնաճյուղ)	1922-	Կազմակերպվեց Նյու Քասթլում՝ Փենսիլվանիայում, 1922թ.-ի նոյեմբերի 17-24-ին: 1973թ.-ին այն հայտնի դարձավ որպես Գերմանական շրջան:
«Աստծո ժողովների» Գանայական ընկերակցություն, ԱՄՆ	2011-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2011թ.-ի հունիսի 9-10-ին:
Հունական մասնաճյուղ	1953-1968	Սկզբնականորեն կազմակերպված որպես «Ելենիկ Պրոտոգոնոս Ապոստոլիկ Էկլեսիա» («Հունական սկզբնական առաքելական եկեղեցի»)՝ Հունական մասնաճյուղը վերակազմավորվեց Գլխավոր քարտուղարի կողմից 1953թ.-ի օգոստոսի 14-ին: Մինչև 1962թ.-ը, այն հայտնի էր որպես Հունական մասնաճյուղ: Այն կազմալուծվեց 1968թ.-ին:
Ծովաձոցի լատինաամերիկյան շրջան	1972-2012	Կազմված Լատինաամերիկյան շրջանից: Այն կազմալուծվեց՝ չորս նոր Իսպանալեզու շրջան ստեղծելու համար:
Հաիթյան-ամերիկյան ընկերակցություն	2005-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2005թ.-ի հունիսի 6-8-ին:
Հնոնգների ազգային ընկերակցություն	1996-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 1996թ.-ի մարտին, տվյալների թարմացումը՝ 2003թ.-ի հունիսի 9-11-ին:
Հունգարական մասնաճյուղ	1944-1960	
Հյուսիսային Ամերիկայի Հնդկաստանի Ընկերակցություն (կամ «Աստծո ժողովների» Հնդկաստանի ընկերակցություն, ԱՄՆ)	1993-	Ստեղծվեց 1993թ.-ին: Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2007թ.-ի սեպտեմբերի 18-19-ին, իր Ընկերակցության կանոնադրության հետ:

Իտալական շրջան (նախկինում՝ Իտալական մասնաճյուղ)	1948-1990	Կազմվեց Սիրակուզում՝ Նյու Յորքում, 1948թ.-ի հունվարի 15-17-ին: Կազմալուծվեց 1990թ.-ի նոյեմբերի 30-ին:
Կորեական շրջան (նախկինում՝ «Աստծո ժողովների» Ամբողջ Ավետարանի կորեական խորհուրդ)	1982-	Կազմակերպչական հավաքույթն անցկացվեց Սփրինգֆիլդում՝ Միսուրիում, 1982թ.-ի փետրվարին:
Կորեական ընկերակցություն	2003-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2003թ.-ի մարտի 18-19-ին:
Լատինամերիկյան շրջան (նախկինում՝ Լատինամերիկյան համաժողով)	1918-1971	Հիմնադրվեց 1918թ.-ին՝ որպես Տեխասի շրջանի Լատինամերիկյան համաժողով, և դարձավ Լատինամերիկյան շրջան 1925թ.-ին: Լատինամերիկյան շրջանից առաջացավ Իսպանալեզու Արևելյան շրջանը 1956թ.-ին, որն ի վերջո բաժանվեց չորս հավելյալ շրջանների 1972թ.-ի հունվարի 1-ին՝ Ծովածոցի Լատինամերիկյան շրջանի, Կենտրոնական Լատինամերիկյան շրջանի, Միջին Արևմուտքի Լատինամերիկյան շրջանի և Խաղաղ Օվկիանոսի Լատինամերիկյան շրջանի:
Միջին Արևմուտքի Լատինամերիկյան շրջան	1972-	Կազմված Լատինամերիկյան շրջանից:
«Աստծո ժողովների» Սևամորթների ազգային ընկերակցություն	1989-	Կազմվեց Քաղաքի կենտրոնի աշխատավորների համաժողովից, որը սկսեց գործել 1970-ական թվականների վերջում: Կազմվեց 1989թ.-ին, հաստատվեց 1990թ.-ի մարտի 27-ին:
«Աստծո ժողովների» Չինական ազգային ընկերակցություն	2003-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2003թ.-ի հունիսի 9-11-ին:
«Աստծո ժողովների» Իսուլերի մշակութային ազգային ընկերակցություն	1992-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից որպես «Իսուլերի մշակութային ծառայություն» 1992թ.-ի սեպտեմբերի 22-ին:
Ֆիջիական ազգային ընկերակցություն	1990-	Հաստատվեց 1990թ.-ին: Գործադիր երիցական կազմը պաշտոնապես Ընկերակցության կարգավիճակ շնորհեց 1997թ.-ի նոյեմբերի 11-12-ից: Տվյալների թարմացումը Գործադիր երիցական կազմի արձանագրության մեջ 2006թ.-ի հունվարի 17-18-ին:
Ինդոնեզիական ազգային ընկերակցություն (կամ «Աստծո ժողովների» Ինդոնեզիական ընկերակցություն)	2004-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2004թ.-ի նոյեմբերի 16-17-ին:
«Աստծո ժողովների» Հրեական ազգային ընկերակցություն	2008-	Հաստատվեց 2008թ.-ի մայիսին: Հաստատվեց որպես շրջան Գործադիր երիցական կազմի կողմից 2008թ.-ի հունիսի 2-4-ին, իր Ընկերակցության կանոնադրության հետ:
Սլավոնական ազգային շրջան (նախկինում՝ Սլավոնական ազգային ընկերակցություն)	2002-	Սկզբնականորեն առաջարկված որպես Ռուսական և Ուկրաինական ազգային ընկերակցություն 1992թ.-ին, այն դարձավ Սլավոնական ազգային ընկերակցություն և հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2002թ.-ի նոյեմբերի 19-20-ին: Այն վերածվեց շրջանի Գործադիր երիցական կազմի հաստատմամբ 2008թ.-ի հունիսի 2-4-ին, և Գլխավոր խորհրդի հաստատմամբ՝ 2009թ.-ին:
«Աստծո ժողովների» Բնիկ ամերիկացիների ընկերակցություն	1996-	Կազմվեց 1996թ.-ի հունվարի 1-ին՝ Ընկերակցության կարգավիճակով, ստացավ Գործադիր երիցական կազմի հավանությունը 1996թ.-ի սեպտեմբերի 25-ին:
Նիգերիական ԱԺ ընկերակցություն, ԱՄՆ	2010-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2010թ.-ի սեպտեմբերի 21-22-ին, իր Ընկերակցության կանոնադրության հետ:
Խաղաղ Օվկիանոսի Հյուսիսային լատինամերիկյան շրջան	1998-	Կազմվեց Խաղաղ Օվկիանոսի Լատինամերիկյան շրջանից:
Խաղաղ Օվկիանոսի լատինամերիկյան շրջան	1972-1998	Կազմվեց Լատինամերիկյան շրջանից: Բաժանվեց 1998թ.-ին՝ կազմելով Խաղաղ Օվկիանոսի հյուսիսային լատինամերիկյան շրջանը և Խաղաղ Օվկիանոսի հարավային լատինամերիկյան շրջանը:
Ֆիլիպինյան մասնաճյուղ	1940? – (*)	Կազմվեց 1938թ.-ին որպես Ֆիլիպինյան շրջանի խորհուրդ, թեև այն պաշտոնապես ճանաչված չէր ԱԺ-ի կողմից որպես շրջան: Այն ղեկավարվում էր ԱԺ ծառայողի կողմից և ճանաչվեց որպես մասնաճյուղ 1940 կամ 1941թ.-ին: Գլխավոր գործառույթն էր՝ կազմակերպել ԱՄՆ-ում ապրող ֆիլիպինցի ԱԺ ծառայողների և անդամների ամենամյա համաժողովը: Այն աշխատանքային հարաբերություններ ուներ Արևմտյան Աֆիոն գտնվող տարբեր շրջանների հետ:
Լեհական մասնաճյուղ	1944-1960	Լեհական մասնաճյուղը կազմվեց 1944թ.-ի մայիսին և կազմալուծվեց 1960թ.-ի սեպտեմբերին:

Պորտուգալական շրջան (Նախկինում՝ Պորտուգալական ընկերակցություն)	1994-2003	Պորտուգալական Ընկերակցությունը ճանաչվեց 1994թ.-ին և կազմակերպվեց որպես շրջան 1998թ.-ին: Պորտուգալական շրջանը կազմալուծվեց Գլխավոր երիցական կազմի որոշմամբ 2003թ.-ի սեպտեմբերի 23-ին:
Պուերտո Ռիկոյի շրջան	1975-	Նախկինում Իսպանալեզու Արևելյան շրջանի մաս: Հաստատվեց որպես առանձին շրջան Գլխավոր երիցական կազմի կողմից 1975թ.-ի օգոստոսին:
«Աստծո ժողովների» Ռումինական ընկերակցություն	2003-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2003թ.-ի հունվարի 21-22-ից:
Ռուսական մասնաճյուղ	1945-1960	Ռուսական մասնաճյուղը կազմվեց 1945թ.-ին և կազմալուծվեց 1960թ.-ին:
Սամոական շրջան (Նախկինում՝ «Աստծո ժողովների» Սամոական ընկերակցություն)	2003-	Ընկերության կանոնադրությունը ստրոագրվեց 2003թ.-ի դեկտեմբերի 30-ին: Այն վերածվեց Սամոական շրջանի՝ ստանալով Գլխավոր խորհրդի հաստատումը 2013թ.-ին:
Երկրորդ կորեական շրջան	2005-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2005թ.-ի հունվարի 18-ին:
Կենտրոնական հարավային Իսպանալեզու շրջան	2011-	Կազմվեց Ծովածոցի լատինաամերիկյան շրջանից: Հաստատվեց Գլխավոր խորհրդի կողմից 2011թ.-ին:
«Աստծո ժողովների» Հարավային ասիական ընկերակցություն	2007-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2007թ. նոյեմբերի 12-14-ին, իր Ընկերակցության կանոնադրության:
Հարավային լատինաամերիկյան շրջան	2013-	Հարավ-Արևելյան Իսպանալեզու շրջանի մեջ գտնվող Հարավային լատինաամերիկյան համաժողովը և Միջատլանտյան իսպանալեզու համաժողովը միացան՝ դառնալով Հարավային Լատինաամերիկյան շրջան, 2013թ.-ի Գլխավոր խորհրդի հաստատմամբ:
Հարավային Խաղաղ Օվկիանոսի շրջան (Նախկինում՝ Հարավային Խաղաղ Օվկիանոսի լատինաամերիկյան շրջան)	1998-	Նախկին Խաղաղ օվկիանոսի լատինաամերիկյան տարածքը: Անվանումը փոխվել է Խաղաղ Օվկիանոսի հարավային շրջանի 2009թ.:
Հարավ-Արևմտյան շրջան (Նախկինում՝ Արիզոնայի լատինական շրջան)	2008-	Սկզբնականորեն կազմվեց 2006թ.-ին որպես Խաղաղ օվկիանոսի հարավային լատինաամերիկյան տարածքի համաժողով: Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2008թ.-ի հունիսին՝ Արիզոնայի լատինաամերիկյան շրջան դառնալու համար: 2009թ.-ի Գլխավոր խորհուրդը հաստատեց անվանման փոփոխությունը Հարավ-Արևմտյան շրջանային խորհրդի:
Իսպանալեզու Արևելյան շրջան (Նախկինում՝ Իսպանալեզու արևելյան համաժողով)	1956-	Կազմվեց Լատինաամերիկյան շրջանից 1956թ.-ին՝ որպես Իսպանալեզու Արևելյան համաժողով: Անվանումը փոխվեց Իսպանալեզու Արևելյան շրջանային խորհրդի 1957թ.-ի օգոստոսի 15-ին:
Տեխասի Ծովածոցի Իսպանալեզու շրջան (Նախկինում՝ Տեխասի ծովածոցի Իսպանալեզու շրջան)	2011-	Կազմվեց Ծովածոցի լատինաամերիկյան շրջանից: Հաստատվեց 2011թ.-ի Գլխավոր խորհրդի կողմից: Անվանումը փոխվեց Տեխասի Ծովածոցի իսպանալեզու շրջանի խորհրդի 2013թ.-ին:
Տեխասի Լուիզիանայի Իսպանալեզու շրջան	2010-	Կազմվեց Ծովածոցի լատինաամերիկյան շրջանից: Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2010թ.-ի սեպտեմբերի 21-22-ին, և վավերացվեց 2011թ.-ի Գլխավոր խորհրդի կողմից:
Տոնգացիների ընկերակցություն (կամ «Աստծո ժողովների» Տոնգացիների ընկերակցություն)	2002-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2002թ.-ի մարտի 15-ին: Փոփոխեց իր Կանոնադրությունը, Գործադիր երիցական կազմի արձանագրություն, 2004թ.-ի հունվարի 20-21:
Ուկրաինական մասնաճյուղ	1943-1971	Ուկրաինական մասնաճյուղը ճանաչվեց 1943թ.-ի սեպտեմբերի 17-ին: Այն կազմալուծվեց 1971թ.-ի դեկտեմբերի 31-ին:
«Աստծո ժողովների» Վիետնամական ընկերակցություն	2007-	Հաստատվեց Գործադիր երիցական կազմի կողմից 2007թ.-ի սեպտեմբերի 18-19-ին, իր Կանոնադրության հետ:
Արևմտյան Տեխասի և Տափաստանների շրջան	2011-	Կազմվեց Ծովածոցի լատինաամերիկյան շրջանից: Հաստատվեց 2011թ.-ի Գլխավոր խորհրդի կողմից:
Հարավսլավյան մասնաճյուղ	1945-1961(*)	



Վիլյամ Զ. Մոուլնարը (ԱժՄԱ-ի Աստվածաբանության մագիստրոս) թվային պահուցարան է «Ֆլուոր» հոգեգալսական ժառանգության կենտրոնում, Սփրինգֆիլդ, Միսուրի:

ՆՇՈՒՆՆԵՐ

- 1 «Ապավում է, որ փոքրամասնությունները մեծամասնություն են կազմելու 2050թ.-ին»: http://articles.cnn.com/2008-08-13/us/census.minorities.1.hispanic-population-census-bureau-white-population?_s=PM:US (նույնը ապրիլի 2, 2012թ.):
- 2 Ռոբերտ Վ. Փիրթթ. «Ամերիկայի միսիայի համախոսում», «Հոգեգալսական Ավետարան», օգոստոսի 4, 1985թ., էջ 18: «ԱՄՆ Միսիայի բաժանմունքը» կամ «ԱՄՆ Միսիայ» սկզբնականորեն անվանվել է «Ներքին միսիայի ազգային բաժին», և տարբեր անվանումներ է ունեցել իր պատմության ընթացքում: Այդ փոփոխվող անվանումները հետևյալն են. «Ներքին միսիայի ազգային բաժին» (1937-1973թթ.), «Ներքին միսիայի բաժին» (1973-2001թթ.), «Աստծո ժողովների ներքին միսիա» (2001-2003թթ.), «Աստծո ժողովների ԱՄՆ-ի Միսիա» (2003թ.-մինչ օրս):
- 3 Ջեյմս Ա. Կեյսեր. «Ամերիկյան միսիայի նոր համախոսումներ», «Հոգեգալսական Ավետարան», օգոստոսի 4, 1985թ., էջ 26:
- 4 Միջնակույթային ծառայության գրքույկ, 2011թ.:
- 5 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1937թ., էջ 96:
- 6 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1941թ., էջ 62: Այս գեղեցիկ նույնպես հիշատակվում է Ալլախյան և Հավայան կղզիների ընդգրկված Ներքին միսիայի բաժնի աշխատանքի մեջ:
- 7 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1943թ., էջեր 33-34:
- 8 Այս հոդվածի ծավալի պատճառով, այս հատվածում չի հիշատակվում Հավայան կղզիների կամ իսպանալեզու ժողովուրդների ուղղված միսիոներական ծառայությունը, քանի որ կարճ ժամանակ անց երկուսն էլ հայտնվեցին Արտաքին միսիայի իրավասության ներքո, թեև հետագայում երկուսն էլ ավելացան ԱՄՆ միսիայի բաժնին: Այնուամենայնիվ, իսպանալեզու տարածքները կիրառատակվեն ավելի ուշ այս հոդվածում, երբ այն անդրադառնան Ազգային և լեզվական շրջաններին: Կոնգրեսը, «Կոնգրեսի 75-ամյակը» ծառայությունը, բանտերի ծառայությունը, կապեպանների ծառայությունը, հրեական ծառայությունը, կոյրերի ծառայությունը և խոլերի ծառայությունը չի քննարկվի այստեղ հոդվածի սահմանափակ ծավալի պատճառով: Այս ծառայությունների մասին պատմությունները ընթերցելու համար, տես «ԱՄՆ Միսիա. Ծառայության 75-ամյակը» (Սփրինգֆիլդ, Միսուրի, «Ավետարան» հրատարակչություն, 2012թ.):
- 9 Ուոլթ Ուոլթեր և Վիլյամ Հ. Բոյլս, ծառայողական գործեր, ՖՀԺԿ:
- 10 Կլայդ Տոմպսոն. «Հնդկացիների միջև», «Քրիստոնեական Ավետարան», հուլիսի 27, 198թ., էջ 5:
- 11 (Յորգեն Պ.) Տորկիդոն. «Հնդկացիների միջև», «Հոգեգալսական Ավետարան», մայիսի 26, 1923թ., էջ 5:
- 12 Վ. Հ. Սոլմս. «Նավահոների միջև», «Հոգեգալսական Ավետարան», օգոստոսի 7, 1937թ., էջ 9: Տես նույնպես Պրն. և Տկն. Վ. Հ. Սոլմս. «Ինչ կատարեք մեր հարևանների նավահո հնդկացիների մասին», «Հոգեգալսական Ավետարան», ապրիլի 9, 1938թ., էջ 6:
- 13 «Աշխատանք հնդկացիների հետ Կիովա-յում», «Հոգեգալսական Ավետարան», ապրիլի 26, 1941թ., էջ 9:

- 14 «Արթնություն ապաշի հնդկացիների միջև», «Հոգեգալսական Ավետարան», օգոստոսի 8, 1942թ., էջ 7:
- 15 «Միսիա հնդկացիների համար Վիսկոնսինում», «Հոգեգալսական Ավետարան», հունիսի 5, 1955թ., էջ 13:
- 16 Խմբագրի նշումը Լ. Է. Դեյվիսի «Հնդկացիական միսիա Պուերտոյում» հոդվածում, «Հոգեգալսական Ավետարան», մարտի 4, 1958թ., էջ 12:
- 17 Պրն. և Տկն. Ուոլթեր Ա. Անդերսոն. «Հնդկացիների միջև», «Հոգեգալսական Ավետարան», սեպտեմբերի 24, 1927թ., էջ 11:
- 18 Պրն. Դ. Լ. Բրուն. «Կալիֆորնիայի հնդկացիների միջև», «Հոգեգալսական Ավետարան», փետրվարի 1, 1930թ., էջ 13:
- 19 «Հնդկացիների եկեղեցին Հուպայում այժմ «Աստծո ժողովների» մասն է», «Հոգեգալսական Ավետարան», մարտի 5, 1927թ., էջ 21:
- 20 Ջոն Դեմիսի. «Աստծո ժողովների ծառայությունը բնիկ ամերիկացիներին, Մաս 1», «Աստծո ժողովների ծառանագրություն», հմ. 22:2 (ամառ 2002), էջ 8: Առաջին ազգային հնդկացիական եկեղեցու հիմնադիրը համարվում է Չարլի Լին. նա եկեղեցի հիմնեց Շիֆոուդում՝ Նյու Մեքսիկոյում, որն ինքնուրույն դարձավ 1973թ.-ին: Հայտնի է, որ Չարլի Լին Ներքին միսիայի կողմից նշանակված առաջին միսիոներն էր (1952թ.): Տես «Բնիկ ամերիկացիների ծառայությունը» տպագրված ձեռագիր (1988թ.) էջ 1, ՖՀԺԿ: Ռուտ Լինոնը նշում է, որ Լին «առաջին պաշտոնապես նշանակված և գրանցված ներքին ազգային միսիոներն էր»: Տես Ռուտ Ա. Լինո, կազմող. «Աստծո ժողովների Ներքին միսիայի պատմությունը» (Սփրինգֆիլդ, Միսուրի. Ներքին միսիայի բաժին, 1992թ.), էջ 30:
- 21 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1929թ., էջ 81:
- 22 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1943թ., էջ 50-51:
- 23 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1945թ., էջ 69:
- 24 «Առաջին հնդկացիական համաժողովը», «Հոգեգալսական Ավետարան», ապրիլի 10, 1948թ., էջեր 10-11:
- 25 Նույնը, էջ 11:
- 26 «Փառավոր հնդկացիական համաժողով», «Հոգեգալսական Ավետարան», հոկտեմբերի 30, 1948թ., էջ 12:
- 27 Էնդրյու Մարաք, հիմնում նշանակման համար, ծառայողական գործ, ՖՀԺԿ: Նա Ջոն Է. Մարաքի հորեղբայրն է:
- 28 Ջոն Տ. ՄաԿՖերսոն և Ֆիլ Թեյլոր, «Առաջնորդ. իմ պատմությունը» (Թայպս, Կարոնդելի Աստծո ժողով, 1995թ.), էջ 140:
- 29 Դարին Զ. Ռոջերս և Անջելա Տարանգո, հարցազրույց բանտերի պատմությունների մասին Ռոջեր Ա. Քրիլի հետ, օգոստոսի 9, 2006թ.:
- 30 «Ամերիկացի հնդկացիները հավաքվում են», «Հոգեգալսական Ավետարան», հունիսի 12, 1955թ., էջ 10: Նույնպես, բնիկ ամերիկացի միսիոներների կարճ կենսագրությունների համար, տես. Ռուտ Լինո. «Ավետարանը հնդկացիներին», «Հոգեգալսական Ավետարան», սեպտեմբերի 24, 1961թ., էջեր 18-19: Ռուտ Լինո. «Ավետարանը հնդկացիներին», «Հոգեգալսական Ավետարան», հոկտեմբերի 15, 1961թ., էջեր 22-23: Ռուտ Լինո. «Ավետարանը հնդկացիներին», «Հոգեգալսական Ավետարան», հոկտեմբերի 22, 1961թ., էջեր 18-19:
- 31 Ռուտ Լինո. «Հնդկացիների ճամբարներում արթնություն է բռնկվում», «Հոգեգալսական Ավետարան», հոկտեմբերի 30, 1960թ., էջեր 8-9:
- 32 ««Աստծո ժողովների» ամերիկյան հնդկացիների միսիայի վիճակագրական գեղարվեստական համար», տպագրված ձեռագիր, էջ 2, ՖՀԺԿ:
- 33 Այն հիմնադրվեց 1957թ.-ի սեպտեմբերի 23-ին Այտա Ուոլթերի կողմից որպես «Հնդկացիների Աստվածաշնչյան դպրոց բոլոր գեղերի համար»: 1967թ.-ին այն դպրոցը վերանվանվեց «Ամերիկյան հնդկացիների Աստվածաշնչյան ինստիտուտի»: Ներկա անվանումը 1982թ.-ից «Ամերիկյան հնդկացիների քոլեջ» է: Ջոզեֆ Զ. Սաջիո. «Այտա Մ. Ուոլթերն. մեկ Յեթմի մեջ

- ընդգրկողը», «Աստծո ժողովների ծառանագրություն», հմ. 27 (2007թ.), էջ 31:
- 34 Այս կրթական հաստատությունը հիմնադրվեց 1968թ.-ի հունվարին Պաուլին Մաթթիսի, Չարլզ Հոլդենի և Հուբերտ Բոյսի կողմից: Այն կոչվում էր «Հնդկացիների Արևելյան Աստվածաշնչյան ինստիտուտ», և գտնվում էր Ֆայթթիլի մոտակայքում, Հյուսիսային Կարոլինայում: Այդ անվանումը փոխվեց «Ազգային Ամերիկյան Աստվածաշնչյան քոլեջի» 1994թ.-ին:
- 35 Այս կրթական հաստատությունը սկզբնականորեն կոչվում էր «Բարի հովիվ» Հնդկացիների Աստվածաշնչյան ինստիտուտ: Այն գտնվում էր Մորիզոմ Հարավային Դակոտայում, և բացվեց 1970թ.-ին Լեո և Միլդրեդ Բենսոնների կողմից: Այն փոխվեց իր անվանումը «Հնդկացիների Կենտրոնական Աստվածաշնչյան քոլեջի» և ապագայում տեղափոխվեց Ռեմիդի Սթիթ Հարավային Դակոտա, և կրկին փոխեց իր անվանումը «Բլեյթ Հիլս» Հնդկացիների Աստվածաշնչյան քոլեջի: Այս ուսումնական հաստատությունը վերածվեց «Ծառայության զարգացման ինստիտուտ» կոչվող հեռակա ուսուցման ծրագրի, որը հասանելի էր հիմնականում բնիկ ամերիկացիներին:
- 36 Այս ուսումնական հաստատությունը հիմնադրվեց 1962թ.-ին Արլին և Լուան Գլենդենների ջանքերով և Բենեթ Էնդրյուսի օգնությամբ: Այն փակվեց 2009թ.-ին և դարձավ «Այլաակազի շրջանի ծառայողական դպրոց»:
- 37 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1977թ., էջեր 66-67:
- 38 Անջելա Տարանգո. «Ընտրելով Հիսուսի ճանապարհ. «Աստծո ժողովների» ներքին միսիայի ամերիկացի հնդկացիներին, և հնդկացիների հոգեգալսական ինքնուրույն ձևավորումը» (դոկտորական թեզ, «Duke University», 2009թ.), էջեր 237-239, 266:
- 39 «Հայտնի է լրիվ ժամանակով ծառայող հնդկացի ներկայացուցչի անունը», «Հոգեգալսական Ավետարան», ապրիլի 14, 1991թ., էջ 28:
- 40 Տարանգո, էջ 266:
- 41 Անջելա Տարանգո. «Աստծո ժողովների միսիայի բնիկ ամերիկացիներին», «Աստծո ժողովների ծառանագրություն», հմ. 29 (2009թ.), էջ 50:
- 42 Նույնը, էջ 46:
- 43 «Դեմքեր դաշտում. ԱՄՆ Միսիայի վիճակագրություն», 2014թ., էջ 2
- 44 Ջոն Է. Մարաք, էջ. նամակ Լինդսի Փեյջին, փետրվարի 10, 2012թ.:
- 45 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1945թ., էջ 35:
- 46 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1973թ., էջեր 88-89:
- 47 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1989թ., էջեր 117-118:
- 48 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1995թ., էջ 41:
- 49 Սքոթ Թեմսիլ, էջ. նամակ հեղինակին, փետրվարի 15, 2012թ.։ Գլխավոր խորհրդի կողմից չէր ընդունվել որևէ բանաձև կամ ներկայացվել որևէ սահմանադրական պահանջ այն մասին, որ ազգային կամ լեզվական ընկերակցությունները «համակարգվեն, ղեկավարվեն կամ վերահսկվեն» Աժ-ի ԱՄՆ-ի Միսիայի կամ Միջնակույթային ծառայության տնօրենի կողմից 1995-2009թթ.-ի ընթացքում: Այնուամենայնիվ, ազգային կամ լեզվական ընկերակցությունների մի մասի սահմանադրություններում նշված է, որ նրանք կազմվել էին «Աստծո ժողովների ԱՄՆ-ի Միսիայի Գործարար տնօրենի գրասենյակի միջոցով», և որ Միջնակույթային ծառայության տնօրենը խորհրդակալի պաշտոն է կատարել տվյալ ազգային կամ լեզվական ընկերակցության համար:
- 50 «Թեմսիլը նշանակված է Ազգային հարաբերությունների տնօրենի», «Աստծո ժողովների նորություններ», հոկտեմբերի 12, 2009թ.:
- 51 2013թ.-ի Աժ վիճակագրական տվյալներ:
- 52 «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1945թ., էջ 35: Ներքին միսիոներական բաժանմունքը հետագայում վերանվանվեց

Ծարունակելի էջ 65-ին



Լատինաամերիկյան շրջանի առաջին երեք վերակացուները (ա-ձ). Խոսե Գիրոն (3-րդ վերկ.), Դեմետրիո Բազան (2-րդ վերկ.) և Հ. Ս. Բոլլ (1-ին վերկ.): Լուսանկարն արված է Չամայում, Նյու Մեքսիկոյում, մարտ, 1939թ.:

«Այլևս լուռ չենք լինելու». «Աստծո ժողովների» Լատինա- ամերիկյան շրջանը Դեմետրիո Բազանի և Խոսե Գիրոնի ղեկավարության ներքո

Գաստոն Էսպինոզա

Քսաներոյ դարի սկզբում Ամերիկայի հարավ-արևմուտքի հասարակական և կրոնական իրավիճակը սկսեց փոխվել: Երկու միաժամանակ տեղի ունեցող իրադարձությունները՝ Մեքսիկական հեղափոխությունը և Հոգեգալստական շարժման ծնունդը, փոխելու էին անթիվ մարդկանց կյանքերը, ովքեր փախստական դարձան՝ հեռանալով Մեքսիկայից: Ամերիկայում նրանք ոչ միայն ապաստան գտան պատերազմից, այլև կրոնական վերափոխում ապրեցին: Հազարավոր մարդիկ ընդունեցին Քրիստոսին և մկրտվեցին Սուրբ Հոգով փախստականների սահմանային ճամբարներում, փոքրիկ Ավետարանական միսիաներում, վրաններում, դպրոցական հանրակացարաններում և տներում:

Այս փախստականները դարձի էին գալիս հովիվների, ավետարանիչների և եկեղեցու հասարակ անդամների օգնությամբ, որոնց Հոգեգալստական արմատները սկիզբ էին առնում թե՛ Վիլյամ Զ. Սեյմուրի Ազուգա փողոցի արթնությունից Լոս Անջելոսում, թե՛ Չարլզ Ֆոքս Փարիեմի Առաքելական հավատքի միսիայից Հյուսթոնում: Այդ մարդիկ և մեքսիկացի նորադարձները սկսեցին փոքրիկ միսիաներ, որոնք միացան 1914թ.-ի ապրիլին հիմնադրված «Աստծո ժողովներին»: «Ասամբլեաս դե Դիոս» անվանումը կրող ցուցանակները սկսեցին հայտնվել աճող իսպանալեզու բնակչության ունեցող համայնքներում: Լատինաամերիկյան «Աստծո ժողովները» աշխատանքը սկսեցին այնպիսի հովիվներ և ավետարանիչներ, ինչպիսիք էին Էնեմեսիո Ալանիսը, Անտոնիո Ռիոս Մորինը, Անտուֆո Մ. Լոպեսը, Ռոդոլֆո Ս. Օրոսկոն, Պրն. Իսաբել Ֆլորեսը, Ջորջ Ջոյները, Ջոն Փրեստոնը, Ֆելիքս Հեյլը, Մ. Մ. Պինտոնը և այլոք ողջ Տեխասի և Հյուսիսային Մեքսիկայի տարածքում: Տաղանդավոր երիտասարդ մեթոդիստ քարոզիչ Հենրի Ս. Բոլլը Տեխասից, ով հոգեգալստական էր դարձել, միաբանեց բոլոր այս ծառայողներին: Բոլլը և Էլիս Ի. Լուսը դարձան մեքսիկացի գաղթականներին ծառայող ամենաակնառու միսիոներները «Աստծո ժողովներում»:

1918թ.-ի վերջում Բոլլը և Ֆլորեսը համախմբեցին իսպանալեզու ծառայողներին և եկեղեցիները՝ «Լատինաամերիկյան համաժողով» կազմելով: Բոլլն անմիջականորեն ղեկավարեց այս համաժողովն այնքան ժամանակ, մինչև որ կոչվեց դրա վերակազմին: Այն վերածվեց Լատինաամերիկյան շրջանի խորհրդի 1929թ.-ին²: Բոլլը շարունակեց առաջնորդել այս շրջանը մինչև 1939թ.-ը, երբ իսպանալեզու ծառայողների նոր սերունդը ստանձնեց իսպանախոս ժողովների առաջնորդությունը:

Այն երկու տղամարդիկ, ովքեր հաջորդեցին Բոլլին՝ Դեմետրիո Բազանը (1939-1958թթ.) և Խոսե Գիրոնը (1959-

1971թթ.), ընդունակ առաջնորդներ էին, որոնք հիմք դրեցին իսպանալեզու հավատացյալների թվի կտրուկ աճի համար ԱՄՆ-ի «Աստծո ժողովներում»: Բազանը և Գիրոնը, և հազարավոր այլ իսպանալեզու քարոզիչներ, ովքեր անխոնջ կերպով աշխատում էին՝ Ավետարանը տարածելու և «Ասամբլեաս դե Դիոսը» կառուցելու համար, հիմնականում անուշադրության մատնվեցին հարանվանության պատմագրության կողմից:

1979թ.-ին Վիկտոր Դե Լեոնը գրեց «Լուռ հոգեգալստականները. քսաներոյ դարի իսպանալեզու բնակչության միջև տեղի ունեցած հոգեգալստական շարժման կենսագրական պատմություն» աշխատությունը: Սա «Աստծո ժողովների» իսպանախոս հետևորդների մասին պատմելու առաջին ակնառու փորձն էր: Դե Լեոնը փաստեց, որ իսպանալեզու քրիստոնյաների թվացյալ լուռության պատճառը պատմության գրքերի մեջ ոչ թե ծառայողական կամ ավետարանչական գործունեության պակասն էր, այլ ամերիկյան հասարակության անտարբերությունը լատինաամերիկացիների հանդեպ, և «Աստծո ժողովները» բացառություն չէր այս կանոնից: Նա հույս ուներ, որ իր պատմությունը ճանապարհ կհարթեր Լատինաամերիկյան «Աստծո ժողովների» իրադարձությունների հետագա վերապատմումների համար:

Այս պատմական աշխատությունը գերազանց հիմք էր, որի վրա կառուցեցին այլ մարդիկ: 2014թ.-ին ես պատասխանեցի Դե Լեոնի կոչին՝ գրելով Լատինաամերիկյան Աժ-ի պատմությունը 1914-ից 2014թթ.-ը, որի վերնագիրն էր. «Լատինաամերիկացի հոգեգալստականներ. Հավատքը և քաղաքականությունը՝ գործողության մեջ»: Այս հոդվածը, որը ներկայացնում է քաղվածքներ իմ գրքից, պատմում է Բազանի և Գիրոնի մասին, ովքեր Լատինաամերիկյան շրջանի առաջին վերակազմներն էին:

Դեմետրիո Բազան

Դեմետրիո Բազանի հայրը՝ Մոդեստոն, ով ծնվել էր 1900թ.-ի դեկտեմբերի 22-ին³ Մեքսիկայի Տամաուլիպաս նահանգի Լա Պեսկա քաղաքում, ձկնորս էր, իսկ մայրը՝ Դյուրես Պեյան, տնային տնտեսուհի էր: Նրանց ընտանիքում շրջադարձային փոփոխություն տեղի ունեցավ, երբ Դեմետրիոն ինը տարեկան էր: Նրա հայրը մահացավ, իսկ նրա մայրն այլևս չէր կարողանում հոգ տանել նրա համար: Նա որդեգրվեց մի հարուստ ընտանիքի՝ Ռաֆայել և Էպիմենիա դե լոս Սանտոս Կոյերի կողմից:

Ռաֆայելը գործարարական ջիղ ուներ, ինչը գործույթ և կենսունակ բնավորություն ձևավորեց Դեմետրիոյի մեջ: Տար-

LA LUZ APOSTOLICA

LA ENTRADA DE TUS PALABRAS ALUMBRA

Año XXV, San Antonio, Texas, Octubre de 1949 Número

TIEMPO PRECIOSO



El Hno. D. BAZAN, Superintendente del Concello tomará parte muy activa en esta fiesta.



JOSUE CRUZ, Pastor del Templo Cristiano y Secretario del Concello.



La Seita, RUTH R. BAZAN estará a cargo de la Música y Cantos especiales de esta fiesta espiritual.



EL TEMPLO CRISTIANO, Calles El Paso y Sur Cibola, San Antonio, Texas. Lugar donde será la fiesta Noviembre 10-17, 1940. En el retrato de izquierda a derecha, Josue Cruz, H. C. Ball y G. V. Flores, Presbítero de la Conferencia Fronteriza, quien también dará su ayuda en estos cultos.



El Hno. H. C. BALL, Vice-Superintendente del Concello al para esa fecha en el salido de San Antonio también nos ayudará.

VENGAN TODOS

Tiempo precioso, tiempo de bendiciones celestiales, tiempo de lluvias del Espíritu Santo, tiempo de Sanidades, tiempo de refrigerio espiritual, y sobre todo tiempo de descanso a los pies de Cristo para los fatigados siervos de Dios, será el tiempo que prepara El Templo Cristiano de San Antonio, Texas de donde es pastor el Hno. Josue Cruz, los días 10-17 de Nov. de 1940.

Nuestro Hno. Cruz ha sentido que es la voluntad de Dios que todo el pueblo de Dios tenga en tiempo de reunión especial, y desde luego extier una muy cordial y calurosa invitación a todos nuestros hermanos en toda nuestra fraternidad. Los miembros del Templo Cristiano ofrecen todos los que vengan de afuera dormitorios y (Pasa a la página 10)

Դեմետրիո Բազանը, Խոսե Կրուզը, Ռուս Բազանը և Հ. Ս. Բոլլը «Լա լուզ ապոստոլիկա» («Առաքելական լույս» իսպ.) թերթի 1940թ.-ի հոկտեմբերի համարի կազմի վրա: Բոլլն այս պարբերականի հեղինակը և խմբագիրն էր 1916թ.-ից: «Ֆլաուեր» հոգեգալստական ժառանգության կենտրոնը գտել և թվայնացրել է «Լա Լուզ Ապոստոլիկայի» 330 տարբեր համարներ (1936-1973թթ.), որոնք անվճար հասանելի են իր ինտերնետային կայքում: ՖՀԺ-ն չունի մինչև 1940թ.-ը լույս տեսած համարների մեծ մասը: Եթե ձեզ մտ կան «Լա Լուզ Ապոստոլիկայի» հին համարներ, խնդրում ենք, կապ հաստատեք ՖՀԺ-ի հետ:

բեր ժամանակներում նրա հայրն ուներ բար, հագուստի, արծաթյա իրերի և մթերային խանութներ: Նա նույնպես աշխատել էր որպես փոստատար և ժամագործ: Կար ժամանակ, երբ նա երեք շաբթ ջորի ուներ, որոնք պարեն էին տեղափոխում քաղաքից քաղաք: Նա առևտրական էր: Քրջնաջան աշխա-

տանքը, մեքսիկական հումորի առողջ չափը և ձեռնարկատիրական բնավորությունը դե լուս Սանտոսների ապրանքանշաններն էին, և այս հատկանիշները փոխանցվեցին նաև Բազանին: Երբ Մեքսիկական հեղափոխության հրդեհը բռնկվեց երկրի ողջ հյուսիսում, դե լուս Սանտոս Կոյ ընտանիքը, հազա-

րավոր այլ մարդկանց պես, փախուստի դիմեց դեպի Մատամորոս քաղաքը Տամաուլիպասում, որը բաժանվում է Տեխաս նահանգի Բրաունսվիլ քաղաքից Ռիո գրանդե գետով: Ռաֆայելը մթերային խանութ բացեց այդտեղ: Ընտանիքի հույսերը նոր կյանքի մասին փշրվեցին այն բանից հետո, երբ հեղափոխական գեներալ Վենուստիանո Կարրանսայի զորքերը ներխուժեցին այդ քաղաք և ամբողջովին կողոպտեցին այն: Նրանց խանութը նույնպես կողոպտվեց: Ընտանիքը փախուստի դիմեց դեպի Բրաունսվիլ՝ անցնելով սահմանը: Այդտեղ նրանք ապրեցին Ռաֆայելի հորեղբորորդի Մանուելի տանը, մինչև որ հաստատվեցին Սարիտայում Տեխասում:

Ընտանիքն աշխատանք գտավ Քինգսվիլի երկաթուղում և բամբակի դաշտերում՝ մոտ այն տեղին, որտեղ Հենրի Ս. Բոլլն անցկացնում էր իր վրանային ծառայությունը: Բազանները ծանոթացան Բեյլի հետ, քանի որ Դեմետրիոյի մայրը՝ Դյուրտեը, վճանում էր նրա հագուստը: Բոլլը եկեղեցի հրավիրեց նրան: Ժամանակի ընթացքում Բոլլի ուղերձները թափանցեցին նրանց սրտերը, և 1917թ.-ի աշնանը Դեմետրիոն առաջ գնաց ապաշխարության կոչերից մեկի ժամանակ և ընդունեց Հիսուս Քրիստոսին որպես իր Փրկիչ և Տեր: Դեմետրիոն վերստին ծնվեց: Բոլլն աշակերտեց և կարգապահության վարժեցրեց նրան (պատանի հասակում Դեմետրիոն սիրում էր չար կատակներ անել, օրինակ՝ կատու շարտել մարդկանց վրա Բոլլի կիրակնօրյա առավոտյան երկրպագության ծառայություններին):

Ինչ վերաբերվում էր կարգապահ քրիստոնեական կյանք ապրելուն, Դեմետրիոն Բոլլի խնամարկյալն էր ամեն առումով: Բոլլը սովորեցրեց նրան, թե ինչպես անգիր հիշել Աստվածաշնչյան խոսքեր, իսկ 1918թ.-ին՝ այն բանից հետո, երբ սկսվեց Դեմետրիոյի ինքնուրույն կյանքը, Բոլլը թույլ տվեց Դեմետրիոյին մի սենյակ վարձել իր տանը՝ մանր տնային գործեր կատարելու դիմաց: Շատ ժամանակ չանցավ, մինչ Դեմետրիոն հանդիպեց և սիրահարվեց գեղեցիկ մեքսիկոհի Մանուելիտա (Նեյլի) Տրևինյոին, ով ծնվել էր Հելոստեսում Տեխասում, և նույնպես եկեղեցու անդամ էր:

Նեյլին ծնվել էր 1898թ.-ի նոյեմբերի 19-ին⁴: Նրա մայրը մահացել էր 1914թ.-ի դեկտեմբերին՝ խոր վիշտ և ընկճվածություն պատճառելով Նեյլին: Այդ ընկճվածությունը տեղի տվեց հույսի ավելի ուժգին զգացողության այն բանից հետո, երբ Աժ ավետարանիչներ Մ. Մ՝ Պինսոնը և Ռ. Դ. Բեյլերը սկսեցին վրանային հավաքույթներ անցկացնել Սան Անտոնիոյում ոչ շատ հեռու այն վայրից, որտեղ նա ապրում էր իր կրտսեր եղբայրների և քույրերի հետ⁵: Պինսոնը վերապրել էր հոգեգալստական փորձառությունը Գաստոն Բ. Քեշվելի փրձոցով, ով մասնակցել էր Ազուլգա փողոցի արթնության հավաքույթներին և տարածում էր Հոգեգալս-

տական ուղերձը երկրի ողջ հարավային մասում: Այս փաստը ևս մեկ հոգևոր կապ հաստատեց Սեյմուրի առաջնորդությամբ տեղի ունեցած տեղի ունեցած Ազուգա փողոցի արթնության և Տեխասում գտնվող Լատինաամերիկյան ԱԺ-ի միջև:

Հայտնի է, որ առաջին վրանային հավաքույթի ժամանակ Նեյլին խնդրեց Հիսուսին ներել իր մեղքերը և լինել իր փրկիչը և Տերը: Նա գրեց այն մասին, թե ինչպես գտավ լավատեսություն և նոր նպատակ կյանքում, և շուտով կանչվեց որպես ավետարանիչ իսպանալեզու ժողովուրդների մեջ⁶: Նա և Դեմետրիոն ընկերներ դարձան, և որոշ ժամանակ անց ամուսնացան (1920թ.-ի փետրվարի 18-ին): Բոլլն անցկացրեց նրանց պատկառությունը նորակառուց Սան Անտոնիոյի եկեղեցում՝ Տեմպլո Կրիստիանոյում, որը կառուցվել էր ԱԺ մեքսիկացի ավետարանիչների (օրինակ, Անուֆիո Մ. Լոպեսի, և այլոց) նախկինում իրականացրած հոգևոր աշխատանքի վրա:

Բոլլի հոգաբարձության ներքո

Եվ Դեմետրիոն, և Նեյլին զգում էին, որ կանչված էին ծառայության համար: Նրանք միասին ծառայության նշանակվեցին 1920թ.-ի հունվարի 25-ին՝ իրենց ամուսնությունից պակաս, քան մեկ ամիս առաջ⁷: Ամուսնուն և կնոջը որպես ավետարանչական, միսիոներական կամ հովվական թիմ նշանակելն ընդունված էր Լատինաամերիկյան ԱԺ-ում, և պատմականորեն եղել է այն միջոցներից մեկը, որով կանայք ծառայողական հավատարմագիր էին ստանում: Բազանները մեծ ընտանիք ունեցան, և նրանց երեխաներից շատերը նույնպես ծառայողներ դարձան:

Բոլլն ուղարկեց Բազաններին օգնելու մեկ այլ ծառայողի՝ Ֆրանցիսկո Օլասաբալին, ով գտնվում էր Էլ Պասոյում: Դրանից երեք ամիս առաջ Օլասաբալը խնդրել էր հենց Բոլլին միանալ իրեն, բայց մերժում էր ստացել: Ժամանակը հարմար էր. Օլասաբալի ավետարանչական գործի արդյունքում հարյուրավոր մարդիկ էին դարձի գալիս, և նա հուսահատորեն մշակների կարիք ուներ: Օլասաբալները և Բազանները մտերիմ ընկերներ դարձան՝ կիսելով միմյանց փորձությունները, նեղությունները և ուրախալի պահերը: Արդյունքում, 1922թ.-ին՝ երբ Օլասաբալը լքեց ԱԺ-ն և հիմնեց իր սեփական կազմակերպությունը՝ «Լատինաամերիկյան քրիստոնեական եկեղեցիների խորհուրդը» (ԼԲԵՄ), Բազանները հետևեցին նրանց: Դեմետրիոն ծառայեց մի շարք առաջնորդական դիրքերում և օգնեց խմբագրել և հրատարակել Օլասաբալի «Էլ Մեսանխերո Կրիստիանո» (Քրիստոնյա ավետարար) պարբերականը:

Բազանների հեռանալը պետք է որ խոր ցավ պատճառեր Բոլլին: Իրականում, Բազանները երբեք հարմարա-

վետ չէին զգում իրենց այն պատճառով, որ ստիպված էին ընտրել Օլասաբալի և Բոլլի միջև: Դեմետրիոն փոխեց իր սրտի դիրքն այն բանից հետո, երբ Նեյլին զգաց, որ նրանք պետք է վերադառնաին ԱԺ: Բազանները վերադարձան Լատինաամերիկյան ԱԺ 1924թ.-ի նոյեմբերին: Բոլլն անչափ ուրախ էր: Բազանն Օլասաբալի ամենակարևոր խնամարկյալներից մեկն էր, և նրա վերադարձը լուրջ վատասության թվե էր Բոլլի համար: Այդ քայլը ոգեշնչեց շատերին՝ անելու նույնը⁸:

Կարճ ժամանակով Քինգսվիլի եկեղեցին միասին հովվելուց հետո Բազանը սկսեց իր շրջիկ ծառայությունը Վերայ. Գվադալուպե Ֆլորեսի հետ: Ինչպես Էնեմեցիո Ալանիսը, Անտոնիո Ռիոս Մորինը, Ֆրանցիսկո Օլասաբալը, Ավգուստին Լոպեսը և այլոք, նրանք

1929թ.-ին, երբ նրանց ծառայությունը բուռն զարգացում էր ապրում, Բոլլը խնդրեց Բազաններին առաջնորդել իր 400 անդամ ունեցող «Տեմպլո Կրիստիանոն» Սան Անտոնիոյում: Այդ առաջարկը հրաշալի թվաց նրանց, մինչև որ Դեմետրիոն չիմացավ, որ եղբայր Բոլլը ծրագրում էր մնալ համայնքում: Նա ասաց, որ պետք է թողնել իր պաշտոնը, քանի որ խիստ զբաղված էր իր հրատարակչական, խմբագրական և ծառայությունների վերահսկման աշխատանքներով: Բազաններին չոգեշնչեց Բոլլի եկեղեցին հովվելու գաղափարը. նրանք գիտեին, որ մշտապես Բոլլի ուշադրության ներքո էին լինելու: Այնուամենայնիվ, նրանք նույնպես գիտեին, որ չէին կարող մերժել Բոլլին: Հասկանալով, որ նա օգնության կարիք ուներ, Բազանը խնդրեց Խոսե Կրուզին դառնալ իր օգնականը:



«Տեմպլո Կրիստիանոյի» համայնքը՝ եկեղեցու առջև, Սան Անտոնիոյում, Տեխասում, 1920թ.-ին: Այս եկեղեցու առաջին հովիվը Հ. Ս. Բոլլն էր, իսկ հաջորդը՝ Դեմետրիո Բազանը:

վրանային ավետարանչական ծառայություններ էին անցկացնում ողջ տարածաշրջանով մեկ: Մրանից հետո Բազանն աշխատանք սկսեց ԱԺ-ի համար Լարեդոյում՝ նոր եկեղեցի հիմնադրելու համար, նախքան Հյուսթոն տեղափոխվելը: Նա 6-9 մետրանոց վրան կանգնեցրեց Կոմմերս և Բաֆֆալո փողոցների անկյունում, և ավետարանչական ծառայություններ սկսեց: Հենց այստեղ նա հանդիպեց Միգել Գիլլենին՝ մի անձնավորության, ով դարձի էր եկել 1916թ.-ին Լոս Ինդիոսում: Բազանների ծառայությունն արագորեն աճեց ընդամենը մի քանի տարում, և նրանք բազմաթիվ ավետարանիչներ ուղարկեցին, որոնց թվում էին Պեդրո և Էլվիրա Պերլեսները, Հորասիո Մենչական և Խոսե Կրուզը, որոնցից բոլորն էլ վառ ծառայողական կարիերաներ կառուցեցին ԱԺ-ում⁹:

Երկուսն էլ ընդունեցին իրենց ուղղված առաջարկները և սկսեցին քրտնաջան աշխատել եկեղեցու աճի համար¹⁰:

Աշխատանքի սկիզբը Կոլորադոյում

Իր սովորության համաձայն, Բազանը շատ ժամանակ էր անցկացնում Աստծո հետ անձնական աղոթքի և շփման մեջ: 1932թ.-ին նա հստակորեն ստացավ Սուրբ Հոգուց, որ պետք է հեռանար Սան Անտոնիոյից և հոգեգալստական աշխատանք սկսեր Դեմվերում՝ Կոլորադոյում, որն իսկական միսիոներական ռազմաճակատ էր լատինաամերիկյան հոգեգալստական շարժման համար: Բազանը պատմեց իր վերապրման մասին Բոլլին, և փաստորեն օգտագործեց այն՝ ասելով, որ Աստված այլ տեղ էր կանչում իրեն: Եկեղեցու խորհուրդը մերժեց Բազանի հրաժարա-



Դեմետրիոս և Նելլի Բազան, 1939թ.

կանը: Այնուամենայնիվ, գիտակցելով, որ Բազանը կարող էր հեռանալ ԱՄ-ից, եթե նրա հրաժարականը չընդունվեր՝ Բոլլը և խորհուրդն օրհնեցին նրան, և Խոսե Կրուսը դարձավ ավագ հովիվ՝ Բազանի փոխարեն: Նրանք ընտրություն չունեին:

Դեմետրիոս Բոլլի ամենատաղանդավոր ծառայողն էր, և մեկ օր, երբ Բոլլը թոշակի անցներ, Դեմետրիոս կարող էր ղեկավարել նրա շարժումը: Բոլլը ղեկավարում էր միջոցների հանգանակումը՝ շարժումը ֆինանսավորելու համար: Թեև Բազանները շնորհակալ էին նրան օգնության համար, դա նույնպես պարտավորեցնում էր նրանց Բոլլի առջև: Սան Անտոնիոյի եկեղեցական համայնքը կապվել էր նրանց հետ: Երբ նրանք դանդաղորեն հեռանում էին քաղաքից մեքենայով, ողջ համայնքը հետևում էր նրանց մինչև քաղաքի ծայրամասերը և ձեռքերով հրաժեշտ էր տալիս՝ ճանապարհելով դեպի նոր աշխատանքի սկիզբը Դեմետրիոսի Մաունթինում, որտեղ նրանք ունեին կատարյալ ազատություն և հնարավորություն աճելու համար¹¹:

Բազանները ժամանեցին 1932թ.-ի սեպտեմբերի 12-ին՝ առանց լուրջ ֆինանսավորման, տաք հագուստի կամ նույնիսկ բնակության վայրի¹²: Նրանք հավատքի քայլ արեցին: Առաջին մարդը, ում նրանք հանդիպեցին Դեմետրիոս, Խոսե Արոյո անունով մի երիտասարդ էր: Արոյոն ասաց Բազանին, որ նախորդ գիշեր նա մի երազ էր տեսել, որում մի տուն գնալու հրահանգ էր ստացել: Առավոտյան նա գնացել էր այդ տուն և հարցրել էր տիրոջը, թե արդյոք այն վարձով է տրվում: Տան տերը դրական պատասխան էր տվել, և արագորեն հանձնել էր Արոյոյին տան բանալիները: Արոյոն փոխանցեց այդ բանալիները

Բազաններին: Բազանների ընտանիքն ապրեց այդ տանը տարիներ շարունակ՝ հավատալով, որ Աստված մատակարարել էր այն, որպեսզի հաստատեր Կոլորադոյում աշխատանք սկսելու իրենց որոշումը¹³: Թեև այսօրվա չափանիշներով դա համարձակ, բայց անմտածված քայլ էր, այս պատմությունը անորոշության մեջ ունեցած պարզ հավատքի և «Աստծո նախախնամության» մասին շարունակ պատմվում է Լատինաամերիկյան ԱՄ-ում:

Բազանները ոչ միայն սկսեցին ԱՄ-ի գործը Դեմետրիոս, այլև գրավեցին մի շարք անկախ հովիվների և միսիաների, որոնց թվում էին Ջ. Ֆ. Մարտեզ (Գրանդ Ջանքշերը), Կառլոս Տրոլսիյոն, Էնրիկե Լուիցերոն, Ագուստին Լոպեսը և Էդվարդո Դուրանը (Գրինլին), և Սալոման Մենդոսան ու Խոսե Ագիլերան (Ջիլլին): Բազանները սկսեցին ԱՄ-ի աշխատանքը Տրինիդադում, Պուերթոյում, և Լա Վետայում, ինչպես նաև զարթականների այլ փոքր բնակավայրերում, որոնք ցրված էին ողջ այդ տարածքում: Բազանների եկեղեցին արագորեն դարձավ ողջ տարածքի մայր եկեղեցին, և տեղական հովիվներից շատերն ընդօրինակեցին Դեմետրիոսի կյանքը, աշխատանքը և նույնիսկ «ոգնի» սանրվածքը: 1939թ.-ին նա տեղափոխեց իր ընտանիքը և Լատինաամերիկյան շրջանի գրասենյակը Էլ Պասո քաղաքի երկաթուղային կենտրոնը, որը մարտավարական տարածք էր: Այդտեղ նա ձգտում էր դարձի բերել այն մեծաքանակ բազմություններին, որոնք տեղափոխվում էին Միացյալ Նահանգներ:

Հայտնի է, որ Դեմետրիոս Բազանը լավ քարոզիչ էր, գերազանց ադմինիստրատոր և վստահ, բայց խոնարհ և ջանասեր առաջնորդ: Թեև նա չէր

ավարտել «Լատինաամերիկյան Աստվածաշնչյան ինստիտուտը» (ԼԱԱԻ), նա ուներ բարձրագույն կրթություն (ինչը չունեի ԼԱԱԻ-ի ուսանողների մեծ մասը): Նա կրթվել էր Բոլլի և Օլասաբալի կողմից և Աստվածաշնչի և քրիստոնեական վարդապետության խորաթափանց աշակերտ էր, հատկապես՝ վերջին ժամանակվա մարզարեությունների: Նրա վարդապետական գիտելիքներն անհրաժեշտ էին դառնում Միարարական առաքելական շարժման հետ եռանդուն բանավեճերի ժամանակ Կոլորադոյում և նրա հովվական ուսուցողական սեմինարների ժամանակ:

Բազանի առաջնորդական ոճը

Շատ առումներով, Բազանի ընտրությունը՝ որպես Լատինաամերիկյան ԱՄ-ի վերակացու, շրջադարձային պահ դարձավ Լատինաամերիկյան ԱՄ-ի պատմության մեջ: Թեև Բազանը և Բոլլն ունեին նույնանման տեսիլք և կազմակերպչական կառուցվածք, ժոտուե Սանչեսը գրում էր, որ նրանք «լիովին հակապատկերներ էին... Եղբայր Բոլլն իշխանական դեր էր ստանձնում՝ պահանջելով, որ ամեն բան արվեր իր ցանկությամբ, այնինչ եղբայր Բազանը շատ ավելի ժողովրդավարական էր եկեղեցին կառավարելու մեջ»¹⁴:

Լատինաամերիկյան ԱՄ-ն աճեց Բազանի ղեկավարության ներքո՝ շնորհիվ նրա ժողովրդավարական ոճի, ավետարանչության հանդեպ ձգտման և հազարավոր մեքսիկացի աշխատավորների ներհուսքի սեզոնային աշխատանքների ծրագրի շրջանակներում, որը սկսվեց՝ լրացնելու համար աշխատուժի պակասը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում¹⁵: Սեզոնային աշխատանքների ծրագիրն աճեց 500 մեքսիկացի պայմանագրային աշխատողից՝ 1942թ.-ին, մինչև ավելի, քան 220.000-ը՝ 1947-ին¹⁶: Այս մեծ ներհուսքն առատ դաշտ տրամադրեց, որից Բազանը և նրա հայրենակիցները հունձք հավաքեցին¹⁷: Ընդամենը երկու տարվա ընթացքում Լատինաամերիկյան ԱՄ-ն աճեց 170 համայնքից և 3.765 անդամից (1939թ.-ին) մինչև 172 եկեղեցի, ավելի, քան 300 ծառայող և 5.344 անդամ (մինչև 1941թ.-ը): Բազանը պնդում էր, որ Լատինաամերիկյան ԱՄ-ի հետևորդների իրական թիվը գերազանցում էր 8.300-ը¹⁸:

Չնայած այս առաջխաղացումներին, Բոլլը դեռ զգալի ազդեցություն ուներ Լատինաամերիկյան ԱՄ-ում: Բազանը մի որոշում կայացրեց, որը պարզորեն ցույց էր տալիս նրա առանձնացումը Բոլլից: Նա տեղափոխեց Լատինաամերիկյան ԱՄ-ի գլխավոր գրասենյակը Սան Անտոնիոյից Էլ Պասո (ավելի, քան 900 կմ. դեպի արևմուտք) 1939թ.-ին, իսկ հետո՝ Նյու Մեքսիկո, 1953թ.-ին: Դրանից հետո նա վերակազմավորեց Լատինաամերիկյան ԱՄ-ն՝ թողնելով Բոլլի 11 համաժողովներից ընդամենը 4-ը: Նա վարձեց չորս լրիվ

ժամանակով աշխատող վերակազմների՝ մասնակի ժամանակով աշխատողների փոխարեն: Արդյունքում բարելավվեցին շրջանի գործունեության վերահսկողությունը և համակարգումը, կանոնավոր ավետարանչական գործունեությունը և հոգևոր հսկողությունը¹⁹:

Երբ երիտասարդ Ջեսի Միրանդան հարցրեց Դեմետրիոս Բազանին, թե ինչու նա տեղափոխեց գլխավոր գրասենյակն այդքան հեռու դեպի արևմուտք, Բազանը պատասխանեց. «Որդիս, մենք բավականին մոտ կմանք Գլխավոր խորհրդին Սփրինգֆիլդում, որպեսզի սովորենք նրանցից, բայց և բավականին հեռու, որպեսզի գործենք մեր կերպով»: Միրանդան նշեց, որ ամբողջական ազատությունը պահպանելու և միևնույն ժամանակ անհրաժեշտության դեպքում ընդհանուր հարանվանության ռեսուրսներից և աջակցությունից օգտվելու կարողությունը Լատինաամերիկյան ԱՄ-ի հաջողության պատճառներից մեկն էր²⁰:

պի Միացյալ Նահանգները: Այստեղ էր գտնվում «Աստծո ժողովների» առաջին «Լատինաամերիկյան Աստվածաշնչյան դպրոցը», որը Ֆրանցիսկո Օլասաբալը բացել էր 1922թ.-ին, թեև այն չէր գործել նույնիսկ մեկ տարի: Այդ դիրքը նույնպես ավելի հեշտացրեց ավետարանչական աշխատանքը Չիկագոյի, Դենվերի և Միջին Արևմուտքի տարածքում գտնվող ուսանողների միջև²¹:

Կալիֆորնիայի շարունակ ավելացող ուսանողներին տեղավորելու համար, 1949թ.-ին նա տեղափոխեց Արևելյան Լոս Անջելեսի ԼԱԱԻ-ն (որը հիմնադրել էր Էլիս Լուր Սան Դիեգոյում 1926թ.-ին) դեպի Կալիֆորնիա նահանգի Լա Պուենտե՝ ընտրելով ավելի մեծ հողատարածք:

Ձգտելով աստվածաբանական կրթություն տալ ծառայողներին և համայնքներին գյուղական աշխատանքային ճամբարներում և գաղթականների բնակավայրերում՝ *կրոնիաներում*, Բազանը գրեթե մեկ տարի անցկացրեց՝ ճանապարհորդելով ճամբարից ճամբար և անցկացնելով «ու-

և որպես վերակազմ»՝ 1939-1958թթ.-ին: Այն ժամանակ, երբ ծառայողները հաճախ էին տեղափոխվում մի ծառայությունից մյուսը, և կյանքի գայթակհությունները դրդում էին շատերին այլ աշխատանքներ փնտրել, Բազանը, ինչպես և Բոլլը՝ նրանից առաջ, կայուն ժայռ էր անհանգիստ ծովում: Իր վստահությամբ, ստեղծարարությամբ և հոգևոր նվիրվածությամբ, նա օրինակ դարձավ հասարակ ծառայողների համար: Հավանաբար, սա նրա, ինչպես և նրա կնոջ՝ Նելլիի մեծագույն պարզևն էր ԱՄ-ին:

Բազանի հեռատես առաջնորդությունը հանգեցրեց Լատինաամերիկյան ԱՄ-ի արագ աճին, և մինչև 1950-ական թվականները այն գերազանցեց Մեթոդիստական և Երիցական լատինաամերիկյան ծառայությունները՝ դառնալով ամենամեծ լատինաամերիկյան բողոքական շարժումը երկրի հարավ-արևմուտքում: Իրականում, Երիցական եկեղեցին տագնապով նշեց, որ այն հարկադրված էր փակել մի շարք եկեղեցիներ 1940-ական և 1950-ական թվականներին «մարդկանց թվի և նյութական աջակցության պակասի» պատճառով, թեև հազիվ թե արժե մտածել, որ Հոգեգալստական շարժման աճը «կրճատեց նրանց մասնաբաժինը»:

Նույն ընթացքում, Լատինաամերիկյան ԱՄ-ը երկրի հարավ-արևմուտքում (չհաշվելով Իսպանալեզու Արևելյան շրջանի տվյալները), աճեց 170 եկեղեցուց և 3.765 անդամից 1939թ.-ին մինչև 325 եկեղեցի, 600 ծառայող և 20.000 անդամ (60.000 հետևորդ) մինչև 1960թ.-ը: 1960-ական թվականների մոտենալուն պես, Բազանը գիտակցեց, որ եկել էր նոր առաջնորդների ժամանակը: Լատինաամերիկյան ԱՄ-ն քսան տարի առաջնորդելուց հետո, նա որոշեց թողնել իր պաշտոնը²³:



«Լատինաամերիկյան Աստվածաշնչյան ինստիտուտ», Տեխաս, 1940-ական թվականներ:

Հարանվանության աջակցությունը ստանալու օրինակներից մեկը 1945թ.-ն էր, երբ Բազանը ցածր գներով ձեռք բերեց գրքեր և ուսումնական նյութեր հովիվներին և եկեղեցու անդամներին աստվածաբանական կրթություն և պատրաստություն տալու համար: Նա բանաձև ընդունեց առաջին անգամ Կիրակնօրյա դպրոցների տնօրենի պաշտոն ստեղծելու մասին, աշխատանքի վերցրեց Էպիֆանիո Ջարամիլոյին և 1948թ.-ին աշխատեց Ջարամիլոյի հետ՝ ստեղծելու համար առաջին ուսումնական ծրագիրը Կիրակնօրյա դպրոցների համար:

Նա կատարեց ևս մեկ համարձակ քայլ, որն ազդարարեց Բոլլից անկախանալու իր ձգտումը. 1945թ.-ին նա տեղափոխվեց ԼԱԱԻ-ը Հարավային Տեխասի Սասպալկոյից դեպի Իսլետա, որը Մեքսիկայի դարպասն էր դե-

տուցումներ ծառայողների համար», ինչպես նաև կազմելով հատուկ սեմինարներ, մասնավորապես՝ վերակազմների համար, ովքեր իրենց հերթին սովորեցնում էին նույնը իրենց համաժողովներում գտնվող ծառայողներին: Բոլոր այս զարգացումները դրդեցին ականատեսներից մեկին ասել, որ Բազանն «այնքան շատ փոփոխություններ» իրականացրեց, որ պարզապես անկարելի էր հաշվել բոլորը²²: Այնուամենայնիվ, ամենակարևոր որոշումը՝ ավելի մեծ անկախության և ինքնավարության ձգտելն էր:

Բազանը բարեխղճորեն ծառայեց ԱՄ-ին և երկարատև ազդեցություն թողեց ողջ շարժման վրա: Թեև նա կարճ ժամանակով աշխատեց Օլասաբալի հետ (1922-1924թթ.), նա ծառայեց ԱՄ-ում որպես հովիվ, ավետարանիչ և եկեղեցիներ հիմնադրող 1920-1939թթ.-ին

Խոսե Գիրոն

Կար երկու առաջնորդ, որոնք բնականորեն կարող էին փոխարինել Բազանին՝ Խոսե Գիրոնը և Ժոսե Բանչեսը: Երկուսն էլ ապացուցել էին իրենց տոկունությունը և հավատարմությունը ծառայողական դաշտում՝ որպես ավետարանիչներ, եկեղեցիներ հիմնողներ և հովիվներ, ինչպես նաև Լատինաամերիկյան շրջանի քարտուղարի պաշտոնում, որը սովորաբար զբաղեցնում են վերակազմու ընտրվելուց առաջ: Այնուամենայնիվ, Սանչեսը չցանկացավ զբաղեցնել այս պաշտոնը: Գիրոնն ընտրվեց որպես Լատինաամերիկյան շրջանի վերակազմու 1958թ.-ին և ստանձնեց ղեկավարությունը 1959թ.-ի հունվարի 1-ին²⁴:

Ի տարբերություն Բազանի, ով մեծացել էր Հոգեգալստական շարժման մեջ, Գիրոնը մեծացել էր Մեքսիկայի Երիցական եկեղեցում: Նա այն բազմաթիվ մեքսիկական ծագում ունեցող ամերիկացի երիցականներից էր, ովքեր այդ

շրջանում միացան Հոգեգալստական շարժմանը: Երիցականներն աշխատանք սկսեցին պատմական Սան Լուիս դաշտավայրում՝ Հարավային Կոլորադոյում, տասնիններորդ դարի վերջում:

Ժամանակի ընթացքում նրանք Մեքսիկական Երիցական եկեղեցի հիմնեցին Դել Նորտեում: Մինչև 1940-ական թվականների կեսերը նրանք սկսեցին անկում նկատել անդամության մեջ: Արդեն նշված պատճառների հետ մեկտեղ, այս անկումը նույնպես տեղի ունեցավ Հոգեգալստական, Ավետարանական և այլ հազարամյակային շարժումների պատճառով:

1930-1935թթ.-ի ընթացքում Դել Նորտեի Երիցական համայնքը մի



Խոսե Գիրոն

փոքր թվային աճ ունեցավ՝ 51-ից 61-ը: Այնուամենայնիվ, նրանք չունեցան խոշոր թվային աճ, և ընդհանուր Լատինաամերիկյան Երիցական շարժման անդամները հարավ-արևմուտքում պակասեցին 3.874-ից 3.444-ի²⁵: Երբ Գիրոնն առաջին անգամ հանդիպեց հոգեգալստականներին Դել Նորտեում 1932թ.-ին, մեքսիկական երիցականների աշխատանքը մի փոքր արթնություն էր ապրում, այնպես որ նրա համար պետք է որ գրավիչ լինեին հոգեգալստական արթնության ծառայությունները:

Արթնության պատճառով, մեքսիկական երիցական առաջնորդները

մշտապես երիտասարդ առաջնորդների էին որոնում: Գիրոնի հետաքրքրությունն Աստվածաշնչով գրավեց նրա հովվի՝ Մանուել Մանչեսի ուշադրությունը: Նա խրախուսեց Գիրոնին մասնակցել սեմինարիայի դասերին և ասաց, որ եկեղեցին որոշել է «հոգավ նրա բոլոր ծախսերը»: Այնուամենայնիվ, Գիրոնը համոզված չէր, որ պետք է ծառայող դառնար: Նա սեր ուներ գործարարության և սպորտի հանդեպ: Այն աղքատությունը, որը նա տեսնում էր իր շուրջը, ամեն օր հիշեցնում էր նրան, թե ինչից էր նա ցանկանում խուսափել: Թեև նա հետաքրքրված էր Աստվածաշնչով, նա նույնպես հասկանում էր, որ ծառայությունը դժվար աշխատանք էր, որը հաճախ արվում էր առանց երկրային վարձատրությունների²⁶:

Վճռական շրջադարձային պահը եկավ այն ժամանակ, երբ Աժ ավետարանիչ Փոլ Ջոնսը եկավ նրա քաղաք և փողոցային ավետարանչություն սկսեց: Նա բրոշյուրներ էր բաժանում մարդկանց, և հենց այդ ժամանակ նա հրավիրեց Գիրոնին իր արթնության ծառայություններին: Ծառայություններից մեկի վերջում՝ 1932թ.-ի Փետրվարի 3-ին, Գիրոնը Ռ. Դ. Ջոնս անունով մի մեթոդիստ ծառայողի հետ ընդունեց մկրտությունը Սուրբ Հոգով²⁷:

Գիրոնը գերազանց նորադարձ էր Հոգեգալստական շարժման համար՝ խելացի, կրթված, սպորտային կազմվածքով և պատկառելի արտաքինով: Նա անմիջապես սկսեց նմանակել այդ ավետարանչին՝ փորձելով դարձի բերել իր ընկերներին և համոզել իր ընտանիքին ընդունել մկրտությունը Սուրբ Հոգով, և արդյունքում «թանկ մարդիկ սկսեցին ընդունել Տիրոջ հոգևոր օրհնությունները»: Այս ամենի պատճառով, Ջոնսը գովասանական նամակ գրեց Բոլլին՝ առաջարկելով ծառայության նշանակել Գիրոնին: Զարմանալի է, որ Բոլլը համաձայնվեց, և առանց նույնիսկ հանդիպելու Գիրոնին կամ ստուգելու նրա վարդապետական համոզմունքները՝ Աժ-ի ծառայողական արտոնագիր ուղարկեց նրան 1932թ.-ի հունիսի 29-ին: Ծնվեց ևս մեկ մեքսիկական ծագում ունեցող ամերիկացի հոգեգալստական առաջնորդ²⁸:

Ավետարանիչ և եկեղեցիներ հիմնադրող

Շեղվելով իր նորագյուտ կոչմանը՝ Գիրոնը ավետարանչական և արթնության ծառայություններ էր անցկացնում ողջ հարավային Կոլորադոյում և հյուսիսային Նյու Մեքսիկոյում: Նա սկսեց եկեղեցիներ հիմնել. նա իսպանալեզու Աժ եկեղեցի սկսեց իր հայրենի քաղաքում՝ Դել Նորտեում (1932-1933թթ.), և հովվեց այն մոտ մեկ տարվա ընթացքում, մինչև շրջիկ ավետարանչի ծառայություն սկսելը: Հաջորդ տասնամյակի ընթացքում նա հիմնեց և հովվեց

ութ եկեղեցի Ալամոսայում՝ Կոլորադոյում (1934-1935թթ., 1944-1945թթ.), Քվետտայում՝ Նյու Մեքսիկոյում (1935-1938թթ., 1942-1943թթ.), Սանտա Պաուլայում՝ Կալիֆոռնիայում, Մակ-Ֆիում՝ Կալորադոյում, Տաոսում՝ Նյու Մեքսիկոյում, Սենթերում՝ Կոլորադոյում, և Չամայում՝ Նյու Մեքսիկոյում²⁹:

Այս ընթացքում նա նույնպես շարունակեց կրթություն ստանալ: 1943թ.-ին նա ծառայեց որպես փոխարինող ուսուցիչ «Տաոս» նախակրթական դպրոցներում, իսկ 1944-1946թթ.-ին հեռակա կրթություն ստացավ և ավարտեց «Լայթ Հաուս» Աստվածաշնչյան քոլեջը Ռոքֆորդում, Իլլինոյսում՝ աստվածաբանական աստիճան ստանալով: Նա եռանդուն կերպով խրախուսում էր կրթությունը և գովում էր լատինաամերիկացի երիտասարդներին, ովքեր ընդունվում էին «Լատինաամերիկյան Աստվածաշնչյան դպրոցներից» մեկը կամ «Լատինաամերիկյան Աստվածաշնչյան սեմինարիա»:

Գիրոնի ավետարանչական և եկեղեցիներ հիմնելու աշխատանքը բնականորեն առաջխաղացում բերեց նրան, և նա սկսեց ծառայել Բազանի քարտուղարի պաշտոնում 1947-ից 1959թթ.-ը: Մինչ Բազանը շեշտադրում էր ռիսկը, Գիրոնը աստիճանական փոփոխության կողմնակից էր: Հիմնական պատճառն այն էր, որ լատինաամերիկացի ծառայողները մեծ մասամբ հավանություն չէին տալիս ծայրահեղ փոփոխություններին, քանի որ հաշվի էին առնում իրենց անկայուն պայմանները: Այս աստիճանական մոտեցումը նույնպես որոշ չափով արտացոլում էր Գիրոնի երիցական դաստիարակությունը, ըստ որի ամեն ինչ պետք է արվեր պարկեշտորեն և կարգով: Լատինաամերիկյան Աժ-ն առաջնորդելու և ղեկավարելու այս չափավոր մոտեցումը բարի ծառայություն մատուցեց թե՛ նրան, թե՛ ողջ շարժմանը:

Առաջին դժվարություններից մեկը, որին նա բախվեց, այն փաստն էր, որ Լատինաամերիկյան Աժ-ն ղեռնա թույլ կապակցված համաժողովների խումբ էր՝ առանց որևէ սահմանադրության կամ կանոնադրության: Այս խնդիրը լուծելու համար, 1960թ.-ին էլ Պասոյում կայացած Սահմանադրական համաժողովի ժամանակ Գիրոնն ավարտեց այն գործընթացը, որը սկսել էր Բազանը՝ պահանջելով ամեն համաժողովի կազմել և ընդունել սեփական սահմանադրությունը և կառավարման կանոնադրությունը:

Թեև ոմանք վախենում էին, որ ամեն համաժողովին սեփական սահմանադրությունը ստեղծելու իրավունք տրամադրելը կարող էր ապստամբություն և հնարավոր հերձվածություն առաջացնել, այդպես չեղավ: Այնուամեն

նայնիվ, այս որոշումը խոշոր և վտանգավոր ձեռնարկություն էր, որը Գիրոնի առաջնորդական դիրքի և համաժողովների հավատարմության և աջակցության իսկական ստուգում էր: Այնուամենայնիվ, առաջնորդները գիտեին, որ լատինաամերիկացիները նախընտրում էին եղբայրական հարաբերություններն ավելի, քան լիարժեք անկախությունը, որը կարող էր տանել մեկուսացմանը, ռեսուրսների պակասին և այլ դժվարությունների: Ավելին՝ քանի որ համաժողովներն արեցին սա միասին և հիմնականում ներդաշնակ կերպով, երբ բոլորը մեկտեղ հավաքված էին, և քանի որ նրանք կազմում էին իրենց սահմանադրությունները և կանոնադրությունները որպես օրինակներ, տարօրինակ կերպով դա ավելի մոտեցրեց նրանց ընդհանուր Լատինաամերիկյան շրջանին և Գլխավոր խորհրդին: Արդյունքում, ինչպես գեկուցեց Դե Լեոնը, մարդիկ ավելի մտերմորեն կապվեցին ԱՄ-ի հետ, որովհետև նրանց պարզորեն ներկայացվեցին իրենց լիազորությունները և սահմանափակումները»³⁰:

Համաժողովների միջև ներդաշնակության արտահայտիչ զգացում էր ձևավորվել, քանի որ նրանք փոխառություններ էին անում մեկը մյուսից՝ իրենց կանոնադրությունները կազմելու համար: Միգուցե ավելի կարևոր դեր խաղաց այն, որ վերակազմավորման պատճառով ամեն մի համաժողով կարողացավ լրիվ ժամանակով աշխատող վերակացու ունենալ, ով ի վիճակի էր լինելու հոգևոր վերահսկողություն իրականացնել և երկարաժամկետ տեսիլք կունենար իրենց համաժողովի համար: Մասնակիցները նույնպես համաձայնվեցին ֆինանսավորել իրենց չորս նոր վերակացուներին, որպեսզի նրանք կարողանային մասնակցել Գլխավոր խորհրդի հավաքույթներին: Այս ծառայողները հաճախ չէին կարողանում մեկնել այդ հավաքույթներին իրենց հովվական անհետաձգելի պարտականությունների և միջոցների բացակայության պատճառով:


Գիրոնը մի շարք կարևոր ներդրումներ արեց Լատինաամերիկյան ԱՄ-ի աճի և զարգացման համար: Ինչպես Բազանն իրենից առաջ, նա խթանեց ավետարանչությունները, արթնության ծառայությունները և նոր եկեղեցիների հիմնադրումը: Նա առաջին վերակացուն էր, ով Էպիֆանո Ջարմիլոյի օգնությամբ ընդունեց «Եկեղեցիների ընդլայնման ծրագիրը» իր շրջանում: Նրա հատուկ նպատակն էր՝ միջոցներ հանգանակել նոր լատինաամերիկյան ԱՄ եկեղեցիների կառուցման համար, հաճախ մանրադրամով դրամահավաքի կամ մեքսիկական լավաշիկներ վաճառելու միջոցով:

Նա նույնպես ձգտում էր լրացնել ծառայողների կարիքները, և երբեմն

օգտագործում էր իր միջոցները՝ այլ մարդկանց օգնելու համար: Նա այսպես վարվեց մի հովվի հանդեպ, ով սկսել էր շրջանի աշխատանքը Ֆրեզնոյում: Գիրոնը 100 դոլարի չեք ուղարկեց այդ հովվին իր անձնական միջոցներից, երբ նրա կինը երեխա էր ունեցել: Այս լուռ քայլը, հայտնի դառնալուն պես, արժանացավ անթիվ ծառայողների գովեստի: Նրա անձնագրի առատաձեռնության համբավը այս և շատ այլ դեպքերում կարողություն տվեց նրան շահելու հովիվներին և մարդկանց հավատարմությունը³¹:

Գիրոնի անցյալը նույնպես դրդեց նրան կարևորել կրթությունը: Իր պաշտոնավարության ընթացքում նա, Էպիֆանո Ջարամիլոն, Խուան Ռոմեռոն, Խոսե Լեյվան և Ալբեր Բազանը (Դեմետրիոսի և Նելլիի որդին) նոր կրթական ծրագրեր սկսեցին: 1962թ.-ին նրանք կազմեցին առաջին ազգային Լատինաամերիկյան ԱՄ Կիրակնօրյա դպրոցների կրթական մակարդակի չափանիշները և ուսումնական ծրագիրը, որն իրականում ավելի մեծ ժողովրդականություն վայելեց լատինաամերիկացիների մոտ, որովհետև ԱՄՆ-ում ծնված երեխաները գերադասում էին անգլերեն խոսել: Սա Կիրակնօրյա դպրոցի դասընթացի ձևաչափի առաջին խոշոր վերանայումն էր 1935թ.-ի կազմությունից հետո: Նրանք նույնպես թարգմանեցին իսպանարենով ավելի շատ գրքեր, այլ գրականություն, բրոշյուրներ և Կիրակնօրյա դպրոցի ուսումնական նյութեր, որոնք թողարկել էր Գլխավոր խորհուրդը՝ մայր կազմակերպության հետ ավելի մեծ աստվածաբանական ներդաշնակություն ունենալու համար: Շարունակելով այն աշխատանքը, որը սկսել էր Բազանը՝ 1966թ.-ին Գիրոնը նշանակեց շրջանի առաջին Միսիոներական քարտուղարին (Ալբեր Բազանին), Ծառայողների գնահատանքի ծրագիր սկսեց, և վերահսկեց Իսպանալեզու Արևելյան համաժողովի պաշտոնական բաժանումն առանձին Իսպանալեզու Արևելյան շրջանի 1956թ.-ին: Բոլոր այս գործերի մեջ նա շարունակում էր կառուցել այն հիմքի վրա, որը դրել էր Բազանը:

Չնայած չափավոր քայլերի կողմնակից լինելուն՝ Գիրոնը նույնպես գիտակցում էր, որ ժամանակն էր, որ Լատինաամերիկյան ԱՄ-ն իրագործեր Օլասաբալի, Բազանի և իրենից առաջ եղած անթիվ ծառայողների երազանքները: Ժամանակն էր բաժանել ամեն մի համաժողովն առանձին շրջանի՝ եվրոպական և ամերիկյան ԱՄ շրջանների օրինակով: Սա ռիսկային առաջարկ էր, բայց սևամորթ և մեքսիկացի ամերիկացիների քաղաքացիական իրավունքների շարժումները, հավասար իրավունքների աճող պահանջների հետ մեկտեղ, որոնք



Լատինաամերիկացի հոգեգալստականներն Ամերիկայում

Հավաքը և քաղաքականությունը՝ գործողության մեջ

Գաստոն Էսպինոզա

«Խթանող, առասպելներ փարատող և ճշմարտացի աշխատություն: Այն, որ Էսպինոզան ներկայացրել է Լատինաամերիկյան «Աստծո ժողովների» պատմությունն ավելի լայն հասարակական-մշակութային շրջանակում, նորարարական, արդիական և մարգարեական է: Այս գիրքն անհրաժեշտ է ընթերցել:»

– Էլդին Վիլաֆանյե, «Գորդոն-Կոնվեթ» Աստվածաբանական սեմինարիա

«Բեկումային հետազոտություն, որը տարիներ շարունակ ոսկե չափանիշ է լինելու նմանատիպ թեմաների համար:»

– Ջեսի Միրանդա, տնօրեն, «Միրանդա» կենտրոն՝ իսպանալեզու առաջնորդների համար, «Վանգարդ» համալսարան

Վերջապես, մենք ունենք լուրջ ուսումնասիրությունների վրա հիմնված և սպառիչ պատմություն Միացյալ Նահանգներում իսպանալեզու հոգեգալստական աշխատանքի աճի և զարգացման մասին:»

– Ռաֆայել Ռեյես, Վերակացու (վաստակավոր), ԱՄ Իսպանալեզու Արևելյան շրջան 35.00 \$



Harvard University Press

HARVARD UNIVERSITY PRESS
www.hup.harvard.edu



Լատինաամերիկյան շրջանի խորհրդի գլխավոր երեցների հավաքույթը «Տեմպլո Բետանիայում»՝ Ալբուկերկեում, Նյու Մեքսիկոյում, 1954թ.-ի նոյեմբերի 18-ին: Կանգնածները (ձ-ա). Անհայտ, Ժոսուե Սանչես, անհայտ, Ռոբերտ Ավիտիա, Տեոդորո Բուենո, Դանիել Էնրիկես: Նստած (ձ-ա). Ալբերտո Գամես, չորս անհայտ անձինք, Դեմետրիո Բազան, Սիմոն Ֆրանկո, անհայտ, Կենզի Սավաջ, անհայտ, Հ. Ս. Բոլլ և Խոսե Գիրոն:

ներկայացվում էին Ռեյես Լուպես Տիխերինայի նման նախկին Աժ ավետարանիչների կողմից, սկսում էին դանդաղորեն ազդել Լատինաամերիկյան Աժ-ի առաջնորդների վրա և այն բանի վրա, թե ինչպես էին նրանք տեսնում իրենց դերն Աժ-ում:

Այն պայքարները ծայնի համար, որը նրանք վարել էին նախկինում, և այդ ժամանակվա հասարակության մեջ տեղի ունեցող պայքարները հող պատրաստեցին սրընթաց փոփոխությունների համար: Սա հեշտ չէր ընդունելը, որովհետև շատ լատինաամերիկացի հովիվներ և առաջնորդներ գերադասում էին, որ փոփոխությունը տեղի ունենար փոքր, սահմանափակ չափերով: Այնուամենայնիվ, Գիրոնը հասկացավ, որ նա և Լատինաամերիկյան Աժ-ն չէին կարող շարունակել իրենց աճը ներկա տեմպերով՝ մնալով որպես մեկուսացված շարժում ընդհանուր կազմակերպության մեջ: Աժ-ն և լատինաամերիկացիները պետք է փոխվեին ժամանակին համընթաց:

1970թ.-ի օգոստոսի 19-21-ին, Շրջանի խորհրդի 46-րդ հավաքույթին Ալբուկերկեում, Նյու Մեքսիկոյում, Գիրոնը հայտարարեց, որ ծրագրում է թողնել վերակացուի պաշտոնը: Ինչպես նշում է Դե Լեոնը «*Լուռ հոգեգալստականներում*», նա բերեց երեք պատճառ: Առաջինը՝ չնայած նրա ողջ աշխատանքին, Լատինաամերիկյան Աժ-ն «չէր լրացնում մարդկանց կարիքները»:

որովհետև կային բազմաթիվ ծառայողներ և եկեղեցիներ, ում հանդեպ անհրաժեշտ էր արդյունավետ վերահսկողություն իրականացնել, բայց մեկ շրջանը՝ չորս համաժողովներով, չափից ծավալուն աշխարհագրական տարածք էր ընդգրկում այդ անելու համար: Երկրորդը՝ նա ցանկանում էր կենտրոնանալ ողջ երկրով մեկ ավետարանչական ծառայություններ անցկացնելու և խարիզմատիկ նորոգում իրականացնելու վրա վրա, ոչ թե շրջանը ղեկավարելու: Եվ վերջապես, նա համոզված էր, որ Աստված էր ցանկանում, որ ինքը թողներ իր պաշտոնը³²: Եկել էր նոր ուժերի և թարմ առաջնորդության ժամանակը:

Լատինաամերիկյան շրջանների ծնունդը, 1971թ.- մինչ օրս

Ծառայողները ցնցված էին: Նրանք խնդրեցին Գիրոնին մնալ վերակացուի պաշտոնում: Հասկանալով, որ նրա ուժերը սպառվել էին աշխատանքի՝ շրջանը տվեց նրան երկու ամսվա վճարվող արձակուրդ և 1.000 դոլարի սիրո գոհաբերություն³³: Նա համաձայնվեց մնալ ևս մեկ տարով՝ այն պայմանով, որ նրանք համաձայնվելու էին իր առաջարկներին, հատկապես գոյություն ունեցող չորս համաժողովներն առանձին շրջանների բաժանելու պահանջին, այնպես, որ իրանցից ամեն մեկն ունենար թե՛ լրիվ ժամանակով աշխատող վերակացու, թե՛ ադմինիստրատիվ աջակցության համակարգ: Սա

հնարավորություն կտար լինել ավելի ստեղծարար և ապահովել ավելի արդյունավետ վերահսկողություն և հաշվետվողականություն: Նա համոզված էր, որ այս ամենի արդյունքում ողջ շարժումը կաճեր և ավելի պտղաբեր կդառնար: Չնայած այն փաստին, որ Գիրոնի ղեկավարության ներքո Լատինաամերիկյան շրջանի խորհուրդն արդեն իսկ ակնառու աճ էր ունեցել՝ հասնելով 403 եկեղեցու, 827 ծառայողի և 21.000 անդամի 1970թ.-ին, Խորհուրդը համաձայնվեց նրա պայմաններին³⁴:

Նրանք հայտնեցին իրենց որոշման մասին Գլխավոր վերակացուին Սփրինգֆիլդում՝ Թոմաս Ֆ. Ցիմմերմանին: Նա համաձայնվեց: Այնպես որ, 1971թ.-ի նոյեմբերի 10-11-ին՝ Շրջանի խորհրդի 47-րդ հավաքույթին, նրանք պաշտոնապես թույլ տվեցին ամեն մի համաժողովի վերակառուցել ինքն իրեն լիարժեք շրջանի՝ նման Աժ-ի աշխարհագրական և մյուս լեզվական շրջանների: Չորս նոր տարածքները և վերակացուները հետևյալն էին. Ժոսուե Սանչեսը՝ Ծովածոցի շրջանի վերակացու (142 եկեղեցի, 254 ծառայող), Նեստոր Բազանը՝ Կենտրոնական Լատինաամերիկյան շրջանի վերակացու (92 եկեղեցի, 163 ծառայող), Ջեֆերիսոն Կաբելլոն՝ Միջին արևմուտքի շրջանի վերակացու (37 եկեղեցի, 46 ծառայող), և Խոսե Գիրոնը՝ Խաղաղովկիանայան լատինաամերիկյան շրջանի վերակացու (142 եկեղեցի, 364 ծառայող): Արջի Մարտինսը ստացավ ԼԱԱԻ-ի վերակացուի պաշտոնը Էլ Պասոյում: Տեխասի Աստ-

վածաշնչյան դպրոցը ծառայելու էր Ծովածոցի և Կենտրոնական շրջաններին, իսկ Կալիֆորնիայի Աստվածաշնչյան դպրոցը՝ Խաղաղօվիկիանոսյան շրջանին: Հիկազոյի ԼԱԱԻ-ին ընդգրկվել էր Միջին արևմուտքի շրջանի կազմում: Գիրոնն ընտրվեց որպես Լատինաամերիկյան Ընկերության տնօրեն, և Ա. Ֆ. Վիջիլը՝ քարտուղար: Գիրոնին խնդրեցին օգնել՝ կազմելու նոր շրջանային սահմանադրությունը չորս շրջանների համար³⁵: Իսպանալեզու Արևելյան շրջանի հետ մեկտեղ, այժմ «Աստծո ժողովներում» կար հինգ անկախ և ինքնավար լատինաամերիկյան շրջան, բոլորն իրենց եվրոպական և ամերիկյան անդամակիցների օրինակով, առնվազն տեսականորեն:

1971թ.-ի պատմական հավաքույթին Չարլզ Վ. Հ. Սկոտը՝ «Աստծո ժողովների» ներքին միսիայի գործադիր տնօրենը և հյուր քարոզիչը, պատվեր տվեց նոր շրջանների վերակազմության և կարողաց այն հաստատել Աստվածաշնչից, որտեղ գրված էր Մովսեսի հանձնարարականը Հետոին, մինչև նրա մուտքը Խոստման երկիր: Տիրոջ անունով, նա կոչ արեց վերակազմությունն ավետարանել, գրավել տարածքը և կառուցել նոր եկեղեցիներ Աստծո թագավորության և Նրա ժողովրդի համար³⁶: Այժմ Տիրոջ դաշտերում ոչ թե մեկ, այլ հինգ գեներալ կար:

Իր վերջին քարոզի մեջ՝ որպես Լատինաամերիկյան տարածքի վերակազմու, Գիրոնն ազդարարեց այն երեք ճանապարհները, որոնք տանելու էին դեպի հոգևոր հաջողությունը և բարգավաճումը թափաքայում՝ «բարձր հոգևոր վիճակը թե՛ ծառայողների, թե՛ անդամության կյանքում», «ավետարանել կորածներին ամեն գնով», և բարձրացնել «ավելի լավ պատրաստված ծառայողներ՝ ազատվելով կրթված կրթականության վախից»³⁷:

Հաջորդ Գլխավոր խորհրդին՝ 1973թ.-ի օգոստոսին, Աժ-ը ջերմորեն հյուրընկալեց չորս նոր շրջանները և նրանց վերակազմությունն ընկերության ձեռք մեկնելով նրանց: Աժ-ի Սահմանադրությունը և Կանոնադրությունը հայտարարում էին. «Օտար լեզուների ցանկացած շրջան պետք է ունենա նույն արտոնությունները և պարտավորությունները, որոնք շնորհված են շրջանային խորհուրդներին՝ սույն Սահմանադրության և Կանոնադրության սահմաններում»³⁸: Պատմությունը կերտվեց, և երկար սպասված փոփոխությունը վերջապես տեղի ունեցավ:

Գիրոնի առաջարկը խոշոր շրջադարձային կետ էր Լատինաամերիկյան Աժ-ի շարժման պատմության մեջ: Մի ժամանակ առանձնացված և մեկուսացված Լատինաամերիկյան Աժ-ն այժմ լիովին ընդգրկված էր ազգային մակարդակի վրա ճանաչված շրջանների թվում: Իրա-

դարձությունների նման ծավալման արդյունքում ամեն վերակազմու և շրջան ոչ միայն ավելի մեծ պատասխանատվություն ստանձնեց իր աշխատանքի համար, այլև սկսեց բարեկամաբար մրցակցել մյուսների հետ նորադարձների և հիմնված եկեղեցիների բանակով: Բացի այդ՝ նրանք արդեն ուղարկում էին հինգ ներկայացուցիչ Աժ Գլխավոր խորհրդի հավաքույթներին, ինչի շնորհիվ նրանք ունեցան ավելի մեծ ձայն և տեսիլք իրենց մայր կազմակերպության շրջանակներում: Օլասաբայի, Ֆլորեսի, Բազանի և Գիրոնի կողմից առաջնորդվող Լատինաամերիկյան Աժ-ի առաջին սերնդի հովիվների երազանքները վերջապես իրականություն դարձան³⁹: Նրանք այլևս լուռ էֆին լինելու:



Գաստոն Էսպինոզան Գիտությունների դոկտոր է և Արթուր Վ. Ստոգբոնի կրոնական հետազոտությունների բաժնի պրոֆեսորի օգնական «Կլերմոնտ ՄակՔեննան» քոլեջում, Կլերմոնտ, Կալիֆորնիա:

Գաստոն Էսպինոզայի «Լատինաամերիկացի հոգեգալստականներն Ամերիկայում. Հավաքող և քաղաքականությունը՝ գործողության մեջ» գրքից: Հեղինակային իրավունքները © 2014թ. Գաստոն Էսպինոզայի: Օգտագործված է ըստ թույլատվության: Բոլոր իրավունքները պահպանված են:

ՆՇՈՒՄՆԵՐ

¹ Հ. Ս. Բոլլ. «Հիստորիա», «Առաքելական լույս» (իսպ.), մարտ, 1966թ., էջ 2: Միգել Գիլեն. «Քրիստոնեական եկեղեցիների լատինաամերիկյան խորհրդի պատմությունը» (իսպ.) (Բրուսսելի, Տեխաս, «Քրիստոնեական եկեղեցիների Լատինաամերիկյան խորհուրդ», 1991թ.), էջեր 79-81: Անգլալեզու հրատարակված պատմությունների մեծ մասը վերագրում են 1918թ.-ի Լատինաամերիկյան համաժողովի ստեղծումը Բոլլին: Այնուամենայնիվ, Գիլենը և այլոք ճշգրտորեն նշում են, որ Իսաբել Ֆլորեսը մեծապես նպաստել է Աժ առաջին համաժողովի կազմակերպմանը 1918թ.-ին:

² Լատինաամերիկյան շրջանի խորհրդի Կանոնադրությունը, 1929թ., ՖՀԺԿ:

³ Դեմետրիո Բազան, ծառայողական գործ, ՖՀԺԿ:

⁴ Նելի Բազան, ծառայողական գործ, ՖՀԺԿ:

⁵ Վիկտոր Դե Լեոն. «Լուռ հոգեգալստականները. քսաներորդ դարի իսպանալեզու բնակչության միջև տեղի ունեցած հոգեգալստական շարժման կենսագրական պատմություն» (Լա Հաբրա, Կալիֆորնիա), հրատարակված հեղինակի կողմից, (1979թ.), էջ 97:

⁶ Նելի Բազանը Էլիզաբեթ Բ.-ի և Դոն Մարտինես Կրոնի հետ. «Աստծո դեսպանները. Դեմետրիո և Նելի Բազաններ» (իսպ.) (Մայամի, Ֆլորիդա, «Էդիտորիալ վիդա»,

1987թ.), էջ 26:

⁷ Դեմետրիո Բազան և Նելի Բազան, ծառայողական գործեր:

⁸ Դե Լեոն, էջեր 100-101:

⁹ Նույնը, էջեր 101-103:

¹⁰ Նույնը, էջեր 102-103:

¹¹ Նույնը, էջ 103:

¹² Նույնը:

¹³ Նույնը, էջեր 103-104:

¹⁴ Ժոսե Գոնչես, «Հրեշտակներ՝ առանց թևերի. Իսպանալեզու «Աստծո ժողովների» պատմությունը» (Նյու Բրոնքս, Տեխաս. «Ավալու» հրատարակչություն, 1996թ.), էջ 27:

¹⁵ Նույնը, էջ 29:

¹⁶ Դավիդ Գ. Գուտիերես. «Պապեր և հայելիներ. Մեքսիկական ծագում ունեցող ամերիկացիները, մեքսիկացի գաղթականները և քաղաքականություն՝ ազգային պարկանչություն հիման վրա» (Բերկլի, «Կալիֆորնիայի համալսարանի հրատարակչություն», 1995թ.), էջ 134:

¹⁷ Նույնը, էջեր 133-151, հսկայ. էջ 142:

¹⁸ Դեմետրիո Բազան, նամակ Ջ. Ռ. Ֆլաուերին, հունիսի 30, 1941թ. «Նոր առաջխաղացումներ Լատինական Ամերիկայում», «Հոգեգալստական Ավետարան», փետրվարի 8, 1941թ., էջ 9:

¹⁹ Դե Լեոն, էջեր 108-110:

²⁰ Գաստոն Էսպինոզա, հարցազրույց էլ. նամակներով Ջեսի Միրանդայի հետ, օգոստոսի 27, 2013թ.:

²¹ Առաջին երկու տևական Լատինաամերիկյան Աժ-ի Աստվածաշնչյան դպրոցները (Երկուսն էլ կոչվել են «Լատինաամերիկյան Աստվածաշնչյան ինստիտուտ»), հիմնադրվել են 1926թ.-ին Լուսի կողմից՝ Կալիֆորնիայում, և Բոլլի կողմից՝ Տեխասում: ԼԱԱԻ-ը (Տեխաս) վերադարձվեց Սան Անտոնիո 1981թ.-ին:

²² Էսպինոզա, հարցազրույց էլ. նամակներով Ջեսի Միրանդայի հետ

²³ Դե Լեոն, էջեր 52, 108-110, 123:

²⁴ Նույնը, էջ 123:

²⁵ Ռ. Դավաա Բրեքենտիջ և Ֆրանցիսկո Գարսիա-Տրետո. «Երիցական եկեղեցի. Երիցականների և մեքսիկական ծագում ունեցող ամերիկացիների պատմությունը Ամերիկայի հարավ-արևմուտքում» (իսպ.), 2-րդ հրատ. (Սան Անտոնիո, Տեխաս, «Երրորդություն» համալսարանի հրատարակչություն, 1989թ.), էջեր 157-161:

²⁶ Խոսե Գիրոն. «Խոսե Գիրոնի համառոտ կենսագրական ակնարկ», ապրիլ, 1991թ., էջեր 1-4: Դե Լեոն, էջ 120:

²⁷ Նույնը, էջ 28:

²⁸ Դե Լեոն, էջ 121:

²⁹ Նույնը, էջ 127:

³⁰ Նույնը, էջեր 32, 130:

³¹ Նույնը, էջ 131:

³² Նույնը, էջ 131:

³³ «Աստծո ժողովների» Լատինաամերիկյան շրջանի քարտուղարի գեկույցը, 1970թ.: Դե Լեոն, էջ 52:

³⁴ Դե Լեոն, էջ 181: «Լատինաամերիկյան շրջանի խորհրդի արձանագրություն» (իսպ.), 1971թ., էջեր 7-14:

³⁵ Դե Լեոն, էջ 180: Չարլզ Վ. Հ. Սքոթ. «Այժմ իսպանալեզու ամերիկացիներին ծառայում է հինգ շրջան», «Հոգեգալստական Ավետարան», հունվարի 30, 1972թ., էջ 9:

³⁶ Դե Լեոն, էջ 184:

³⁷ «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1973թ., էջ 133:

³⁸ Դե Լեոն, էջեր 129-131, 180-182:



ՀՈԳՈՒ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ,
ՄԻՆՁԵՎ ՈՐ

ԲՈԼՈՐՍ ՀԱՄՆԵՆՔ

ՀԱՎԱՏՔԻ
ՄԻՈՒԹՅԱՆԸ

Քրիստոնեական միաբանություն «Աստծո ժողովների» հիմնարար սկզբունքը

Վիլյամ Զ. Մուլնար

Հիսուսի աղոթքը. «Եվ ես այն փառքը, որ Ինձ տվիր, նրանց տվի, որ մեկ լինեն, ինչպես Մենք էլ մեկ ենք: Ես նրանցում, և Դու՝ Ինձանում, որ կատարյալ լինեն միությունում, որպեսզի աշխարհը գիտենա, թե Դու ուղարկեցիր Ինձ, և սիրեցիր նրանց, ինչպես Ինձ սիրեցիր» (Հովհաննես 17.22,23):

Ինչպես էին «Աստծո ժողովների» (ԱԺ) վաղ շրջանի առաջնորդները վերաբերվում եկեղեցու միաբանությանը: Միզուցե ընթերցողներից ոմանք զարմանան այն պատճառով, թե որքան մեծ տրտմություն էր պատճառում վաղ հոգեգալստականներին այն փաստը, որ Քրիստոսի մարմինն անմիաբան էր դարձել վարդապետական անհամաձայնությունների և հարանվանական բաժանության արդյունքում: Չնայած միաբան լինելու ցանկությանը՝ ռասայական տարանջատումն ակնհայտ էր շարժման մեջ, նաև առկա էին հակասություններ լեզուների բնույթի, սրբացման, ջրով մկրտության և Երրորդության ուսմունքների վերաբերյալ:

Այս պայմաններում էր, որ ԱԺ-ի վաղ շրջանի առաջնորդները մարգարեաբար քրիստոնեական միաբանության կոչ էին անում: Այս հողվածը ներկայացնում է վաղ շրջանի ԱԺ-ի առաջնորդներից մի քանիսի հիմնարար սկզբունքները եկեղեցու միաբանության վերաբերյալ: Այն նույնպես փորձում է վերապատմել, թե ինչպես էին այս առաջնորդները, Ընկերակցության կազմավորման տարիների ընթացքում, պահպանում ողջամիտ վարդապետությունը և միաժամանակ թույլ տալիս աստվածաբանական բազմազանություն՝ հանուն միաբանության:

Զ. Ռոսվել Ֆլաուերը՝ ԱԺ-ի հիմնադիր քարտուղարը, գրեց 1915թ.-ի պարբերականների իր խմբագրականներից մեկում, որում նա խնդրում էր ընթերցողներին հասկանալ այն, ինչ Հոր սրտում է Իր ժողովրդի միաբանության վերաբերյալ.

«Աստված բաժանությունների Աստված չէ, և ո՛չ էլ անկարգության Աստված: Նա սիրո, գթասրտության և կարգուկանոնի Աստված է: Մեր նպատակն է՝ հետևել Նրան և խորշել այն ամենից, ինչը վիճաբանության բնույթ ունի: Խնդիրները կատաշանան և կանցնեն, բայց Աստծո կարգուկանոնը հետևյալն է. խնդիրները երբեք չպետք է այնպիսի առարկություններ առաջացնեն, որ պառակտում բերեն և թշնամություն առաջացնեն Աստծո ժողովրդին մեջ... Մենք պետք է խոսենք, և աղաչանքներով ու արցունքներով բարձրաձայն աղաղակենք, մինչև որ Աստծո ժողովրդի միաբանությունը վերականգնվի, և մինչև որ նրանք անտեսեն բոլոր խնդիրները՝ բացի կյանքի ու մահվան խնդիրներից, կորածների փրկությունից և հավատացյալներին Աստծո և մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի սիրո և հաղորդության մեջ կատարելագործելուց և հաստատելուց»:

Թագավորը վերադառնում է

Հավատալով Քրիստոսի մոտալուտ վերադարձին՝ «Աստծո ժողովների» հիմնադիրները շեշտադրում էին միաբանության հրատապությունը և կարևորությունը: Հիմնադիր նախագահ Յ. Ն. Բելլը զգուշացրեց ընթերցողներին 1914թ.-ին գրված մի հողվածում. «Մենք ժամանակ չունենք վեճերի կամ անհամաձայնությունների համար», որովհետև «Տիրոջ գալուստը մոտ է»: Բելլը հորդորեց հոգեգալստականներին այդպես վարվելու փոխարեն «գործել սիրով, միաբանությամբ և խաղաղությամբ մեր Տիրոջ համար»²:

Արդյո՞ք Հիսուսը պատասխանված կգտնի Իր աղոթքը միաբանության մասին (Հովհաննես 17.23), երբ վերադառնա: Հիսուսի աղոթքը ցույց է տալիս, որ քրիստոնյաների միաբանությունը՝ Հոր սրտի ցանկությունն է: 1916թ.-ի խմբագրականներից մեկում նախագահ Զ. Վ. Վեյլը զգուշացրեց «վտանգներով լի օրերի մասին աշխարհի և եկեղեցու համար»: Նա շարունակեց՝ զգուշացնելով ընթերցողներին բաժանության վտանգի մասին, որը կարող էր հեշտությամբ շեղել հավատացյալներին եկեղեցու առաքելությունից՝ իրականացնելուց. «Բաժանության և պառակտման ոգին գործում է մեր ժամանակներում խիստ արտահայտիչ և մտահոգիչ կերպով»³:

Վեյլը խրախուսեց հավատացյալներին խուսափել բաժանությունից՝ «հառելով իրենց հայացքը վեր»՝ Քրիստոսին: Նա գրեց. «Եթե մենք թույլ տանք ինքներս մեզ կորցնել մեր տեսիլքը և կլանվել այլ բաներով, մենք կարող ենք հայտնվել «ամոթով կանգնածների» թվում Նրա վերադարձի ժամանակ: Եթե մենք ընկնենք սխալմունքի և մրցակցության, վիճաբանության և դառնության մեջ, մենք պատրաստ չենք լինի Նրա հետ հանդիպմանը»: Վեյլը գիտակցում էր, որ երբեմն դժվար է «խուսափել խիստ զգացմունքներից այլ մարդկանց հանդեպ»: Այնուամենայնիվ, նա այնպես, որ միաբանությունը և խաղաղությունը հնարավոր կլինեն մեզ համար, «եթե մենք ապրենք սերտ մտերմությամբ Աստծո հետ և հրաժարվենք ներգրավվել ցանկացած առարկելի հարցերի մեջ»: Միայն նրանք, ովքեր «շատ խոնարհ և զգուշավոր» են, կկարողանան խուսափել բաժանության «մտատանջող ազդեցությունից»⁴:


Հոգևոր պատերազմ

Վաղ շրջանի ԱԺ առաջնորդները հասկանում էին, որ միաբանությունն անհրաժեշտ էր արդյունավետ հոգևոր պատերազմի համար: Ա. Փ. Քոլինսը, ով ծառայում էր նախագահի պաշտոնում 1914-ից մինչև 1915թթ.-ը, հորդորում



«Քրիստոնեական Ավետարան» պարբերականի առաջին համարը, որը հրատարակվել է Փլեյնֆիլդում, Ինդիանայում, 1913թ.-ի հուլիսի 19-ին, առաջադրում էր քրիստոնյաների միաբանության գաղափարը, ինչպես երևում է գլխավոր ենթավերնագրից. «Ավետարանի պարզությունը», «Խաղաղության կապով», «Հոգու միաբանությունը», «Մինչև որ բոլորս հասնենք հավատքի միությանը»

էր հոգեգալստականներին միաբանության ձգտել «բոլոր սրբերի և ժողովների» հետ՝ լինելով «մեկ՝ աղոթքի, մեկ՝ մտադրության, մեկ՝ գործողության և մեկ՝ Հիսուսի Հոգու մեջ»: Նա կոչ էր անում «ամեն մի սրբի» միա-



Ա. Փ. Քոլինս


բանվել այնպես, որ «բոլոր սրտերը կլանված լինեն մեկ նպատակով՝ մարդկանց փրկության և Աստծուն փառք բերելու»: Նա հավատում էր, որ Քրիստոսը փառավորվելու էր, և որ տեղի էր ունենալու փառավոր համաշխարհային ավետարանչական շարժում, որը «կկապակցի մեզ իրար հետ և մենք, սեղմելով մեր վահանները

րը եզրերը, կընթանանք ամուր, փակ շարքերով ընդդեմ թշնամու՝ հնչեցնելով Աստծո փողի ձայնը, մինչև որ պարիսպներն ընկնեն»⁵:

Վելչը զգուշացրեց ընթերցողներին 1916թ.-ին գրված մի հոդվածում, որ սատանան «լարում է իր բոլոր ուժերը՝ եկեղեցին պառակտելու համար»: Նա գրում էր, որ սատանայի գործը կարելի է պարզորեն տեսնել «եկեղեցու անմիաբանության և համակենտրոնացում չունենալու մեջ»⁶: Յ. Ն. Բելլն աղաչում էր հավատացյալներին խուսափել «կովարար տրամադրվածությունից ընդդեմ նրանց, ովքեր բացահայտ կերպով հայտնել են, որ իրենց նպատակն է՝ պարտության մատնել կամ կործանել ձեզ»: Բելլը զգուշացնում էր. «Որովհետև եթե այդպես վարվեք, դուք կպարտվեք ձեր անձերում, և սատանան կծիծաղի ձեզ վրա»⁷:

Վելչը հավատում էր, որ չափազանց շատ քրիստոնյաներ անտեղյակ են թշնամու հնարներից, և նույնիսկ «համագործակցում են թշնամու հետ» կամ «թույլ են տալիս իրենց մասնակցություն ունենալ այն գործերում, որոնք անում է սատանան՝ եկեղեցին կործանելու համար»: Նա գրում էր. «Որքան ցավալի է, և որքան ողբալի է սա: Այս երևույթի իրական պատճառն այն է, որ դևերի մի ամբողջ բանակ հարձակում է գործում եկեղեցու վրա այս վերջին օրերում, և սատանայից ստացած ողջ գործությամբ նրանք անկատ կերպով թափանցում են մարդկանց կյանքերը, մտքեր են տալիս նրանց և բարկություն գրգռում նրանց ներսում՝ ձգտելով քանդել միաբանության կապը, որն էապես կարևոր է Աստծո եկեղեցու հաջողության համար այս աշխարհում»⁸:

Ջ. Ռուսվել Ֆլաուերը հնչեցրեց միաբանության համախմբող կոչը. «Աստծո զորքերը՝ Հոգեգալստական



Ջ. Վ. Վելչ

ընկերակցությունը, շարվում են մեծ պայքարի համար»: Նա խրախուսեց քրիստոնյաներին մի կողմ դնել մեղքը և տարակարծությունները: Նա գրեց. «Մենք չպետք է հանդուրժենք ոչ երկպառակություն, ոչ անմիաբանություն պատերազմող զորքերի մեջ: Հիսուսը՝ մեր Հրամանատարը, առաջնորդում է մեզ առաջ՝ դեպի հաղթանակը, նստած սպիտակ ձիու վրա, որի երասանին գրված է. «Թագավորների Թագավոր և տերերի Տեր»»⁹:

Հոգեգալստական միաբանություն

Հոգեգալստաբանությունը ինքնին միաբանության փարոս է եկեղեցու համար: Հոգեգալստի օրը Հիսուսը սկսեց կատարել Հոր խոստումը, որն էր՝ Սուրբ Հոգու թափումը բոլոր ռասայական, սեռային և տարիքային խմբերի վրա (Գործք 2): Էլիս Ռեյնոլդս Ֆլաուերը, ում սիրով անվանում էին «Մայր Ֆլաուեր», խոսեց քրիստոնյաների միաբանության մասին 1916թ.-ի Կիրակնօրյա դպրոցի դասերից մեկում, որը գետեղվել էր «Շաբաթական Ավերարան» պարբերականում: Իր դասի մեջ, որը կազմվել էր Փիլիպեցիների 2-ի շուրջ մտորումների արդյունքում, նա գրեց, որ միաբանությունը գալիս է, երբ հավատացյալները կոտրված և զգայուն են Աստծո առջև:

«Ինչպիսիք հրաշալի գնահատական էր տալիս Պողոսը միաբանությանը: Այս խոսքի ընթերցումը պետք է ավելի մեծ կարեկցանք առաջացնի մեր սրտերում դեպի Քրիստոսի մարմնի անդամահատված և խեղված վիճակը: Անկասկած, Աստված ծրագրի ունի Սուրբ Հոգու թափման միջոցով՝ Իր ժողովրդի սրտերը հալեցնելու և միաբանելու համար: Բայց ինչպիսիք համառ և խիստ մարդկանց հետ Նա պետք է որ գործ ունենա: Այնքան քչերն են պահպանել կոտրված և զգայուն դիրքը Տիրոջ առջև, այն դեպքում, երբ մենք կարող ենք ստանալ աստվածային միաբանության երկնային տեսիլքը, որն Աստված ցանկանում է հայտնել մեզ, միայն այս կերպով: Միթե մենք կարիք չունենք Երեմիաների, ովքեր լաց կլինեն Տիրոջ առջև Աստծո ժողովրդի այս իրական զորության և գեղեցկության վերականգնման մասին: Այն, որ մենք շփվում ենք նրանց հետ և հանդուրժում ենք նրանց, ովքեր տեսնում են ամեն ինչ ճիշտ այնպես, ինչպես մենք, աստվածային սեր և միաբանություն չէ: Միթե շնորհքը կարող է արտահայտվել նման պայմաններում... Հաճախ այն մարդիկ, որոնց մենք դատապարտում ենք և զուրկ ենք համարում զորությունից, որովհետև նրանք չեն քայլում մեր ճանապարհով, իրականում անում են շատ ավելին Աստծո համար և հաճեցնում են Նրան շատ ավելի, քան մենք, թեև մենք կարծում ենք, որ ավելի բարձր միտք և ավելի հարուստ փորձառություն ունենք: Վեճերը (պառակտումը կամ խմբակցությունների բաժանվելու միտումները) և սնամիտությունը (պարծենկոտությունը և հավակնոտությունը)՝ այն երկու սատանայական որդերն են, որոնք շարունակ կրծում են սիրո սրտանց միաբանությունն Աստծո ժողովրդի միջից: Ամբողջովին հեռացրեք ձեր սրտից այս մահացու բաները, որոնք թաքնվում են այդտեղ...»

Մինչև որ եսասիրությունը դուրս չարվի մեր կյանքերից, հարաատև միաբանությունն Աստծո ժողովրդի մեջ կհանդիպի լուրջ արգելքի»¹⁰:

Էլիսի ամուսինը՝ Զ. Ռոսվել Ֆլաուերը, ամփոփեց Հոգեգալստական շարժման կարևորությունը քրիստոնյաների միաբանության հարցում. «Սուրբ Հոգու միաբանությունը բացարձակապես անհրաժեշտ էր, որպեսզի Հոգեգալուստը տեղի ունենար, և այն բացարձակապես անհրաժեշտ է Հոգեգալստի շարունակության համար: Առանց միաբանության չկա Հո-



Զ. Ռոսվել Ֆլաուեր

գեգալուստ: Միաբանությունը բերում է Հոգեգալուստը: Եկեք մեկ լինենք, ոչ միայն խոսքով, այլև գործով և ճշմարտությամբ»¹¹:

Ճիշտ, թե՛ սխալ միաբանություն

Էկումենիկ շարժումը, որի նպատակն էր՝ միաբանություն կամ համագործակցություն բերել ողջ աշխարհի քրիստոնեական եկեղեցիների միջև, ծագեց քսաներորդ դարի սկզբում՝ ճիշտ այն ժամանակ, երբ երևան էր գալիս Հոգեգալստական շարժումը¹²: Էկումենիկ շարժումը փորձում էր միավորել տարբեր հարանվանություններ կազմակերպչական մակարդակի վրա՝ հաճախ անտեսելով վարդապետական կամ դավանանքային սկզբունքները: Երբեմն միաբանությունը ձեռք էր բերվում տարբեր առանցքային ուղղափառ քրիստոնեական համոզմունքներն անտեսելու հաշվին: 1915թ.-ին լույս տեսած «Շաբաթական Ավերարան» պարբերականի հոդվածներից մեկը, որի վերնագիրն էր «Վերջին օրերի

հետագա նշաններ», խրախուսում էր բոլոր ճշմարիտ քրիստոնյաների միաբանությունը, սակայն զգուշացնում էր չմասնակցել այնպիսի եկեղեցիներին միանալու փորձերին, որոնք «մերժում են Քրիստոսի աստվածությունը» և Նրա փրկարար աշխատանքը խաչի վրա¹³:

Զ. Ռոսվել Ֆլաուերը հավատում էր, որ միաբանությունը կարող է լինել կամ Սուրբ Հոգու աշխատանքի, կամ դիվային աշխատանքի արդյունք: Նա գրում էր, որ սատանան «սիրում է միաբանությունը», եթե այն որևէ «անսուրբ նպատակով» է: Նա խոսում էր կեղծ միաբանության տեսակների մասին, որոնք հաճախ ծառայում էին Քրիստոսին և Նրա թագավորությունը քայքայելու համար:

«(սատանան) այս աշխարհ է ուղարկել չար ոգիների, որոնք համախմբում են մարդկանց աշխատանքային, քաղաքական, ֆինանսական, կրոնական և ազգային միությունների մեջ: Այս բոլորը, ի վերջո, կհամախմբվեն՝ կազմելով մեկ մեծ միություն ընդդեմ Քրիստոսի և Նրա ժողովրդի, որը կսպանի և կհավաքի Աստծո զավակներին և լիակատար իշխանություն կունենա երկրի վրա, քանի դեռ Աստծո բարկության բաժակը չցքվի և այս անսուրբ, վիթխարի իշխանությունը վայր չգցվի և չկործանվի Մարդու Որդու գալստյան պայծառությամբ»¹⁴:

Ֆլաուերը նկատեց, որ կյանքի բոլոր բնագավառներում մարդկանց համախմբելու ջանքեր են գործադրվում՝ մեծ նպատակների հասնելու համար: Նա գրում էր. «Մենք ապրում ենք մեծ միությունների ձգտող շարժումների օրերում: Աշխարհը հասկանում է սրա անհրաժեշտությունը, և ամենուր ջանքեր է գործադրում, որպեսզի միաբան գործունեություն ծավալի մարդկանց միջև՝ ինչ-որ բան կառուցելու համար, որպեսզի նրանք անուն ստանան իրենց համար երկրի վրա: Այս հարցում այս աշխարհի որդիներն ավելի իմաստուն են, քան լույսի որդիները»¹⁵:

Ֆլաուերը ցավում էր, որ քրիստոնյաներն անվերջ բաժանվել են, նույնիսկ այն դեպքում, երբ մնացած աշխարհը հասկանում է, որ անհրաժեշտ է միաբան գործունեություն՝ նպատակներ իրականացնելու համար: Նա բացատրեց իր հիասթափության պատճառը. «Փոխարենը պատմության բազում դասերից օգուտ քաղելուն, քրիստոնեական աշխարհը թույլ է տվել իրեն մասնատվել այն աստիճան, որ ներկայումս գոյություն ունեն ավելի, քան վեց հարյուր տարբեր հարանվանություններ և աղանդներ, որոնցից շատերը կատաղիորեն պայքարում են վիճարկելի վարդապետությունների համար, որոնք ոչ շինություն են տա-

լիս մարդկանց, ո՛ր էլ օգնում են նրանց գտնել այն Քրիստոսին, Ով մահացել է նրանց համար»¹⁶:

Համաձայն Ֆլաուերի՝ Աստված ցանկանում է, որ ամբողջ եկեղեցին միաբան լինի. «Բավական չէ, որ մեկ տեղական ժողովը միաբան լինի. Աստված ցանկանում է, որ բոլոր ժողովները որևէ շրջանում, երկրում և ողջ աշխարհում հոգով միաբան լինեն»: Նա գրում էր, որ ամեն եկեղեցի «ամբողջի մասն է»: Ինչպիսին է լինելու այս միաբանությունը: Նա նկարագրեց այն հետևյալ կերպով.

«...միասին աշխատելով, աղոթելով, չարչարվելով և մահանալով, կիսելով օրվա դժվարությունները և տապը, ուրախանալով հաղթանակներ տանելիս և հակասությունները հարթելիս, աճ և ծաղկունք ապրելով, և այն ու ձախ տարածվելով աստվածային հարձակման մշտապես ուժգնացող հորձանքով, որի առաջխաղացմանը Քրիստոսի և Փրկության համար անկարելի է հակառակվել»¹⁷:

Ֆլաուերը հորդորում էր քրիստոնյաներին ձգտել միաբանության և խոնարհության.

«Եկեք հակառակվենք անհամերաշխության, բաժանության և վիճաբանության դևին, և հագնենք համաձայնության Հոգին, Չորության, Սիրո և Չգաստության Հոգին՝ խոնարհեցնելով մեզ մինչև փոշին Աստծո առջև, որպեսզի Նա կարողանա բարձրացնել մեզ, ովքեր ջանում են պահպանել հոգու միաբանությունը սիրո կապով, մինչև որ բոլորս հասնենք հավատքի և Աստծո Որդուն ճանաչելու միությանը: Աստված կշտապի օգնել մեզ սրանում: Եթե մենք մտադրվենք քայլել Նրա ճանապարհով, Նա կհեռացնի բոլոր խոչընդոտները մեր շավիղից և կօգնի մեզ այն աստիճան միաբան լինել ծառայության մեջ, որ աշխարհը կհիանա՝ ասելով. «Տեսեք, թե որքան են նրանք սիրում իրար»¹⁸:

Համաձայն Ֆլաուերի՝ եկեղեցու միաբանությունը և Մեծ Հանձնարարականն արդյունավետ կերպով իրականացնելը փոխկապակցված են:

Աստծո ժողովները կազմակերպելը

Հյուսիսային Ամերիկայի վաղ հոգեգալստականները, ներառյալ «Աստծո ժողովների» հիմնադիրները, որպես կանոն, զգուշանում էին կազմակերպչական կառույցներից: Նրանից ոմանք վտարվել էին հարանվանական եկեղեցիներից՝ իրենց հոգեգալստական վկայությամբ կիսվելուց հետո: Մյուսները խաղաղությամբ հեռացել էին այդ եկեղեցիներից և միացել համակարծիք հոգեգալստականների: Մեկ այլ խումբ

պարզապես եկել էր ոչ դավանանքային կամ որևէ միության չպատկանող եկեղեցիներից¹⁹:

1914թ.-ին Յ. Ն. Բեյլը կանխատեսեց, որ «մարդկային ղոգմաները և իրարամերժ տեսությունները կանհայտանան», և ամբողջ եկեղեցին հաղթականորեն կբարձրանա Քրիստոսի հաղորդության մեջ²⁰: Դ. Վ. Կերրը զգուշացրեց, որ վարդապետական վեճերը թույլ չեն տալիս քրիստոնյաներին տեսնել Աստծո երեսը²¹: Շատերը նույնպես նշեցին, որ վիճաբանությունները վարդապետությունների շուրջ խանգարում են կատարել ավելի կարևոր առաջադրանքները, որոնք են ավետարանչությունը և միսիան²²:



Յ. Ն. Բեյլ

Այնուամենայնիվ, միևնույն ժամանակ վաղ Հոգեգալստական շարժման մեջ կային վարդապետական շփոթություններ, իշխանության չարաշահումներ տեղական եկեղեցիներում և միսիոներների հետ կապված խնդիրներ²³:

Նման պայմաններում էր, որ «Աստծո ժողովների» հիմնադիրները հանդիպեցին 1914թ.-ի ապրիլին: Նրանց նպատակն էր գտնել իրենց առջև ծառայած բազմաթիվ խնդիրների լուծումները, որոնց թվում էին 1) քրիստոնյաների միաբանության կարիքը, 2) կայունության կարիքը քրիստոնեական հավատքի դրույթների և գործելակերպի մեջ, 3) ավելի արդյունավետ միսիայի կարիքը, 4) ոչ հարանվանական կազմակերպություն ստեղծելու կարիքը, որը չէր ունենա որևէ օրինապես պարտավորվող հավատքի հանգանակ կամ դավանանք: Ընդհանուր առմամբ, առաջին Գլխավոր խորհրդի

մասնակիցները ձգտում էին միաբանել հոգեգալստականներին՝ Աստծո առաքելությունն ավելի արդյունավետ կերպով իրագործելու համար²⁴: Զարմանալիորեն, նրանց նախաձեռնությունը հիմնականում պսակվեց հաջողությամբ:

Սահմանադրության նախաբանը և որոշումը, որը հաստատվեց 1914թ.-ի ապրիլին կայացած Գլխավոր խորհրդի նիստում, հետևյալն է.

ՔԱՆԻ ՈՐ Նա պատվիրեց, որ չլինի որևէ հերձվածություն (պառակտում, աղանդավորություն) իր մարմնում՝ անդրանիկների ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ (Եկեղեցում), որոնք գրված են երկնքում, Եբր. 12.23, և

ՔԱՆԻ ՈՐ Մենք ճանաչում ենք ինքներս մեզ որպես նշված ԱՍՏՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ անդամներ (որն Աստծո մարմինն է), և չենք հավատում, որ նույնացնում ենք կամ հաստատում ենք մեզ որպես որևէ աղանդ, այսինքն՝ մարդկային կազմակերպություն, որն օրինականացնում է կամ կազմում է օրենքներ կամ հավատքի կետեր, և ոչ սուրբգրային իրավասություն ունի իր անդամների կյանքերում, և ստեղծում է հաղորդակցման և հաղորդակցումից հեռացնելու ոչ սուրբգրային սահմաններ, և որն առանձնացնում է իրեն անդրանիկների Ընդհանուր ժողովի (Եկեղեցու) այլ անդամներից, ինչը հակառակ է Քրիստոսի աղոթքին...

ԱՅՍԴԻՍՈՎ, ՈՐՈՇՎԱԾ է. ԱՌԱՋԻՆԸ՝ Որ մենք վերակազմավորենք մեզ որպես Հոգեգալստական (Հոգով մկրտված) սրբերի ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ, որի նպատակն է՝ ո՛ր թե ստեղծել օրենքներ կառավարման համար, ո՛ր թե բռնատիրել նշված բազմաթիվ Աստծո ժողովների իշխանությունը, ո՛ր թե զրկել նրանց իրենց սուրբգրային և տեղական իրավունքներից և արտոնություններից, այլ վերակազմավորել սուրբգրային մեթոդները և Աստծո համար կատարվող երկրպագության, միաբանության, հաղորդակցման, աշխատանքի և գործի կարգը, և մերժել բոլոր ոչ սուրբգրային մեթոդները, վարդապետությունները և վարքը, և հավանություն տալ ողջ սուրբգրային ճշմարտությանը և վարքին՝ ջանալով պահել Հոգու միաբանությունը խաղաղության կապով, մինչև որ բոլորս հասնենք հավատքի և Աստծո Որդու ճանաչողության միությանը, դեպի կատարյալ մարդը, դեպի Քրիստոսի լիության հասակի չափը, և վարվենք համապատասխան դրան, ինչպես գրված է Եփ. 4.17-32-ում, և հաշվի առնենք այն հինգ նպատակները,

որոնց մասին գրված է «ԽՈՍԲ ԵՎ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ» պարբերականի 1914թ.-ի փետրվարի համարի «Համաժողովի կանչ» հոդվածում²⁵:

Այս նախաբանը ցույց է տալիս, որ պատվիրակները նվիրված էին Երրորդությունը քարոզող ամբողջ Ավետարանին²⁶, Աստվածաշնչի հեղինակությանը, եկեղեցու միաբանությանը և իրենց կազմակերպության համար ոչ օրենսդրական և ոչ աղանդավորական հիմք կառուցելուն, որպեսզի այն չկարողանար պառակտել եկեղեցին: Հաշվի առնելով այս ամենը՝ նրանք որոշեցին հոգեգալստականների խորհուրդ ձևավորել՝ իրենց միսիոներական գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու համար, նաև ավելի համապատասխանելու Աստվածաշնչին իրենց համոզմունքներով և վարքով, ինչը կբերեր հավատքի միաբանության և հասունության: Նրանք արեցին այս ամենը՝ առանց կազմելու հավատքի հանգանակ կամ դավանանք:

Ռասայական անմիաբանություն

Առաջին Գլխավոր խորհրդին մասնակցելու հրավերը պաշտոնապես վերաբերվում էր բոլոր ռասաներին: Եպիսկոպոս Չարլս Հ. Մեյսոնը, ով հիմնականում սևամորթներից բաղկացած «Աստծո եկեղեցին Քրիստոսում» եկեղեցու առաջնորդն էր, հրավիրվեց քարոզելու երեկոյան ծառայություններից մեկին, և բերեց իր հետ ավետարանական երգչախումբ Լեքսինգտոնից՝ Միսիսիպիից: Այնուամենայնիվ, «Աստծո ժողովների» հիմնադիրների մեծամասնությունը սպիտակամորթ էր:

Հարցերը ռասայական խտրականության դերի մասին Աժ-ի հիմնադրման ժամանակ դեռևս լիովին պատասխանված չեն: Որոշ ծառայողներ, ովքեր մասնակցել էին առաջին Գլխավոր խորհրդին, հավատարմագրված էին «Աստծո եկեղեցին Քրիստոսում» հարանվանության կողմից, որը հավատարմագրեր էր տրամադրում «Աստծո եկեղեցին Քրիստոսում և միության մեջ՝ առաքելական հավատքի շարժմամբ» խմբի անվանումով: Այս խումբը, որն առաջնորդվում էր Հովարդ Գոսի, Դ. Չ. Օ. Օպերմանի, Յ. Ն. Բեյլի և այլոց կողմից, հիմնականում բաղկացած էր սպիտակամորթ ծառայողներից:

Պատմաբանները վիճում են այն մասին, թե ինչ բնույթի հարաբերություններ ունեին Գոսի և Մեյսոնի խմբերը: Ոմանք պնդում են, որ Գոսի խումբը խզեց հարաբերությունները Մեյսոնի հետ, հավանաբար՝ ռասայական խտրականության պատճառով, և օգնեց հիմնադրել Աժ-ը: Մյուսները պնդում են, որ չնայած նմանատիպ անվանումների այս երկու խմբերն առանձին կազմակերպություններ էին²⁷: Թեև կազմակերպական հա-

րաբերությունների բնույթը Աժ հիմնադիրների և Մեյսոնի միջև ստույգ հայտնի չէ, պատմաբանների մեծ մասը համաձայնվում է, որ մշակութային ռասայական խտրականությունն իսկապես բաժանություն առաջացրեց վաղ շրջանի սպիտակամորթ և սևամորթ հոգեգալստականների միջև: Այնուամենայնիվ, հետաքրքրական է նշել, որ ամեն խումբ նշանակում էր թե սպիտակամորթ, և թե սևամորթ ծառայողների:



Դ. Վ. Կերր

Կարող են լինել տարբեր պատճառներ, թե ինչու Աժ-ի հիմնադիրները չմտադրեցին Մեյսոնի ԱԵՔ հարանվանությունում, կամ չմիացան Մեյսոնին, այլ փոխարենը կազմեցին սեփական ընկերակցությունը: 1) ռասայական խտրականությունը մշակույթում, որին հարում էին որոշ սպիտակամորթ հոգեգալստականներ, 2) ռասայական առանձնացումը երկրի ընդհանուր մշակույթում (օր.՝ Ջիմ Բրաուի օրենքները), 3) աստվածաբանական տարբերությունները սրբազան ուսմունքի վերաբերյալ (ԱԵՔ հարանվանությունը կողմնակից էր երկրորդական գործերի ուսմունքին, իսկ Բեյլը և մյուս Աժ հիմնադիրները՝ կատարված աշխատանքի ուսմունքին), և 4) եկեղեցաբանական տարբերությունները (ԱԵՔ հարանվանությունում կառավարման երիցական համակարգ էր՝ եպիսկոպոսների ղեկավարմամբ, իսկ Աժ-ը համայնական իշխանության կողմնակից էր): Բայցևայնպես, թեև Աժ-ի հիմնադիրները բացառիկ տեսիլք ունեին եկեղեցու միաբանության մասին և հոյակապ նախաբան էին կազմել, ռասա-

յական անմիաբանությունը շարունակում էր վարակել խորհուրդը:

Երկրորդ Գլխավոր խորհուրդ

Երկրորդ Գլխավոր խորհրդի հրավերը, որը պետք է անցկացվեր 1914թ.-ի նոյեմբերին, հավաստիացնում էր ընթերցողներին, որ այն, ինչպես և նախորդ խորհուրդը, լինելու էր մի այնպիսի վայր, որտեղ բոլոր հոգեգալստականները կարող էին միասին հավաքվել՝ «անկախ աննշան ուսմունքներից և համոզմունքներից»²⁸: Հրավերի մեջ գրված էր խորհրդի նպատակը.

«...քննարկել միաբանության, հաղորդակցության և Աստծո համար կատարվող աշխատանքի և գործի սուրբգրային մեթոդները, և մերժել ոչ սուրբգրային մեթոդները և վարքը, «ջանալով պահել Հոգու միաբանությունը խաղաղության կապով, մինչև որ բոլորս հասնենք հավատքի և Աստծո Որդու ճանաչողության միությանը, ևն.»²⁹:

Հրավերի մեջ նշված էր, որ առաջին Գլխավոր խորհրդի ժամանակ հավատքի դավանանք ստեղծելու փորձ չէր արվել:

«Ներկա էին քարոզիչներ և պատվիրակներ տարբեր վայրերից, ովքեր հարում էին տարբեր կարծիքների վարդապետության և վարքի մասին, և ովքեր նպատակաուղղված էին, որ ոչինչ չվճռվեր, ինչը հակառակ կլիներ Աստվածաշնչին և իրենց սեփական խղճին... Ծճարտապես, որքան երանելի է, որ եղբայրները բնակվեն իրար հետ միաբանության մեջ»³⁰:

Եկեղեցու միաբանությունը և վարդապետությունը

Երկրորդ Գլխավոր խորհրդից կարճ ժամանակ անց Յ. Ն. Բեյլը գրեց մի հոդված՝ «Գլխավոր խորհրդի նպատակները»: Նա շարադրեց Աժ-ի ինքնության մի շարք կողմեր, որոնց թվում էին հոգեգալստական խոր հոգևոր կյանքը, սրբությունը, ավետարանչությունը և միաբանությունը: Բեյլը խոսեց քրիստոնյաների միաբանության մասին շատ ավելի, քան մյուս կողմերի: Ավելի լավ է՝ կարդալ հենց նրա խոսքերը:

«Մարդիկ մշտապես հարցնում են մեզ, թե արդյո՞ք մենք չենք հրաժարվում հաղորդակցությունից Աստծո մյուս զավակների հետ, եթե աննշան անհամաձայնություններ ունենք նրանց հետ ուսմունքների, տեսությունների, շնորհքի գործերի և այլ հարցերում: Ո՛հ, սիրելիներս, մենք ընդունում ենք ամեն մի մաքուր, հաճելի և ուսանելի Աստծո զավակի այս

երկրի վրա՝ անկախ այն բանից, թե որ շարժման անվանումն է նա կրում, և հաղորդակցվում ենք նրա հետ: Եթե Հիսուսի արյունը ձեր անձի վրա է, դուք մեր եղբայրն եք: Մենք հակառակ ենք բոլոր պառակտումներին, ամեն տեսակի անհնազանդությանը Աստծուն և բաժանություններին, անօգուտ վեճերին տարբեր բառերի շուրջ և ամեն տեսակի աղանդավորությանը ամենուր:

Այն հարցերում, որոնք առընչություն չունեն մեզից հետ, մեր դիրքորոշումն է՝ երկայնամտություն և մեծ հանդուրժողականություն: Այնուամենայնիվ, մենք չենք համաձայնվում փոխգիշման գնալ մեզի և պղծության հետ՝ հանդուրժողականության կեղծ պատրվակով...

Մենք հավատում ենք, որ բարձր-յալ երկինքը տրտմում է այն վիճաբանությունների և բաժանությունների պատճառով, որոնք տեղի են ունենում Աստծո ժողովրդի միջև: Մենք աղոթում ենք, որ խաղաղություն լինի բոլորի միջև, ովքեր պատկանում են Տիրոջը, հատկապես՝ բոլոր Հոգով լցված հավատացյալների: Աստծո սուրբ անվան, մեր վեհ դավանության և մեկ Հոգու մեջ օրհնյալ մկրտության համար խայտառակություն է, երբ որևէ հոգեգալստական սուրբ պայքարում է և հրաժարվում է հաղորդակցությունից մյուսի հետ: Հավիտյան օրհնյալ Աստծուն պետք է որ մեծ տրտմություն պատճառի, որ բոլոր հոգեգալստականները լիովին միաբան չեն: Մեր Տերն աղոթեց սրա համար, և դեռ աղոթում է: Երբ մենք թույլ կտանք, որ Նրա աղոթքը պատասխանված լինի: Այնքանով, որքանով դա կախված է մեզանից, մենք պատասխանում ենք: «Հիմա, Տեր: Հենց հիմա, Տեր, դարձրու մեզ մեկ Քեզանում»:

Միզուցե մենք դեռ չենք կարող տեսնել ամեն ինչ նույն կերպով, բայց մենք կարող ենք սիրել մեզ մյուսին, մենք կարող ենք հրաժարվել քանդել Հոգու միաբանությունը ոչ էական հարցերի, մարդկային հասկացությունների, տեսությունների և մեկնությունների պատճառով...

Մենք կողմ ենք ազատությանը Սուրբ Հոգու մեջ, բայց ոչ՝ անիշխանությանը և մոլեռանդությանը: Մենք կողմ ենք ազատությանը ձևակա- նությունից և ոչ սուրբգրային սահմանափակումներից, բայց կողմ չենք այն բանին, երբ մարդիկ թույլ են տալիս իրենց կործանել Աստծո գործը, որը կառուցել են այլ հավատա- րիմ մարդիկ: Մենք պատվում ենք սիրո և շփման կապերը Սուրբ Հոգու մեջ: Մենք կողմ ենք կառուցմանը, ոչ թե խզմանը: Ոչ մի ազատություն, որը մերժում է Նոր Կտակարանի կարգովանոնը և խախտում է Աստծո հոսքը, Աստծուց չէ: Քրիստոսը՝

մեր Տերն է, և մենք պարտավոր ենք հնազանդվել Նրան, անկախ այն բանից՝ մենք ընդունում ենք դա, թե ոչ: Թեև մենք Մովսեսի օրենքի ներքո չենք, սակայն գտնվելով Քրիստոսի իշխանության ներքո՝ մենք առանց օրենքի չենք: Նա մեր բարձրյալ Գլուխն է: Թող Աստված օգնի մեզ, որ պատշաճ կերպով վարվենք Նրա առջև՝ հաճեցնելով Նրան ամեն ինչում»³¹:

Դուք կարող եք տեսնել, թե ինչպես Բեյլը մեղմորեն և վիրաբույժի հմտությամբ փորձեց բժշկություն բերել Քրիստոսի մարմնին: Նա պաշտպանեց Աժ-ի դիրքորոշումն ընդդեմ «աղանդավորության» և մատնանշեց Հոգով լցված միաբանությունը: Միևնույն ժամանակ, նա հաստատակամորեն պնդեց, որ չի լինելու որևէ փոխգիշում մեզից կամ հավատքի հիմնադրույթներից շեղվելու դեպքում: Սա Աժ-ի վաղ շրջանի առաջնորդների ընդհանուր դիրքորոշումն էր³²: Այնուամենայնիվ, հերթական մարտահրավերն էր՝ սահմանել, թե ինչ են բովանդակում վարդապետության հիմնադրույթները:

Թեև առաջին Գլխավոր խորհուրդը չստեղծեց հավատքի պարտադիր դավանանք, Աժ-ի խորհրդի կազմը որոշում կայացրեց «մերժել բոլոր ոչ սուրբգրային մեթոդները, վարդապետությունները և վարքը»: Իրականում, առաջին Գլխավոր խորհուրդը որոշումներ կայացրեց այդ ժամանակվա երեք հրատապ հարցի վերաբերյալ: Պատվիրակները որոշեցին. 1) առաջարկել, որ տեղական եկեղեցիները չարգելեն միս ուտելը (թողնելով դա մարդու խղճին), 2) ծառայության չնշանակել ամուսնալուծված անձանց, ովքեր կրկին ամուսնացել են այն դեպքում, երբ նրանց նախորդ կողակիցը դեռ կենդանի է, և 3) թույլ տալ ծառայության նշանակել կանանց՝ որպես ավետարանիչների և միսիոներների, բայց ոչ՝ երեցների³³: Հազիվ թե նրանք իմանային, որ դրանով իսկ նախադեպ էին սահմանում: Այդ նախադեպի հիման վրա հետագա խորհուրդներից մեկն ընդունեց հավատքի դավանանք, որն օգտագործվեց որպես հիմք հաղորդակցության համար:

Սրբացում

«Աստծո ժողովների» առաջնորդները պետք է պարզաբանեին երկու խոշոր վիճելի աստվածաբանական տարածայնություն՝ Ընկերակցության առաջին մի քանի տարիների ընթացքում: Առաջին տարածայնությունը, որը ծագել էր Աժ-ի կազմավորումից առաջ, վերաբերվում էր սրբացմանը: Հոգեգալստականները բաժանված էին այն հարցի շուրջ, թե արդյո՞ք սրբացումը ողջ կյանքում տևող ընթացք էր, թե՞ ակնթարթային վերապրում («Աստծո ժողովների» ծառայող-

ների մեծ մասը հարում էին առաջին տեսակետին): Առաջին երեք խորհուրդները միտումնավոր կերպով խուսափեցին այս հարցի վերաբերյալ որևէ դիրքորոշում արտահայտելուց՝ թույլ տալով երկու կարծիքներին հարող մարդկանց էլ Աժ-ի ծառայողներ դառնալ:

Յ. Ն. Բեյլը պնդում էր, որ «մարդու կողմից կազմված դավանանքը՝ աղանդավորական ոգու» նշան է: Նա հայտնեց իր վստահությունն այն մասին, որ «Աստծո ժողովները» չի գնա այդ ճանապարհով:

«Նրանք համաձայնվեցին երեք չգրել մարդու կողմից կազմված դավանանք և չօգտագործել այն, ինչպես անում են շատ հարանվանություններ՝ որպես ծառայողական հաղորդակցության չափանիշ: Եթե խորհուրդը երբևէ ուրանա այս հանդիսավոր խոստումը և վերադառնա դավանանքներ գրելուն՝ դարձնելով դրանք ծառայողական հաղորդակցության չափանիշ, այդ պահին աստվածապաշտ ծառայողների մի մեծ բազմություն, ովքեր կասեցրել են բոլոր նման փորձերը Հոթ Սփրինգսում, կբարձրանա և կրկին կկասեցնի դա: Այնպես որ, մենք մտադրված չենք հաղորդակցության չափանիշ դարձնել մարդկանց կողմից կազմված դավանանքները: Մի վախեցեք Գլխավոր խորհրդից այդ հարցի վերաբերյալ... Եթե ինչ-որ մեկը կարծում է, որ պետք է դուրս անի ձեզ, որպեսզի արդար և հավատարիմ լինի Աստծո առջև, որովհետև դուք չեք դիտարկում շնորհքի գործերը կամ որևէ այլ վարդապետություն իր պես, սա մոլեռանդության հաստատ նշան է: Սա հենց այն աղանդավորական ոգին է, որը բաժանեց քրիստոնեությունն ավելի, քան 300 իրար դեմ պայքարող աղանդների, որպեսզի պախարակի Հիսուսի անունը և Աստծո Որդու Ավետարանի միաբանությունը»³⁴:

Բեյլն արտահայտեց իր բացասական դիրքորոշումը «ծառայողական հաղորդակցության չափանիշի» վերաբերյալ մոտավորապես մեկուկես ամիս առաջ 1916թ.-ի Գլխավոր խորհրդից, որն ընդունեց նման չափանիշ՝ Հիմնարար ճշմարտությունների դավանանքը (ՀՃԴ): Այնուամենայնիվ, ՀՃԴ-ի դիրքորոշումը սրբացման վերաբերյալ հնարավորություն տվեց թույլատրելի համարել երկու մոտեցումներն էլ»³⁵:

Միարարական տարածայնությունը

Երկրորդ տարածայնությունը, որը նույնպես սկիզբ էր առել Աժ-ի հիմնադրումից առաջ, վերաբերվում էր Միարարական աստվածաբանությանը, որը նաև կոչվում է «Նոր ուղղություն»: Այն դարձավ Գլխավոր խորհրդի կողմից ՀՃԴ-ն ընդունելու գլխավոր

ագրակր: Միարարականության կողմնակիցները սովորեցնում էին, որ հավատացյալները պետք է մկրտվեին Հիսուսի անունով՝ հիմնված Գործք Առաքելոց գրքի պատմության վրա, ոչ թե օգտագործելին Մատթեոս 28.19-ի մկրտական բանաձևը: «Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով»: Նրանք շարունակում էին՝ մերժելով Երրորդության վարդապետությունը, և ընկալում էին Հոր, Որդուն և Սուրբ Հոգուն ոչ թե որպես Աստվածության Անձեր, այլ մեկ աստվածային Անձի տարբեր դրսևորումներ: Արդյունքում որոշ միարարական հավատացյալներ սկսեցին պնդել, որ չկար ոչ մի տարբերություն Հոր, Որդու և Սուրբ Հոգու միջև:


Միարարական աստվածաբանության մասին պաշտոնապես սկսեցին խոսել միայն 1915թ.-ին: 1915թ.-ի մայիսին Գործադիր երիցական կազմը հրապարակեց նախնական հայտարարություն, որի դիրքորոշումը հետևյալն էր: «Նոր ուղղությունը», ինչպես և այլ ավելի աննշան աստվածաբանական հարցեր, չպետք է բաժանություն առաջացնեն կամ «հարողակցությունն ընդունելու կամ մերժելու» պատճառ դառնային³⁶: Ավելի ուշ՝ 1915թ.-ի սեպտեմբերին, «Ճարթական Ավերարանի» խմբագրականներից մեկը փորձեց հավաստիացնել ընթերցողներին, որ որևէ դավանանք չի ընդունվելու: «Հոր Սիրիանգում մեկընդմիջտ որոշված է, որ մենք չենք կազմելու որևէ դավանանք՝ ազատ տուրբերին պարտավորելու համար, որ տեղական ազատությունը չի խոչընդոտվելու, այլ ընդհակառակը՝ այն զորացվելու և աջակցվելու է»³⁷:

1915թ.-ի Գլխավոր խորհուրդը, որը հանդիպեց հոկտեմբերին, որոշում կայացրեց թույլ տալ մկրտության երկու ձևերը (միարարական և երրորդության), և թույլ տալ ամեն ծառայողի որոշել, թե որ ձևն օգտագործել³⁸: Այնուամենայնիվ, պատվիրակները ընդունեցին մի դրույթ՝ հայտարարելով, որ Որդին՝ Հայրը չէ, և որ Քրիստոսն առանձին է Սուրբ Հոգուց³⁹:

Երբ նախագահ Ջ. Վ. Վեյլը հրավեր հղեց 1916թ.-ի հոկտեմբերին կայանալիք հաջորդ Գլխավոր խորհրդի համար, նա հավաստիացրեց ծառայողներին, որ հավաքույթը լինելու էր բաց և ընդգրկելու էր բոլորին: «Այս կանչը (Գլխավոր խորհրդին մասնակցելու համար) ուղղված չէ Աստծո ժողովրդի որոշակի խմբի՝ հավաքվելու փակ դռների ետևում և ընդունելու օրենքներ և կանոններ ըստ իրենց հայեցողության, որոնք պահպանում են առանձին աղանդին կամ հարանվանությանը հատուկ անփոփոխ սահմանները... Կայանալիք խորհուրդը կարելի է անվանել ԲԱՅ ԱՍՏՎԱԾԱՆՆԵՐԱԿ խորհուրդ⁴⁰:

Չնայած այս հավաստիացմանը՝ Գլխավոր խորհուրդը ստեղծեց գոր-

ծող դավանանք, որը պահանջում էր, որ ծառայողներն ընդունեին Երրորդության ուղղափառ ուսմունքը: Այնուամենայնիվ, ՀՃԴ-ն սկսվում էր հրաժարումով: «Այս Հիմնարար ճշմարտությունների դավանանքը նախատեսված չէ որպես հանգանակ Եկեղեցու համար, ոչ էլ որպես հաղորդակցության հիմք քրիստոնյաների համար, այլ ընդամենը որպես միաբանության հիմք՝ միմյայն ծառայության համար»⁴¹: «Աստծո ժողովների» պատմաբան Վիլյամ Մենգիսը նկարագրեց ՀՃԴ-ի ընդունումը որպես «հեռու գնացող քայլ ձևավորված հարանվանական կազմակերպություն հիմնադրելու համար»⁴²:



Հայտարարությունը 1916թ.-ի Գլխավոր խորհրդի մասին, որտեղ ներկայացվեց և ընդունվեց Հիմնարար ճշմարտությունների դավանանքը: Այս խորհուրդը միավորեց բազմաթիվ ծառայողների իր «Բաց Աստվածաշնչյան խորհուրդ» խորագրի շնորհիվ:

Երրորդության վարդապետությունը սատարելու հետ մեկտեղ, ՀՃԴ-ն նույնպես հաստատեց հետևյալ վարդապետությունները: Աստվածաշնչի ոգեշնչված լինելը և հեղինակությունը, մարդկության անկումը, շնորհքով փրկությունը՝ հավատքի միջոցով և արտաքին ապացույցի առկայությամբ, մկրտությունը Սուրբ Հոգով՝ որպես զորացում կյանքի և ծառայության համար, լեզուները՝ որպես Հոգու

մկրտության սկզբնական նշան, սրբացումը, Եկեղեցու ավետարանչական բնույթը, Տիրոջ ընթրիքը և մկրտությունը ջրով՝ որպես խորհրդանշական ծեսեր, աստվածային բժշկությունը, հարությունն ապագայում, հափշտակությունը, որի ժամանակը կայանի չէ, նախահազարամյակային դիրքորոշումը, վերջին դատաստանը, հավիտենական պատիժը և նոր ստեղծագործությունը:

Աժ-ի առաջնորդները պնդեցին, որ նրանք չէին ստեղծել «մարդու կողմից կազմված դավանանք»՝ որևէ հարանվանություն կամ աղանդ հիմնելու համար⁴³: Այնուամենայնիվ, ՀՃԴ-ն ակնհայտորեն հաղորդակցության հիմք էր, որը հաստատեց այնպիսի չափանիշներ անդամության համար, որոնք գերազանցում էին Տիեզերական եկեղեցու անդամության չափանիշները: Շատ շուտով արվեցին աղանդավորական բնույթի հայտարարություններ: «Քրիստոսի բոլոր ճշմարիտ ծառայողները պետք է հոժարությամբ համաձայնվեն այս պարզ հիմնարար ճշմարտություններին»⁴⁴:

Հավատքի դավանանքը բացարձակապես անհրաժեշտ էր Աժ-ին՝ հիմնարար ուղղափառ վարդապետություններին հավատարիմ մնալու համար: «Աստծո ժողովների» պատմաբան գերի ՄակԳին նշեց, որ ՀՃԴ-ն օգնեց «պահել «Աստծո ժողովների» համոզմունքները ավետարանական շարժման պարզ ավանդական սահմաններում»⁴⁵: Այնուամենայնիվ, ինչպես գրում է ՄակԳին, քանի որ սկզբում Աժ-ի առաջնորդներն ունեին ոչ դավանանքային և ոչ հարանվանական հստակ դիրքորոշում, նաև մեծ տեսիլներ քրիստոնեական միաբանության մասին, Հիմնարար ճշմարտությունների դավանանքի ստեղծումը նման էր «դժկամորեն դառը հաբ կոլ տալուն»⁴⁶:

Ապագա միաբանություն

«Աստծո ժողովների» հիմնադիրները, ինչպես և մյուս վաղ հոգեգալստականները, խթանում էին քրիստոնեական միաբանության կատարելատիպը: Նրանք պարզորեն տեսնում էին, որ Աստծո ժողովրդի անմիաբանության պատճառներից մեկը դիվային ուժերն էին, որոնք անխոնջ կերպով գործում են՝ Աստծո առաքելությունը խափանելու համար: Նրանք հայտարարում էին, որ Թագավորը վերադառնում է, և որ Աստծո թագավորությունը բաժանված լինելու ժամանակ չունի: Լսեք Աստծո միսիոներերական Հոգու կոչը Քրիստոսի մարմնի միաբանության համար, և թույլ տվեք, որ այն թափանցի մինչև ձեր ոսկրերի ծուծը:

Աժ-ի վաղ շրջանի առաջնորդները սկզբնականորեն որոշել էին որևէ կերպով չմեկուսացնել իրենց շարժու-



Ի պատասխան միարարական տարածայնությանը՝ 1915թ.-ի Գլխավոր խորհուրդը հաստատեց տարբեր ձևերով կատարվող ջրով մկրտությունը: Ամենից քիչ հայտնի մեթոդներից մեկը, որը հիմնականում անհայտացել է «Աստծո ժողովներից», «եռակի ընկղման» ձևն էր, երբ հավատացյալին ընկղմում էին ջրի մեջ երեք անգամ՝ մեկական անգամ Երրորդության Անձերից Յուրաքնայուրի համար: Սայրուս Ֆոկլերը, ով «Ավետարանի խորան» եկեղեցու հովիվն էր (Միլուոկի, Վիսկոնսին), նաև առաջին Գործադիր երիցական կազմի անդամ, եռակի ընկղման կողմնակից էր: Այս լուսանկարում Ֆոկլերը (բլորից ձախ) մկրտում է մի խումբ նորադարձների Միչիգան լճում 1916թ.-ին: Հյուզո Ուրիիլը (բլորից աջ) հետագայում ծառայեց որպես Գերմանական ճյուղի վերակացու 1929-1933թթ.-ին:

մը, և չկազմել ոչ մի դավանանք: Այս համոզմունքների լույսի ներքո, «Աստծո ժողովները» կառուցվեց որպես ծառայողների և եկեղեցիների միություն՝ կենտրոնացած Մեծ Հանձնարարականի վրա: Միևնույն ժամանակ, այս առաջնորդները հավատում էին, որ անհրաժեշտ էր հաստատել հիմնարար ուղղափառ դրույթները՝ մերժելով և ակնհայտորեն ոչ սուրբգրային սխալմունքները, և հանդուրժողականությունը մեղքի հանդեպ:

Թող որ «Աստծո ժողովները» հիշի այս հիմնարար սկզբունքները՝ անդրադառնալով իր ժառանգությանը և պատրաստվելով Քրիստոսի վերադարձին: Ամեն սերունդ պետք է շարունակաբար նայի թե՛ Հոգուն, թե՛ Աստվածաշնչին՝ վերահաստատելով հավատքի հիմնարար սկզբունքները և բազմազանություն թույլ տալով ոչ էական դրույթների մեջ: Այսպես վարվելով՝ Աժ-ը կկատարի այն, ինչի մասին աղոթեց Հիսուսը. «...որ մեկ լինեն, ինչպես Մենք էլ մեկ ենք: Ես՝ նրանցում, և Դու՝ Ինձանում, որ կատարյալ լինեն միությունում, որպեսզի աշխարհը գիտենա, թե Դու ուղարկեցիր Ինձ...» (Հովհաննես 17.22-23):



Վիլյամ Զ. Մոուկարը (ԱժԱՍ-ի Աստվածաբանության մագիստրոս) թվային պահոցապան է «Ֆլաուեր» հոգեգալստական ժառանգության կենտրոնում, Սփրինգֆիլդ, Միսուրի:

ՆՇՈՒՄՆԵՐ

1. Զ. Ռոսվել Ֆլաուեր. «Խմբագրական մեկնաբանություն», «Շաբաթական Ավետարան», հուլիսի 17, 1915թ., էջ 1:
2. Զ. Ն. Բելլ. «Համագործակցություն և սեր», «Շաբաթական Ավետարան», հուլիսի 11, 1914թ., էջ 1:
3. Զ. Վ. Վելչ. «Խմբագրական», «Շաբաթական Ավետարան», հուլիսի 1, 1916թ., էջ 3:
4. Զ. Վ. Վելչ. «Խմբագրական», «Շաբաթական Ավետարան», հունվարի 15, 1916թ., էջ 3:
5. Ա. Փ. Քոլինս. «Գործնական առաջարկներ գործիչներին», «Քրիստոնեական Ավետարան», փետրվարի 20, 1915թ., էջ 3:
6. Զ. Վ. Վելչ. «Խմբագրական», «Շաբաթական Ավետարան», փետրվարի 12, 1916թ., էջ 3:
7. Զ. Ն. Բելլ. «Գործք Առաքելոց գիրքը միայն Քրիստոսի անունով մկրտության մասին», «Շաբաթական Ավետարան», հունիսի 12, 1915թ., էջեր 1, 3:
8. Զ. Վ. Վելչ. «Խմբագրական», «Շաբաթական Ավետարան», հունիսի 10, 1916թ., էջեր 3, 9:
9. Զ. Ռոսվել Ֆլաուեր. «Կարճ գրույցներ գրասենյակային խմբագրի հետ», «Շաբաթական Ավետարան», մայիսի 27, 1916թ., էջ 2:
10. Էլիս Ռեյնոլդս Ֆլաուեր. «Կիրակնօրյա դպրոցի դաս», «Շաբաթական Ավետարան», հունվարի 29 և փետրվարի 5, 1916թ., էջ 11:
11. Զ. Ռոսվել Ֆլաուեր. «Ավելի իմաստուն, քան լույսի որդիները», «Շաբաթական Ավետարան», ապրիլի 24, 1915թ., էջ 1:
12. Գ. Ուեյնրայթ. «Էկոմենիկ շարժում», Դենիել Գ. Ռեյդի և այլոց «Քրիստոնեության բառարանն Ամերիկայում» բառարանում (Դաուներս Գրոուդ, Իլլինոյս, «Ինտերվարսիթի Փրես», 1990թ.), էջեր 375-377:
13. «Վերջին օրերի հետագա նշաններ», «Շաբաթական Ավետարան», ապրիլի 10, 1915թ., էջ 1: Այս հոդվածը վերատպված էր (Է. Ա. Սեքստոն) «Խմբագրականից», «Փենսագուի Ավետարանները», ապրիլի 1, 1915թ., էջ 1:
14. Ֆլաուեր. «Ավելի իմաստուն, քան լույսի որդիները», էջ 1:
15. Նույնը:
16. Նույնը:
17. Նույնը:
18. Նույնը:
19. Նրանց ոչ դավանանքային և ոչ աղանդավորական դիրքորոշման պատճառներից մեկն

- այն էր, որ նրանց կարծիքով, դրանք բաժանություններ էին առաջացնելու: Տես Դ. Վ. Կերր. «Հավատացյալների մեկույունը», «Գուր Ռեպորտ», դեկտեմբերի 1, 1913թ., էջ 4: Զավեշտական է, բայց հետագայում Կերրը դարձավ Հիմնարար ճշմարտությունների դավանանքի գլխավոր հեղինակը:
20. Զ. Ն. Բելլ. «Խմբագրի ղեկավարությունները», «Քրիստոնեական Ավետարան», օգոստոսի 22, 1914թ., էջ 2: Տես նույնպես «Չափազանց նախանձավոր վարդապետության համար», «Քրիստոնեական Ավետարան», մարտի 28, 1914թ., էջ 6: Վիլլ Թրոթերը, ով Գործադիր երեք դարձավ, նույնպես նշեց. «Երկար ժամանակ է, ինչ առաքելական և հոգեգալստական հավատքի քրիստոնյաները փորձել են հասնել ներդաշնակության և այն այն մեկույուն, որը պատվիրված է մեզ Քրիստոսի աղոթքի մեջ, և պահպանել դրանք վարդապետությունների շուրջ համաձայնության գալու միջոցով: Նրանք ասում էին. «Ընդունիր այս աստվածաշնչյան խոսքի կամ դրույթի նույն մեկույունը, որն ընդունում եմ ես, և ես հարողդակցություն կունենամ քեզ հետ, բայց վայ քեզ, եթե դու այլ կարծիք ունենաս. ես բոլորովին կխզեմ իմ շփումը քեզ հետ, և մենք չենք կարողանա միաբան լինել» մեկնույն ժամանակ պաղելով, որ իրենք երբայրներ են: Այս սխալ նախապայմանն արդեն մոտ յոթ տարի է, ինչ տարածում է գտել, և արդեն իսկ սպառն է իրեն: Աստված պահանջում է, որ մենք թողնենք այս դիրքորոշումը, որը լիովին ծախողվել է միաբանություն բերելու հարցում, և վերադառնանք Աստծո Խոսքին»: Տես Վիլլ Թրոթեր. «Անհրաժեշտ է սիրո արթնություն», «Շաբաթական Ավետարան», ապրիլի 3, 1915թ., էջ 1:
 21. Դ. Վ. Կերր. «Երես առ երես», «Շաբաթական Ավետարան», ապրիլի 1, 1916թ., էջ 6:
 22. Բարտ Մակֆերթի. «Անհրաժեշտ է արթնություն», «Շաբաթական Ավետարան», ապրիլի 29, 1916թ., էջ 6:
 23. «Գլխավոր խորհրդի արձանագրություն», ապրիլի 1914թ., էջ 2: Տես նաև Վիլյամ Մենգիս. «Օծված՝ ծառայելու համար» (Սփրինգֆիլդ, Միսուրի, «Ավետարան» հրատարակչություն, 1971թ.), էջեր 73-74, 83-84, և Գարի Բ. Մակ-Գի. «Հոգու մարդիկ. Աստծո ժողովներ» (Սփրինգֆիլդ, Միսուրի, «Ավետարան» հրատարակչություն, 2004թ.), էջեր 111-112:
 24. «Գլխավոր խորհրդի արձանագրություն», ապրիլի 1914թ., էջ 2: Տես նաև «Գլխավոր խոր-

հուրդը հավաքվում է հոկտեմբերի մեկին», «Շարաթական Ավետարան», օգոստոսի 28, 1915թ., էջ 1, և «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1916թ., էջ 5:

²⁵ «Գլխավոր խորհրդի արձանագրություն», ապրիլ, 1914թ., էջ 4: «Խոսք և վկայությունում» գետեղված սկզբնական կոչի հինգ նպատակներից առաջինը հետևյալն էր. «մենք հավաքվում ենք համաձայն Գործք Առաքելոց 15-ի, որպեսզի աղոթքով և Աստծո խոսքի ուսումնասիրությամբ և Սուրբ Հոգու առաջնորդությամբ կարողանանք ավելի լավ հասկանալ, թե ինչ է Նա ցանկանում, որ մենք սովորեցնենք, և այսպիսով ազատվենք բազմաթիվ բաժանություններից կապաված վարդապետությունների և տարբեր անունների հետ, որոնց ներքո հոգեգալստականները գործում և համայնվում են, և այս ամենի մեջ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ պետք է լինի մեր գլխավոր նպատակը»:

²⁶ Թեև Խորհուրդը չհաստատեց ամբողջական վարդապետությունը Երրորդության մասին, այն ընդունեց մի պնդում, որն անվերապահորեն վերաբերվում էր Երրորդությանը. «Քանի որ Աստված մեր երկնային Հայրը, ուղարկեց Իր միածին Որդուն՝ Տեր Հիսուս Քրիստոսին, այս աշխարհի, Ով գնեց և փրկեց անկում ապրած մարդուն Իր թանկ արյամբ, և դուրս կանչեց աշխարհից և փրկեց մի ժողովուրդ, որոնցից Նա կառուցեց և հաստատեց Իր Եկեղեցին... և կազմակերպեց և մկրտեց այն Սուրբ Հոգով...», «Գլխավոր խորհրդի արձանագրություն», ապրիլ, 1914թ., էջ 4:

²⁷ Տես Ջո Նյումեն. «Ռասան և «Աստծո ժողովներ» եկեղեցին» (Յանգպաթուն, Նյու Յորք, «Կամբրիա Փրես»), 2007թ., էջեր 65-67, և Դարին Ջ. Ռոջերս. «Աստծո ժողովները և երկար ճանապարհը դեպի ուսայական հաշտությունը», «Աստծո ժողովների ժառանգությունը», հմ. 28 (2008թ.), էջեր 50-61, 66:

²⁸ Յ. Ն. Բեյլ. «Աստծո ժողովների մեծ նոյեմբերյան հավաքույթը Սթոուն Եկեղեցում, Չիկագոյում, նոյեմբերի 15-ից 29-ը, 1914թ.», «Քրիստոնեական Ավետարան», հոկտեմբերի 3, 1914թ., էջ 1:

²⁹ Նոյնը:

³⁰ Նոյնը:

³¹ Յ. Ն. Բեյլ. «Գլխավոր խորհրդի նպատակները», «Քրիստոնեական Ավետարան», դեկտեմբերի 19, 1914թ., էջ 1:

³² Մեկ այլ տեղում Բեյլը պնդում է. «Այն հարցերում, որոնք էական և կենսականորեն կարևոր են Ավետարանի հավատքի համար, մեր դիրքորոշումն է՝ «Այսպես է ասում Տերը», իսկ այն հարցերում, որոնք հիմնարար չեն հավատքի համար և պարզորեն չեն սահմանված խոսքի որևէ հատվածում, մենք ազատության կողմնակիցներ ենք. միայն թե այս անշան և ոչ ամբողջովին պարզ հարցերից որևէ մեկը

չպետք է վերաճի բաժանության և վիճաբանությունների առարկայի սրբերի միջև, որովհետև խոսքը պարզորեն դեմ է նման բաների, և զգուշացնում է մեզ, որ նշանակենք նրանց, ովքեր բաժանություններ են առաջացնում մեր մեջ հակառակ խոսքին, և պատվիրում է մեզ չհաղորդակցվել այդպիսիների հետ»: Տես Յ. Ն. Բեյլ. «Գործք Առաքելոց գիրքը միայն Քրիստոսի անունով մկրտության մասին», «Շարաթական Ավետարան», հունիսի 12, 1915թ., էջ 1: Նա նույնպես պնդում է. «Մենք կանգնած ենք այս բաների վրա այնպես, ինչպես որ Աստված է գրել խոսքում: Եթե մենք ունենք հստակ ուսմունք և միանշանակ պնդումներ խոսքում, մենք հիմնվում ենք դրանց վրա: Այն հարցերում, որոնցում ոչ մի կողմն էլ չունի սրանք, ամեն կողմը պետք է իրավունք ունենա գործածելու իր գաղափարային մեկնությունը: Ամեն մեկը կարող է պահպանել իր մեկնությունն այն հարցերում, որոնցում մենք չունենք «Այսպես է ասում Տերը» դրանք ժխտելու համար, և ամեն մեկը պետք է ընդգրկվի հաղորդակցության մեջ, բայց ոչ ոք չպետք է թույլատրվի ստանալ հարկադրելու իր մեկնաբանությունն այլ մարդկանց, ովքեր այլ կերպ են դիտարկում տվյալ հարցը և անկեղծ են իրենց դիտարկման մեջ»: Տես Յ. Ն. Բեյլ. «Հարցեր և պատասխաններ», «Շարաթական Ավետարան», օգոստոսի 12, 1916թ., էջ 8:

² Ռուսվել Ֆլաուերը նշում է, որ «մենք չենք կարող լրջորեն վերաբերվել մարդկանց կողմից հորինված արտահայտություններին, որոնք չկան Աստծո խոսքում: Մենք հավատում ենք, որ Սուրբ գրքում շարադրված են բոլոր էական վարդապետությունները և գործերը: Մենք չենք կարող որևէ վարդապետություն ընդունել զուտ այն պատճառով, որ ինչ-որ մեկը պնդում է, որ ժամանակակից հայտնությունն ունի այդ մասին»: Տես Ջ. Ռուսվել Ֆլաուեր. «Ներածական հայտարարություն. Այն սկզբունքների վերաբերյալ, որոնք ընդգրկված են «Նոր ուղղության» մեջ Երիցական կազմի կողմից», «Շարաթական Ավետարան», մայիսի 22, 1915թ., էջ 1:

² Վ. Վեյչը նմանապես գրում է. «Սա չի ենթադրում, որ չպետք է լինի ոչ մի բաժանություն, որովհետև մեղքը և մուրությունը կան և կլինեն մեր միջև, և դրանց դեպքում բաժանությունը պարտադիր է: Բաժանության այս վերջին տեսակն օգտակար է, ոչ թե վնասարար եկեղեցու համար: Եկեղեցին ավելի ուժեղ է դառնում, երբ մաքրում է ինքն իրեն մեղքից և սխալմունքներից: Այնուամենայնիվ, այս օրերին նա լրջորեն տկարացած է ոչ անհրաժեշտ բաժանությունների պատճառով: Տես Ջ. Վ. Վեյչ. «Խմբագրական», «Շարաթական Ավետարան», հունիսի 10, 1916թ., էջ 9:

Մի հեղինակ պարզապես պնդում է. «Ջո-

հաբերեք ոչ էական բաները հանուն միաբանության. Երբեք անհամաձայնություն միջոցաբերեք, քանի դեռ խոսքը կենսականորեն կարևոր սկզբունքների մասին չէ, որոնք անհրաժեշտ են փրկության և ողջամիտ վարդապետության համար: Տես «Աստծո տանը», «Շարաթական Ավետարան», օգոստոսի 26, 1916թ., էջ 6: Տես նաև Էդվարդ Արմսթրոնգ. «Ողջամիտ և ոչ ողջամիտ գործեր», «Շարաթական Ավետարան», հուլիսի 10, 1915թ., էջ 1:

³³ «Գլխավոր խորհրդի արձանագրություն», ապրիլ, 1914թ., էջեր 6-8: Հետագայում (1935թ.-ից) Գլխավոր խորհուրդը փոխեց իր որոշումը՝ թույլ տալով նշանակել կանանց հովվական ծառայություն:

³⁴ Յ. Ն. Բեյլ. «Հարցեր և պատասխաններ», «Շարաթական Ավետարան», օգոստոսի 12, 1916թ., էջ 8:

³⁵ «Ամբողջական սրբացում» բոլոր հավատացյալների նպատակով, կետ 7. «Սուրբ գիրքը սովորեցնում է սրբության կյանքի մասին, առանց որի ոչ մի մարդ չի տեսնի Տիրոջը: Սուրբ Հոգու գործողությամբ մենք կարող ենք հնազանդվել «սուրբ եղեք, որ Ես սուրբ եմ» պատվիրանին: Ամբողջական սրբացումը՝ Աստծո կանքն է բոլոր հավատացյալների համար, և դրան պետք է քանակաբար ձգտել՝ հնազանդվելով Աստծո խոսքին: Եբր. 12.14, Ա Պետ. 1.15, 16, Ա Թեաղ. 5.23, 24, Ա Հովի. 2.6», «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1916թ., էջ 11:

³⁶ Ջ. Ռուսվել Ֆլաուեր. «Նախնական հայտարարություն», «Շարաթական Ավետարան», մայիսի 22, 1915թ., էջ 1: Տես նաև Յ. Ն. Բեյլ. «Վերևում գետեղված Նախնական հայտարարության խմբագրական բացատրություն», «Շարաթական Ավետարան», մայիսի 22, 1915թ., էջ 1:

³⁷ Յ. Ն. Բեյլ. «Կա ապահովություն խորհրդի մեջ», «Շարաթական Ավետարան», սեպտեմբերի 18, 1915թ., էջ 1:

³⁸ «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1915թ., էջեր 5-6:

³⁹ Նոյնը, 8:

⁴⁰ Ջ. Վ. Վեյչ, «Խմբագրական», «Շարաթական Ավետարան», հունիսի 24, 1916թ., էջեր 3, 7:

⁴¹ «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1916թ., էջ 10:

⁴² Մենզիս, էջ 118:

⁴³ Յ. Ն. Բեյլ. «Զեկույց ընդունման մասին», «Շարաթական Ավետարան», նոյեմբերի 25, 1916թ., էջ 8: Տես նաև Ջ. Վ. Վեյչ. «Մենք ուրախությամբ հրապարակում ենք վերևում գետեղված գեկույցը», «Շարաթական Ավետարան», նոյեմբերի 25, 1916թ., էջ 8:

⁴⁴ «Եվ մեծ շնորհ կար նրանց ամենի վրա», խմբագրական, «Շարաթական Ավետարան», նոյեմբերի 11, 1916թ., էջ 8:

⁴⁵ ՄակԳի, էջ 184:

⁴⁶ Նոյնը, էջ 122:

Շարունակելի էջ 45-ից / Ամերիկայի միսիոներական դաշտը. Միջնակուսային ծառայություն

Ներքին միսիայի բաժանմունքի (Տես «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1945թ., էջեր 31-33: Այն վերանվանվեց Հատուկ ծառայության բաժանմունքի 1957թ.-ին, որը, իր հերթին, դարձավ Հատուկ ծառայության բաժին 1973թ.-ին: Այն ևս մեկ անգամ վերանվանվեց Միջնակուսային ծառայության բաժին 1984թ.-ին:

⁵³ «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1945թ., էջ 35:

⁵⁴ «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1957թ., էջ 13:

⁵⁵ Հատուկ ծառայության բաժնի գործառոցից gorc unem, verjactnem, ketanq dzer hamayjների թվում էր «Շառայությունը Միացյալ Նահանգների այն ժողովուրդների միջև, ովքեր հատուկ օգնության կարիք ունեն մշակութային սահմանափակումների, հաշմանդամության կամ աշխարհագրական մեկուսացման պատճառով», «Գլխավոր խորհրդի արձանագրություն»,

1973թ., էջ 178:

⁵⁶ «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1973թ., էջ 107: Նույնպես, 1973թ.-ին «Քրիստոսը բոլորի համար» պարբերականը փոխարինեց «Ամերիկայի միսիա» պարբերականին՝ ներկայացնելով գոյություն ունեցող տարբեր հատուկ ծառայություններ:

⁵⁷ «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1973թ., էջեր 88-89:

⁵⁸ «Գլխավոր խորհրդի արձանագրություն», 1985թ., էջ 26:

⁵⁹ Լինո, «Աստծո ժողովների Ներքին միսիայի պատմությունը», էջ 178:

⁶⁰ Վաղ տարիներին Ազգային ներքին միսիայի բաժինը ղեկավարվում էր «Աստծո ժողովների» Գլխավոր վերակացուի օգնականներից մեկի կողմից: 1950-ական թվականների ընթացքում Գլխավոր վերակացուի այդ օգնականը դարձավ Ազգային Ներքին միսիայի բաժնի գործադիր տնօրենը, իսկ Ներքին միսիայի բաժնի քարտուղարը դարձավ առանձին պաշտոն, որի պարտականությունն էր՝ անմիջականորեն ղե-

կավարել այդ բաժինը, ինչպես նաև Հատուկ ծառայությունների բաժանմունքը (ներկայիս Միջնակուսային ծառայությունը):

⁶¹ «Աստծո ժողովների» ԱՄՆ-ի Միսիայի 2013թ.-ի վիճակագրությունը:

⁶² Միջնակուսային ծառայության գրքույկ, 2011, էջ 3:

⁶³ Տես Ընկերակցության պաշտոնական փաստաթուղթը, պատրաստված Շեյլի Մաքքեյի կողմից, ով Գլխավոր վերակացուի գրասենյակի հետազոտական աշխատանքների ղեկավարն է, ինչպես նաև Ազգային կամ Լեզվական Ընկերակցությունների փաստաթուղթը, պատրաստված Ազգային հարաբերությունների գրասենյակի կողմից: Ազգային կամ Լեզվական շրջանները չեն եղել ԱՄՆ Միսիայի ղեկավարության ներքո 1973թ.-ից: Ազգային կամ Լեզվական Ընկերակցությունները, որոնք հաստատվում էին 2009թ.-ից հետո, գտնվում էին ոչ թե ԱՄՆ-ի Միսիայի, այլ Ազգային հարաբերությունների գրասենյակի ղեկավարության ներքո:



Ինչը դրդեց նրանց մտածել, որ իրենք կարող էին. «Աստծո ժողովների» վաղ շրջանի տաս կին միսիոներ

Ռոզմարի Դահեր Կովալսկի

Կանայք կարևոր դեր էին կատարում ամբողջ աշխարհում Ավետարանը և Սուրբ Հոգու մկրտությունը տարածելու մեջ «Աստծո ժողովների» առաջին տասնամյակների ընթացքում: Նրանց շրջապատող մշակութային կարծիքով, այս կանայք ոչ ուժեղ էին, և ոչ էլ իդեալական թեկնածուներ էին միսիայի համար: Այնուամենայնիվ, նրանք բաց չթողեցին ավետարանելու, նորադարձներին աշակերտելու և մարդասիրական հոգատարություն ցուցաբերելու հնարավորությունները: Նրանք հարատևեցին օտար երկրներում՝ հաղթահարելով հոգևոր հակառակությունը, ֆիզիկական վտանգները, զգացմունքային ծանրությունները և այն մշակութային շրջանները, որոնք ընդդիմանում էին կանանց ծառայությանը:

Ինչը դրդեց նրանց մտածել, որ իրենք կարող էին: Կին միսիոներների նամակները և միսիոներական գեկույցները ցույց են տալիս, որ Հոգու մկրտությունը նրանց կոչման և ծառայության որոշիչ գործոնն էր: Նրանք կարծում էին, որ ապրում էին վերջին օրերում Քրիստոսի վերադարձից առաջ, և այն մարդիկ, ովքեր անձամբ ընդունում էին Քրիստոսին՝ որպես Փրկիչ, կհափշտակվեին դեպի իրենց հավիտենական վարձատրությունը,

իսկ չապաշխարող և անտեղյակ մարդիկ, ովքեր մերժում էին Քրիստոսին, հավիտյան պատիժ էին կրելու: Չփրկված մարդկանց դժոխք գնալու սարսափը մղում էր հոգեգալստականների օտարերկրյա միսիոներական դաշտեր: Նրանք հավատում էին, որ Աստված սպառազինում էր մշակներին Հոգու մկրտության միջոցով վերջին հոգևոր հունձքի համար:

Այդ առաջադրանքի հրատարակությունը պահանջում էր, որ յուրաքանչյուրը քարոզեր Ավետարանը: Աստվածային կոչումն ընդունելով՝ սովորական կանայք զգացին, որ արտոնություն ունեին ծառայելու ազգերին որպես Աստծո արտասովոր ծառաներ, թե՛ անելով այն, ինչը շատերը «կանացի աշխատանք»² էին համարում, թե՛ ավետարանելով և եկեղեցիներ հիմնելով, ինչպես նրանց տղամարդ ծառայակիցները:

«Աստծո ժողովների» վաղ շրջանի միսիոներներն առնվազն երեք տեսակի մարդիկ էին: Առաջինը՝ նրանք, ովքեր նախկինում ծառայել էին որպես միսիոներ ոչ հոգեգալստական եկեղեցիներում: Նրանք իրենց կամքով միացել էին «Աստծո ժողովներին» այն համոզմունքի պատճառով, որ Հոգու մկրտությունը՝ փրկությանը հաջորդող կարևոր վերապրում է: Երկրորդ տեսակի մարդիկ փորձված միսիոներներ էին, որոնք դուրս էին արվել իրենց ոչ հոգեգալստական հարանվանությունների միսիոներական խորհուրդների կողմից Հոգու մկրտությունը վերապրելուց հետո:

Կազմակերպված գործունեության և գործող հաստատությունների պակասը Հոգեգալստական շարժման սկզբնական շրջանում թույլ տվեց կին միսիոներներին ծառայել ստեղծարար կերպով՝ գերազանցելով կանանց ծառայության ընդունված չափանիշներն Ամերիկայում: Աննա Ս. Ռեյֆը՝ Սթոուն եկեղեցու պարբերականներից մեկի խմբագիրը, նույնիսկ մտահոգություն արտահայտեց, որ չափազանց շատ կանայք միսիայի էին գնում, և շատ քչերն էին ծառայում տանը, քանի որ Միացյալ Նահանգներից դուրս կանանց համար մեծ հնարավորություններ էին ընձեռնվում»³:

Այս անվեհեր կին միսիոներները հավատում էին, որ նրանց կոչումը երաշխավորված էր Սուրբ Հոգու մկրտությամբ: Նման աստվածային հավանության դեպքում և միսիոներների մշտական կարիքի պայմաններում կանայք կամ անտեսում էին, կամ հանդուրժում էին այն օրենքները, որոնք փորձում էին սահմանափակել նրանց ծառայությունը: Նրանք սկսեցին ցանկացած հնարավոր աշխատանքից ակնկալելով Սուրբ Հոգու թույլատրությունը, առաջնորդությունը և մատակարարումը միսիոներական դաշտում: Ոմանք հատկապես խիզախ և համարձակ էին, և գնում էին վտանգավոր վայրեր, որտեղ Արևմուտքի այլ բնակիչներ չէին համարձակվում ոտք դնել:

Չունենալով ֆինանսական և ադմինիստրատիվ աջակցություն, որը տրամադրվում էր հաստատված հարանվանություններում գոյություն ունեցող կանանց միսիոներական ընկերությունների կողմից՝ հոգեգալստական կանայք ինքնուրույն էին հովանավորներ գտնում իրենց տնային խմբակների անդամներից, ընկերներից և ընտանիքներից: Նրանք նույնպես արդյունավետ կերպով նոր միսիոներներ էին հավաքագրում: Հայտնվելով միսիոներական դաշտում՝ կանայք տարածում էին Հոգու մկրտության սպասումը՝ նոր լեզուներով խոսելու ապացույցով, թե՛ դարձի եկած տեղաբնակների, թե՛ այլ հարանվանությունների պատկանող իրենց ծառայակիցների միջև: Նրանք կապ էին պահպանում այլ հարանվանություններից ուղարկված միսիոներների հետ, ինչպես նաև իրենց աջակցող հոգեգալստականների հետ, և մինչև միսիոներական դաշտում հայտնվելը, և իրենց միսիայի ընթացքում:

Դժբախտաբար, շատ նորաթուխ կին միսիոներներ հեռացան տանից առանց բավարար ռեսուրսների: Հոգեգալստական հավատքի միսիոներները նույնպես տուժեցին, երբ նրանց հովանավորները դադարեցին օգնել կամ սոսկալ նրանց: Ոմանք հուսահատորեն նամակներ էին ուղարկում՝ բացակայելով, որ դաշտերի հունձքը պատրաստ էր, բայց չկային բավականաչափ աշխատողներ կամ ռեսուրսներ

Հոգեգալստական կին միսիոներներն ընդունում էին չարչարանքը որպես իրենց միսիոներական ծառայության մասը:

ավետարանչության անավարտ գործի համար: Նրանք հասցնում էին մատակարարում ստանալը հոգևոր աստիճանի՝ համարելով այն աստվածային հոգատարություն մարմնի, անձի և հոգու համար: Մյուսները հաղորդում էին, որ թեթևություն էին զգում, երբ տանը գտնվող նրանց աջակցիներն աղոթում էին նրանց համար կամ ֆինանսավորում էին հատուկ կարիքներ միսիոներական դաշտում:

Այս կանայք գրում էին սովերի և բնական աղետների մասին, որոնք պահանջում էին ավելի մեծ անձնական և եկեղեցական միջոցներ, քան նրանք ստանում էին: Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակ տրանսպորտային միջոցները սահմանափակ էին, ինչի պատճառով ուղարկվող միջոցներն ուշանում էին և ապրանքներն ավելի էին թանկանում, այնպես որ միսիոներները մնում էին առանց միջոցների: Որոշ կանայք, ելնելով անհրաժեշտությունից, այնքան էին դիմանում առանց միջոցների, որ քաղց և խիստ զրկանքներ էին կրում, կամ տկարանում էին հիվանդություններից: Երբեմն նորությունները միսիոներական դաշտերից ընդգրկում էին ծանուցումներ միսիոներների, նրանց կանանց կամ երեխաների մահվան մասին, հաճախ այն պատճառով, որ չկային բավականաչափ միջոցներ բժշկական օգնություն ստանալու, ավելի լավ կլիմայական պայմաններում կազդուրվելու կամ հանգստի նպատակով արձակուրդ վերցնելու և տուն վերադառնալու համար:

Այնուամենայնիվ, հոգեգալստական կին միսիոներներն ընդունում էին չարչարանքը որպես իրենց միսիոներական ծառայության մասը: Նախևառաջ՝ Հիուսի չարչարանքներին միանալը արտոնություն էր նրանց համար: Երկրորդը՝ նրանք ակնկալում էին հալածանքը, քանի որ Քրիստոսի ավետաբերները պետք է մերժվեին և դժվարություններ կրեին մինչև Նրա վերադարձը: Որպես կանոն, նրանց կյանքի պայմանները շատ ցածր էին տան պայմաններից: Կոկիկ հյուսիսային ամերիկոսիները պետք է շատ հարմարվող լինեին՝ օտարերկրյա գյուղերում և քաղաքներում ապրելու համար: Գերտրուդ Մորիսոնը գրում էր Լիբերիայից. «Ամեն քայլափոխին կեղտ և հիվանդություն կա, բայց Աստված ավելի, քան կարող է պահել այն, ինչ մենք հանձնում ենք Նրա ձեռքերի մեջ»⁴: Որոշ կանայք ապրում էին կիսակառույց տներում և անավարտ շենքերում, մինչ տղամարդիկ զբաղված էին այլ միսիոներական գործերով:

Երկար ժամանակվա ընթացքում միսիոներական դաշտում չկային բավականաչափ տղամարդիկ, ինչի պատճառով կանայք ստանձնեցին ավանդականորեն տղամարդկային համարվող գործեր, օրինակ՝ շինարարությունը, որը կդատապարտվեր տանը որպես «ոչ կանացի»⁵:

Աստվածաշնչյան դպրոցները և ուսուցումները գործնական հմտություններ չէին տվել նրանց, այնպես որ շատերը չէին կարողանում կառուցել կամ վերանորոգել միսիոներական կայանները կամ պայմանավորվել վարձավճարի կամ սննդի գների մասին:

Այս կանայք մշտապես հաստատում էին, որ հենվում էին Սուրբ Հոգու գործության վրա միսիոներական գործում: Նրանք հարմարվում էին իրենց շրջապատող պայմաններին և հանգամանքներին՝ հավատարմով, որ Աստված կառաջնորդեր, թե որտեղ, ինչպես և երբ վկայել: Գերբնականը նրանց առօրյայի մասն էր: Նրանք համեմուն էին իրենց զեկույցներն Աստծո ցնցող միջամտություններով և գերբնական օգնությունով, որը գերազանցում էր նրանց տաղանդները, կարողությունները և պատրաստվածությունը: Աստված ուղեկցում էր Ավետարանի հոչակումն աստվածային առաջնորդությամբ, բժշկություններով, դիվային ուժերը հաղթող գործությամբ և այլ հրաշքներով:

Տաս կանայք, որոնք ներկայացված են ստորև, նկարագրում են «Աստծո ժողովների» վաղ շրջանի կին միսիոներներին, ավետարանիչներին, եկեղեցիներ հիմնադրողներին և սոցիալական աշխատողներին:

Երեք չամուսնացած կին միսիոներ

Բլանշ Էվիթի (1887-1968թթ.)



Բլանշ Էվիթին մկրտվեց Հոգով և կանչվեց որպես միսիոներ վաղ հոգեգալստական առաջնորդ Գաստոն Բ. Քեշվելի ծառայության ներքո: Բարձրագույն կրթություն ստանալուց հետո և Քրիստոնեական միսիոներական միության (ՔՄՄ) հիմնադիր Ա. Բ. Սիմփսոնի խրախուսանքի շնորհիվ Էվիթին հաղթահարեց միսիոներ դառնալու իր սկզբնական դժկամությունը, և 1911թ.-ին ուղևորվեց Չինաստան⁶:

Սկսելով ՔՄՄ-ի կազմում՝ Էվիթին միացավ ԱՄ-ին 1919թ.-ին և աշխատեց Էլիզաբեթ Քանքլի հետ Չինաստանի Սամ Շոյ և Լո Պաու քաղաքներում: Էվիթին բեղուն հեղինակ էր և միսիոներների արդյունավետ պաշտպան, որովհետև նա չէր վախենում անկեղծորեն խոսել իր կյանքի մասին միսիոներական դաշտում և միջոցներ խնդրել:

Նորադարձները հաճախ էին արդունավետ ավետարանիչներ դառնում: Էվիթին զեկույցեց, որ մի չինացի կին, ով փրկվել էր և մկրտվել էր Սուրբ Հոգով, արագորեն ուշագրավ ծառայող էր դարձել:

«1926թ.-ին քույր Շամի ծառայության միջոցով 300 մարդ ընդունեց Հոգու Մկրտությունը: Արթնության գաղտնիքը՝ նրա աղոթքի կյանքն է: Նա աղոթում է գիշերներ շարունակ՝ ամեն ուրբաթ ողջ օրվա ընթացքում ծոմ պահելու և աղոթելու հետ մեկտեղ: Երբեմն մարդիկ գալիս են նրա մոտ սկսած առավոտյան ժամը վեցից, և ողջ օրը եկողների և գնացողների հոսքը չի դադարում... Նրա միջոցով այնքան շատ նշաններ և հրաշքներ են լինում, որ նա գիտակցում է վտանգն այն մասին, որ թշնամին փորձում է հպարտություն բերել իր կյանքում դրանց պատճառով»⁸:

Բլանշն ավարտեց Կենտրոնական Աստվածաշնչյան ինստիտուտը (ԿԻ) 1929թ.-ին՝ երկարատև արձակուրդի ընթացքում: Նա ծառայեց որպես ավետարանիչ Չինաստանի հարավում գտնվող Կվանզուի գավառում Ռենա Բոլդուինի հետ (ով հետագայում ամուսնացավ Ալեքսանդր Լինդսիի հետ): Բլանշը և Ռենան չկարողացան վերադառնալ Չինաստան 1941թ.-ին՝ Չինաստանի և ճապոնիայի պատերազմի պատճառով, այնպես որ նրանք ուղևորվեցին Ֆիլիպիններ⁹: Ճապոնացիները երկու անգամ բանտարկեցին նրանց. առաջին անգամ՝ մեկ ամսով, 1942թ.-ին, և հաջորդ անգամ՝ ութ ամսով, 1944-1945թթ.-ին: Ամերիկյան զորքերը հրաշքով փրկեցին այս երկու կանանց 1945թ.-ի փետրվարի 23-ին՝ նրանց մահապատժի օրը¹⁰, և նրանք վերադարձան ԱՄՆ¹¹:

Էվիթիի թոյլ առողջության պատճառով ԱՄ-ի միսիոներական խորհուրդը թոյլ չտվեց նրան վերադառնալ միսիո-

ներական դաշտ: Նա ծառայեց քանվեց տարի Չինաստանում և չորս տարի Ֆիլիպիններում: Վերադառնալով տուն՝ նա սովորեցնում էր Կիրակնօրյա դպրոցում և շաբաթական աղոթք էր վարում Աստվածատանում՝ Ջորջիայում, մինչև 1986թ.-ը՝ իր մահվանից մի քանի շաբաթ առաջ¹²: Համաձայն մի ձեռագիր նշման իր անձնական գործի մեջ՝ Բլանշը մեծ ժառանգություն էր թողել Արտաքին միսիայի բաժնին. «Չրկելով իրեն՝ նա թողել էր ավելի, քան 20.000 դոլար ԱՄ-ին»¹³:

Բերնիս Լի (1879-1958թթ.)



Բերնիս Ս. Լին ծնվել է Բենսոնում՝ Իլլինոյս նահանգում: Նա դպրոցական ուսուցչուհի դարձավ, իսկ հետո երկուական տարի տրամադրեց գերմաներենը և հինգիս ուսումնասիրելու համար, մինչև միսիոներ դառնալու դիմումը լրացնելը¹⁴: Նա մկրտվեց Հոգով 1907թ.-ին, և անմիջապես սկսեց ավետարանել:

Հոգեգալստական առաջնորդներ Յ. Ն. Բեյլը և Լ. Ս. Հոլլը ծառայության նշանակեցին Լիին 1910թ.-ին՝ որպես միսիոներ Հյուսիսային Հնդկաստանում¹⁵: Նա և Էդիթ Բոն ստանձնեցին Ուսկա Բագարում գտնվող բորոտների կացարանի տնօրինությունը, որը հիմնել էր Միննի Աբրամսը 1913թ.-ին: Նրանք հիմնեցին ևս մեկ կացարան բորոտների համար 225կմ. հեռավորության վրա՝ Հյուսիսային Հնդկաստանի Չուպրա քաղաքում, 1915թ.-ին: Բոն ստանձնեց Չուպրայի ղեկավարությունը, բայց մահացավ 1920թ.-ին: Լին գրում էր իր հովանավորներին, թե որքան էր կարոտում իր ընկերուհուն և

գործակցին¹⁶: Նա ղեկավարում էր երկու բնակավայրերը բորոտների համար, մինչև որ նրան միացավ Վայոլեթ Շելունմեյքերը՝ Չուպրան տնօրինելու համար¹⁷:

1921թ.-ին Բերնիսը տեղափոխվեց Աժ՝ որպես միսիոներ: Արդեն 1925թ.-ին, նա հոգ էր տանում քառասունինը երեխայի համար և տնօրինում էր Ուսկա Բագարի մանկատունը: Բերնիսը կիսվում էր իր ծառայողական հաջողություններով և ծառայելու մշտական ցանկությամբ. «Անցած մարտին՝ երբ ես մեկնում էի, բոլորը մեր կացարանում արդեն ընդունել էին Տեր Հիսուս Քրիստոսին և հնազանդվել էին Նրան մկրտությամբ, բացի յոթ հոգուց... իմ դուրը գալիս է մտածել այն մասին, որ եթե Հիսուսը մի փոքր էլ ուշանա, մի քանի ամսից ես նորից կկարողանամ վերադառնալ¹⁸: Նա վերադարձավ 1930թ.-ին՝ երրորդ ծառայողական ժամկետով, Լիդիա Վոի հետ (ավելի ուշ՝ Տկն. Սիդնի Բրայանթ), ով ԿԱԻ-ի շրջանավարտ էր:

Բերնիսը սրտի հիվանդություն ունեցավ ունաստիկ տենդի պատճառով 1935թ.-ին, և անցկացրեց 1936թ.-ի սեպտեմբերից մինչև 1938թ.-ի մայիսը արձակուրդի մեջ, մինչև իր վերջին ժամկետը: Նա վերջնականորեն տուն վերադարձավ 1940թ.-ին՝ խաթարված առողջությամբ: Նա բարեխոսում էր միսիայի համար մինչև իր մահը իր քրոջ տանը՝ Օբլենդում, Կալիֆորնիայում, 1958թ.-ին:

Էլիս Վուդ (1870-1961թթ.)



Էլիս Վուդը ծնվել է Բելվիլում՝ Օնտարիոյում, Կանադայում: Նա հաճախեց «Ընկերների մասնագիտական

դպրոց» (Քուեյբերական) Փիքրինգում՝ Օնտարիոյում, և հովվական ծառայություն սկսեց Բիլոյթում՝ Օհայոյում: Նա թողեց հովվական ծառայությունը 1898թ.-ին՝ միսիոներ դառնալու համար¹⁹: Նրա միսիոներական կարիերան Կենտրոնական և Հարավային Ամերիկայում տևեց վաթսուներկու տարի: Վուդը սկսեց իր միսիոներական գործունեությունը Վենեսուելայում և Պուերտո Ռիկոյում՝ ՔՄՄ-ի կազմում²⁰: 1909թ.-ին նա դարձավ առաջին հոգեգալստական միսիոներն Արգենտինայում, ով թողեց ՔՄՄ-ը և սկսեց ինքնուրույն գործել՝ առանց որևէ միսիոներական խորհրդի աջակցության²¹: Վուդը սկսեց իր երրորդ միսիոներական ժամկետը 1910թ.-ին որպես ավետարանիչ Արգենտինայի էնտրե Ռիոս գավառի Գուալեգայույու քաղաքում²²:

Էլիսի օրագրերը ցույց են տալիս, որ նա համարձակ, համառ և նյարդային հիվանդությունների ենթակա անձնավորություն էր: Նշանակվելով որպես Աժ միսիոներ 1914թ.-ին²³, նա այն փորձառու ծառայողներից մեկն էր, ով վստահություն և կայունություն էր հաղորդում Աժ-ին իր միսիոներական գործունեությամբ²⁴: Տարիներ շարունակ նա ղեկավարում էր Արգենտինայի Վեյնտիսինկո դե Մայո քաղաքի մոտակայքում գտնվող եկեղեցիները: Նրա կողմից թողած ծառանգության թվում է օգնությունը Արգենտինայի «Աստծո ժողովների» «Յունիոն դե լաս Ասամբլեաս դե Դիոսի» հիմնադրման մեջ 1917թ.-ին²⁵:

Վուդի ծառայության մեջ գրանցվել էր մի դեպք, երբ դարձի եկածներից մեկը խոսել էր մարդկային լեզվով, որը երբեք չէր սովորել²⁶: Մեկ այլ դեպքում, Արգենտինայի հնդկացիների համար գրեթե տաս տարի աղոթելուց հետո, նա գրել էր Սուրբ Հոգու հրաշալի դրսևորման մասին միսիոներական միջոցառումներից մեկի ժամանակ.

«Հանկարծ Սուրբ Հոգին իջավ հարյուրի չափ հնդկացիների վրա, ովքեր ծնկի էին եկել և աղոթում էին: Սկզբում եղավ ուժգին ցնցում՝ երկրաշարժի պես, և ձայն՝ քամու և թնդանոթի զարկին պես: Հնդկացիները միաժամանակ ոտքի ելան և սկսեցին ծափահարել և գոչել «Ավերյա», իսկ հետո սկսեցին խոսել լեզուներով... Սուրբ Հոգու այս թափման արդյունքում շատ մարդիկ փրկություն են ստանում»²⁷:

Էլիսը վերադարձավ Լեյքլենդ, Ֆլորիդա, 1960թ.-ին, անընդմեջ և նեկորդային հիսունամյա ծառայությունից հետո, և թոշակի անցավ Աժ-ի «Բեթանի» տարեցների համալիրում, որտեղ և մահացավ մեկ տարի անց²⁸:

Յոթ ամուսնացած կին միսիոներ

Մարգարեթ Մեյ Գեյլոր Քեյլի
(1889-1933թթ.)



Մարգարեթ Մեյ Գեյլորը ծնվել է Մազնոլիայում՝ Հյուսիսային Կարոլինայում: Նա ամուսնացավ Ջորջ Մ. Քեյլիի (1888-1975թթ.) հետ 1907թ.-ին և դարձավ միսիոներ Չինաստանում 1910թ.-ին²⁹: Քեյլիները հիշում էին իրենց հոգեգալստական դառնալու մասին.

«Մենք Չինաստան եկանք 1910թ.-ին՝ որպես «Ազատ կանգնի մկրտականներ» հարանվանության անդամներ, ովքեր խոստացել էին, որ անելու էին մեզ համար այն ամենը, ինչ կարող էին: Բայց մոտ երկու տարի անց մեզ հետաքրքիր որոշ աստվածաբանական հարցերի շուրջ ունեցած տարակարծությունների պատճառով, և մեր հավատարմագրերը ետ կանչվեցին: Մենք տանն էինք, երբ դա տեղի ունեցավ, և մենք այցելեցինք տարբեր հոգեգալստական կենտրոններ... և Աստված ընկերներ տվեց մեզ՝ բարձրացնելով մի շարք հովանավորներ, ինչը հնարավորություն տվեց մեզ կրկին վերադառնալ Չինաստան և վերսկսել մեր գործը»³⁰:

Մարգարեթը ծառայության նշանակվեց Հոգեգալստական «Աշխարհի ժողովների» կողմից 1915թ.-ին, և տեղափոխվեց Աժ 1917թ.-ի մարտի 13-ին³¹: Մարգարեթը և Ջորջը քարոզում էին Ավետարանը և բժշկության ուսմունքը եկեղեցիներում և գյուղերում³²: Նրանց նոր միսիոներական կայանը գտնվում էր այնքան վտանգավոր

վայրում, որ ամերիկացի հյուպատոսը հրաժարվեց ապահովել նրանց պաշտպանությունը: Այնուամենայնիվ, կայան ժամանելուց մի քանի օր անց, այդտեղ մի բորոտ բժշկվեց³³: Մեկ այլ դեպքում, «մի ծեր կին մոտեցավ և դեղամիջոցներ խնդրեց, բայց մենք ասացինք, որ ավելի լավ բան ունենք, որ մենք կարող ենք աղոթել նրա համար: Մենք աղոթեցինք այդ ծեր կնոջ հետ: Հաջորդ օրը... նա ամբողջովին փոխվել էր: Նա կանչեց Տիրոջը, և Տերը բժշկեց ու փրկեց նրան»³⁴:

Քեյլիների երեխաներից երկուսը մահացան Չինաստանում, մինչ նրանք ճանապարհ էին հարթում Չինաստանի հոգեգալստական ներքին միսիայի համար: Նրանք գնացին նոր տարածքներ և եկեղեցիներ հիմնեցին³⁵: Եվս չորս որդի մեծացավ առանց մոր. Մարգարեթը մահացավ 1933թ.-ին ծաղիկ հիվանդությունից: Առանց իր կնոջ մեղմացնող ազդեցության՝ Ջորջն աստիճանաբար սկսեց հրաժարվել համագործակցությունից տարածաշրջանների պատճառ դառնալ: Միսիոներ ծառայակիցներից ստացված մի քանի գանգատից հետո, Աժ-ն ետ կանչեց նրա հավատարմագիրը³⁶:

Ռուբի Ֆեաչայլո Նայքոդեն
(1900-1973թթ.)



Ռուբի Ֆեաչայլոը հանդիպեց միսիոներ Ֆրենկ Նայքոդենին (1896-1936թթ.) Նյու Ջերսիի Նորթ Բեյքեն քաղաքի «Բեուլա Հայթ» Աստվածաշնչյան և միսիոներական դպրոցում սովորելիս: Նրա դասընկերները հիշում էին նրան որպես ակնառու և աշխատասեր ուսանողուհու: Ֆրենկն ամուսնության առաջարկություն արեց նրան Հնդկաստան ուղևորվելուց հետո, և Ռուբին հետևեց նրան միայն մեկ աշխատակցուհի Սառա Կոքսի հետ: Նա տասնինը տարեկան էր, երբ Յ. Ն. Բեյլը անձամբ հաստատեց նրա միսիոներական դիմումը 1919թ.-ին՝ դարձնելով նրան Աժ-ի ամենաերիտասարդ միսիոներներից մեկը»³⁷:

Ռուբին և Ֆրենկն ամուսնացան 1920թ.-ին Հարավային Հնդկաստանում: Նրանք տեղափոխվեցին Հյուսիսային Հնդկաստան, որպեսզի դեկավրտեն մի միսիոներական կենտրոն և մանկատուն տղաների համար՝ փոխարինելով Լիլիան Դեննի անունով մի

տարեց ամուրի միսիոների³⁸: Նրանք նույնպես մասնագիտական կրթության կենտրոն հիմնադրեցին, որպեսզի օգնեն տղաներին անցում կատարել դեպի չափապես կյանքը: Այդ կենտրոնը մոտ էր Նեպալի սահմանին, և այդ դիրքն իդեալական էր՝ հասնելու համար նեպալցի աշխատավորներին, ովքեր տեղափոխվում էին երկու երկրների միջև՝ աշխատանք որոնելով: Ռուբին գրի էր առնում բազմաթիվ հետաքրքրաշարժ դիտարկումներ հնդիկների ընտանեկան կյանքի, կոապաշտության և կաստային համակարգի մասին, որն այդ մշակույթի խեղդող օղակն էր³⁹:

Նայքոդենները սիրում էին երեխաների, և տասներկու տարվա ընթացքում վեց երեխա ունեցան⁴⁰: Ռուբին ծառայում էր իր քրոնիկ հիվանդ ամուսնու հետ: Երկուսն էլ զեկուցում էին Աստծո հրաշալի բժշկությունների մասին տարիների ընթացքում⁴¹: 1934թ.-ին ծանր հիվանդ Ֆրենկը հարկադրված էր ԱՄՆ վերադառնալ ութ տարի անընդմեջ միսիոներական դաշտում մնալուց հետո: Ռուբիի խնդրանքները հովանավորներին բավականաչափ միջոցների համար, որոնցով նա կկարողանար տուն բերել բոլոր երեխաներին, արդյունք չստացին: Նրանք թողեցին երեք ավագ որդիներին դպրոցում՝ Հնդկաստանում, իսկ կրտսեր որդին և երկու դուստրերը երկու ամիս տևող ճանապարհորդություն կատարեցին ծնողների հետ դեպի Ամերիկա 1934թ.-ին⁴²: Նրանց ընտանիքը կրկին միավորվեց 1935թ.-ի վերջում: Ֆրենկի առողջական խնդիրները շարունակվեցին մինչև նրա մահը 1936թ.-ին: Այդիացած Ռուբին մնաց միսիոներական դաշտում՝ շարունակելով դաստիարակել իր երեխաներին և ղեկավարել մանկատունն ու դպրոցը:

Նա վերջնականորեն վերադարձավ միսիայից 1942թ.-ին, ինչից հետո ամուսնացավ Լուիս Պետերսենի (1897-1998թթ.) հետ 1950թ.-ին: Նա մահացավ Սփրինգֆիլդում՝ Միուրիում, 1973թ.-ին⁴³: Նրա թաղման ժամանակ միսիոներ Մեյնարդ Քեթչամը զեկուցեց, որ նեպալցիները դեռ պատվում էին Նայքոդենների անունը նրանց բարեխիղճ աշխատանքի և Ավետարանը խանդավառությամբ հռչակելու համար⁴⁴:

Լավ Լու Ֆարինգթոն Փեյջ
(1886-1919թթ.)

Լավ Լու (Ֆարինգթոն) Փեյջը ծառայել է Ֆիջիում մեկ միսիոներական ժամկետով: Նա դպրոցական ուսուցչուհի էր Նյու Յորքից, մինչև ավստրալիացի ավետարանիչ Ալբերտ Թ. Փեյջի (1882-1918թթ.) հետ ամուսնանալը 1911թ.-ին: Նա մկրտվեց Հոգով 1911թ.-ի հուլիսի 4-ին, իսկ Ալբերտը մկրտվեց Հոգով 1912թ.-ի մարտի 1-ին: Նրանք դարձան Աժ-ի միսիոներներ և չորս



երեխա ունեցան այն բանից հետո, երբ կորցրին իրենց նորածինն միսիոներական դաշտ ուղևորվելիս: Դատելով նրանց նամակներից՝ Ա Լուն, Ա Ալբերտը հոսանքի մեծ զգացում ունեին: Դարձի եկածներից մեկը հիշում էր Լուին որպես մեծ սրտով և շատ աշխատասեր կնոջ. «Որքան էր նա սիրում ինձ: Նա սիրում էր ինձ, ինչպես Տեր Հիսուսն է սիրում»⁴⁵:

Ալբերտ Փեյջը գրում էր, որ դիվանի գործունեությունը Ֆիջիում ճնշում էր նրանց և մեծ դժվարություններ էր ստեղծում նրանց համար.

«Մեր նեղությունների և փորձանքների մեծ մասի նպատակը, մեր համոզմամբ, մեզ ավելի լուսավորելն էր այն մասին, թե ինչպես պայքարել սարսափելի սատանայական ուժերի դեմ, որոնք բռնում են այս մարդկանց մտքերը և մարմինները: Բոլոր հեթանոսները շատ բան գիտեն չար ոգիների մասին... իսկ միսիոներների անտեղյակությունը սատանայական ուժի մասին, ինչպես որ այն դրսևորվում է այս օտարերկրյա դաշտում, շատ փորձանք ու ցավ կպատճառի նրանց»⁴⁶:

Փեյջերն այն աստիճան էին աղքատացել, որ երբեմն նրանք և նրանց երեխաները չունեին պատշաճ հագուստ՝ տանից դուրս գալու համար: Նրանք գոյատևում էին խղճուկ սննդով և ապրում էին կաթացող տանիք ունեցող հյուղական, մինչև որ Լուն դարձավ բացեց հնդկ խանութպանների երեխաների համար, և սկսեց սնունդ և անհրաժեշտ պարագաներ ստանալ՝ որպես վարձատրություն⁴⁷:

Սողոմոնյան կղզիներում ծառայելու կանչն այդպես էլ չիրականացավ, որովհետև 1918թ.-ին Ալբերտը մահացավ հարբուխից, իսկ երեք ամիս անց Լուն տեղի տվեց նույն հիվանդությանը:

նր: Նրանց երեխաները տասներեք ամսից վեց տարեկան էին, երբ նրանց ծնողները մահացան: Մի ամուրի միսիոներ հոգաց նրանց մասին, մինչև որ նրանց բարեկամներն Ավստրալիայից եկան նրանց ետևից⁴⁸: Կրտսեր աղջիկը մահացավ Ավստրալիայում մի քանի ամիս անց, բայց մյուս երեք երեխաներն ուղարկվեցին Նյու Յորք՝ իրենց բարեկամների հետ: Այս միսիոներների երեխաները չգիտեին, որ իրենց ծնողներն ԱՄ-ի միսիոներներ էին: Նրանք իմացան այդ մասին 1986թ.-ին՝ կարճ ժամանակ առաջ այն բանից, երբ արդեն չափահաս որդին՝ Լյուդ Փեյջը և դուստրը՝ Օլիվ Փեյջ Դե-Լանտն, ուղևորվեցին Ֆիջի, որտեղ ծնվել էր Օլիվը⁴⁹:

Ջեսի Արմս Փերկինս (1862-1941թթ.)



Ջեսի Ջենեթ (Արմս) Փերկինսը ծնվել է Վիսկոնսին նահանգի Բրիջփորթի մոտակայքում գտնվող ագարակներից մեկում: Ընդհանուր առմամբ, նա ծառայեց վեց ժամկետով Լիբերիայում՝ սկսելով Մեթոդիստական Եպիսկոպոսական (ՄԵ) խորհրդից 1895թ.-ին: Նա վերադարձավ Լիբերիա 1900թ.-ին երկրորդ ժամկետով, տաս միսիոներից բաղկացած մի խմբի կազմում: Երեք ամսվա ընթացքում միայն երկուսը կենդանի մնացին այդ դաշտում: Ջեսին ամուսնացավ մյուս կենդանի մնացած միսիոների այրիացած Ջոն Մ. Փերկինսի (1866-1949թթ.) հետ 1903թ.-ին:

Ջեսին և Ջոնը մկրտվեցին Հոգով իրենց արձակուրդի ժամանակ՝ 1906թ.-ին⁵⁰: Երբ Մեթոդիստական Եպիսկոպոսական եկեղեցու միսիոներական խորհուրդը հրաժարվեց կրկին ուղարկել նրանց, նրանք վերադարձան Աֆրիկա որպես Հոգեգայտական հավատքի միսիոներներ 1908թ.-

ին⁵¹: Մոտավորապես քառասուն տարի շարունակ նրանք ծառայեցին Լիբերիայում որպես ազդեցիկ միսիոներական թիմ:

Այն հրաշքները, որոնք հոգեգայտականները սպասում էին և որոնց համար աղոթում էին, գրավեցին անհավատների ուշադրությունը: Փերկինսները զեկուցում էին.

«Մարդիկ մի շատ հիվանդ երեխայի բերեցին բուժման համար, բայց քանի որ երեխային արդեն անկարելի էր որևէ կերպ օգնել, մենք միայն կարող էինք աղոթել նրա համար: Տերը իրական հրաշք գործեց՝ հավելով այդ երեխային և կյանքի վերադարձնելով նրան անմիջապես այդ մարդկանց աչքերի առջև, և սա հրաշալի կերպով օգնեց ընդհանուր իրավիճակին (այն քրիստոնյաների, ովքեր սկսել էին թողնել Ավետարանը)... Ինչպես որ աստվածաշնչյան ժամանակներում, մեկ բժշկարար հպումն Աստուծոց անում է ավելի՛ն՝ հեթանոսներին Աստուծո գորության մեջ համոզելու համար, քան հազարավոր քարոզները»⁵²:

Ջեսիի առողջությունը հարկադրեց նրանց տուն վերադառնալ 1935թ.-ին⁵³: Նա շարունակեց հավաքագրել այլ մարդկանց՝ միսիոներ դառնալու համար, նույնիսկ այն բանից հետո, երբ մահվանից երեք տարի առաջ կորցրեց տեսողությունը: Նա մահացավ 1941թ.-ին Կալիֆոռնիա նահանգի Փասադենա քաղաքում:

Մարգարեթ Փիլիս Շայրեր (1896-1983)



Մարգարեթ (Փիփլս) Շայրերը⁵⁴, ով ծառայեց Արևմտյան Աֆրիկայում, ծնվել է Իռլանդիայում: Նա փրկվել է երեք կանանց ծառայության միջոցով, որոնց թվում էր Իռլանդացի կին ավետարանիչ և քաղաքական ակտիվիստ օրիորդ Բեյլ Մալսիդը⁵⁵: Նա կանչ զգաց Աֆրիկական միսիայի համար, երբ տասնինգ տարեկան էր, և կանչ զգաց քարոզելու համար մեկ տարի անց: Նրա հողագործ հայրը թույլ չտվեց Մարգարեթին շարունակել իր կրթությունը միջնակարգ դպրոցից հետո՝ համարելով, որ հետագա ուսումնառության համար ընդամենը միջոցների վատնում է: Նա ստացավ տնային ծառայի կրթություն Իռլանդիայում (և հետագայում՝ Ֆիլադելֆիայում): Երկու տարվա ընթացքում իր դեռահաս տարիներին նա արթնանում էր առավտյան ժամը չորսին, որպեսզի ուսումնասիրեր Աստվածաշունչը մինչև ժամը վեցը՝ անգիր հիշելով և յուրացնելով Աստվածաշնչի խոսքերը: Նա թաքցնում էր լույսն իր ծածկոցի տակ՝ իր ընտանիքի անդամներին չանհանգստացնելու համար⁵⁶: Մարգարեթը տեղափոխվեց Ֆիլադելֆիա 1917թ.-ին, որպեսզի մոտ լիներ իր քրոջը, և շարունակեց ուսումնասիրել Աստվածաշունչը:

Ֆիլադելֆիայում Փիփլսը քրիստոնյա ընկերներ գտավ, և սկսեց փնտրել Սուրբ Հոգու մկրտությունը: Նա մեծանակ էր տանը, երբ ընդունեց Հոգու մկրտությունը, և ավելի ուշ դա հաստատվեց լեզուներով ստացած մի ուղերձով եկեղեցական ծառայություններից մեկի ժամանակ: Նրա եկեղեցին, որն անկախ հոգեգալստական համայնք էր, խոստացավ աջակցել նրան որպես հավատքի միսիոներ Աֆրիկայում⁵⁷: Մարգարեթը շարունակեց կապ պահպանել ավետարանչուհի Մալսիդի հետ ԱՄՆ տեղափոխվելուց հետո: Նա թվարկել էր այդ կնոջն իրեն երաշխավորների ցուցակում իր միսիոներական դիմումի մեջ: Այդ դիմումի մեջ նա նշում էր, որ լավատես էր և կարողանում էր աշխատել մարդկանց հետ⁵⁸: Նա նույնպես տեղեկացրել էր, որ երկու աշխատանք ուներ՝ ցանկանալով նշել այն առույգությունը, որով նա կատարելու էր միսիոների պարտականությունները:

Աժ-ի Գլխավոր վերակացու Բեյլը խանդավառությամբ ընդունեց Փիփլսի դիմումը, թեև նա նշել էր, որ «տարրական դպրոցի» կրթություն ուներ, և որ նախկինում շահել էր մի քանիսին Քրիստոսի համար⁵⁹: Նա սկսեց միսիոներական գործունեությունը Վերին Վոլտայում (Բուրկինա Ֆասոյում) 1919թ.-ին, երբ դեռ չամուսնացած էրիտասարդ աղջիկ էր, երկու զույգերի՝ Բայթների և Լիփերների, նաև մեկ այլ չամուսնացած կնոջ՝ Ջեննի Ֆարնսվորտի հետ⁶⁰: Աֆրիկա հասնելուն պես նա հիվանդացավ ծանր տենդով: Այնուամենայնիվ, երբ ողջ թիմը պետք է նավակով անցնեք գետով վեր ընթացող դժվարին ճանապարհը դեպի Վերին Վոլտա, նա գնաց նրանց հետ:

Միսիոներները շարժական երգեհոն հավաքեցին, որպեսզի երգեին և վկայեին ամեն կանգառին՝ սկսած նավամատուցներից մինչև երկաթուղային կայարանները⁶¹:

Իր առաջին արձակուրդի ժամանակ, որը 1925թ.-ին էր, Փիփլսը ծառայության նշանակվեց Ի. Ս. Վիլյամսի կողմից, ով իր հովիվն էր Ֆիլադելֆիայում: Նա անցկացրեց երեք ամիս Միացյալ Նահանգներում և ինը ամիս Ֆրանսիայում՝ սովորելով ֆրանսերեն լեզուն, որովհետև Վերին Վոլտայում մարդիկ ֆրանսերեն էին խոսում: Վերադառնալով Աֆրիկա՝ նա ծանոթացավ միսիոներ Լյուդ Շայրերի հետ (1903-1972թթ.)⁶²: Մարգարեթը սպասեց քոջ ամուսնական զգեստին Ֆիլադելֆիայից, մինչև Լյուդի հետ ամուսնանալը: Նրանց արարողությունն անցնում էր չորս լեզվով՝ բանրայով, մորեով, անգլերենով և ֆրանսերենով⁶³: Նրանց որդին և դուստրը ծնվեցին Աֆրիկայում⁶⁴:

Եվ Մարգարեթը, և Լյուդը լավ քարոզիչներ էին: Հաճախ Լյուդը թողնում էր կնոջն իր մոտոցիկլետով որևէ գյուղում՝ քարոզելու համար, իսկ ինքը գնում էր քարոզելու հաջորդ գյուղում, և վերցնում էր նրան ետ վերադառնալիս: Նրանք բացեցին առաջին Աժ միսիոներական կայանը Ոսկե ափին (Գանայում)՝ սկսելով Յենդիում: Շայրերի հարգանքը տեղական սովորությունների հանդեպ շատ դուներ բացեց նրա առջև⁶⁵: Ոսկե ափում գտնվող իրենց կայանից Լյուդը և Մարգարեթն ուղևորվեցին Նիգերիա 1938-1939թթ.-ին այն բանից հետո, երբ այդտեղ Հոգու թափում տեղի ունեցավ⁶⁶:

Շայրերները հեռացան Աֆրիկայից 1942թ.-ին և հովվեցին մի եկեղեցի Վաշինգտոն ԿՇ-ում հինգ տարով, բայց 1947թ.-ին հրաժարվեցին հովվական պաշտոնից՝ Աֆրիկա վերադառնալու համար: Լյուդի հետագա ամուսնական դավաճանությունից հետո Մարգարեթը որոշեց պահպանել ընտանիքը և մնաց նրա հետ, մինչև նա աշխատում էր մի քանի աֆրիկյան կառավարությունների համար⁶⁷: Մարգարեթ Շայրերի միսիոներական նշանակման գործը ցույց է տալիս, որ 1968-1971թթ.-ին նա ծառայում էր Հաիթիում գտնվող մի Աստվածաշնչյան դպրոցում:

Լյուդի մահից հետո Մարգարեթը վերադարձավ լրիվ ժամանակով ծառայության ԱՄՆ-ում: Նա ակնառու քարոզիչ էր, ով հաջողությամբ քարոզում էր և հավաքագրում էր երիտասարդ միսիոներների նույնիսկ ութսուն տարեկանից հետո: Նա մահացավ սրտի կաթվածից 1983թ.-ի սեպտեմբերի 25-ին⁶⁸:

Էրիզել Չանթր Սելզեր (1889-1959)

Հոգով մկրտվելուց հետո Էրիզելը (Էրի) Չանտը պարզորեն զգաց, որ



կանչված է միսիայի համար: Նա անտեսեց զգուշացումներն այն մասին, որ մահանալու էր իր ընթացիկ հիվանդությունից մինչև միսիոներական դաշտ հասնելը, և 1910թ.-ին ժամանեց Մոնդոլիա՝ որպես տասնիննամյա չամուսնացած կին միսիոներ: Նա հավատում էր, որ Աստված, Ով կանչել էր իրեն միսիայի համար, նաև կբժշկեր իր մարմինը⁶⁹: Նա ամուսնացավ Հոլանդիայի քաղաքացի Ջորջ Կրիստիան Սելզերի (1866-1968թթ.) հետ 1914թ.-ին, և նրանք նշանակվեցին Աժ-ի կողմից որպես միսիոներներ Չինաստանում 1914թ.-ի նոյեմբերին⁷⁰: Նա թույլ առողջություն ուներ երեսունվեց տարի շարունակ, որոնց ընթացքում նա ծառայեց Չինաստանի կենտրոնում և հյուսիսում, նաև երկու ժամկետով Ցինգտայում:

Սելզերները որոշել էին ավետարանել նույնիսկ քաղաքական կոնֆլիկտների և պատերազմների ժամանակ⁷¹: Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքում ճանպոհացիները բանտարկեցին նրանց պատերազմական գերիների ճամբարներից մեկում չորս տարով՝ 1942-1945թթ.-ին⁷²: Նրանք վերադարձան ԱՄՆ, երեք տարի աշխատեցին Հոլանդիայում, ինչից հետո աշխատեցին որպես օգնականներ մի տարեցների համալիրում, որը գտնվում էր Սիեթլում, Վաշինգտոնում: Նրանք թռչակի անցան Վանկուվերում՝ Բրիտանական Վոլումբիայում: Էրիզելը մահացավ 1959թ.-ի սեպտեմբերի 7-ին⁷³:

Մերեն Վիտտիս Կելլեր (1889-1953)

Մերեն Վիտտիս Կելլերը ծառայել է և որպես ամուրի, և որպես ամուսնացած միսիոներ: Ինչպես հարյուրավոր հաստատական կանայք, նա անտեսեց



հասարակական կարծրատիպերը կանանց կարողությունների, ուժի և տղանություն մասին⁷⁴: Նա չէր ժխտում, որ միսիոներական կյանքը լի է խիստ դժվարություններով, բայց դիմացկունության և հարմարվողականության օրինակ էր ցուցաբերում:

Մերիենը, իր առաջին ամուսինը՝ Կառլ Վիտտիխը (-1914թ.) և մի ամուսնի տղամարդ միսիոներ երեք ամիս ապրեցին ջունգլիներում գտնվող մի փոքրիկ հյուղակում՝ կառուցված գերանների վրա, այն բանից հետո, երբ ժամանեցին Արևելյան Աֆրիկա: Նա նկարագրում էր, որ այն նման էր հավաքնի, և հիշում էր.

«Դժբախտաբար, մենք հանկարծակի էինք գալիս ամեն անգամ, երբ անձրև էր գալիս... Մենք չգիտեինք, թե ինչ էր առանց թռչվելու գիշերային հանգիստը (որովհետև ջուրը շիթերով ներս էր թափվում պատերից): Մեր տղաները, ամուսինս և մյուս երիտասարդը, ով մեզ հետ էր եկել, ջանում էին լավացնել մեր պայմանները, բայց ամեն ինչ անօգուտ էր, որովհետև մենք ջունգլիները պատշաճ շինարարական նյութեր: Նրանք հարկադրված էին քայլել յոթ կամ ինը մղոն՝ մի փոքր խմելու ջուր բերելու համար: Գիշերը առյուծները և այլ կենդանիներ գաղտնաբար պատվում էին մեր շուրջը, և մեր տղաներն արթուն էին մտում ու կրակոցներ էին արձակում՝ նրանց վախեցնելու և քշելու համար»⁷⁵:

Նա սնունդ էր պատրաստում սահմանափակ մթերքներից, որը հայթայթում էին տեղացիները, և ձեռագործ սպասք էր օգտագործում: Երեք ամիս անց նրա ամուսինը և իրենց ծառայակիցը մահացան թերսնումից և տենդից: Նրա ամուսինը կտակ չէր կազմել, այնպես որ Մերիենը չէր կարող կանխ-

կացնել հովանավորների վճարագրերը, որոնք գրված էին նրա անունով:

Այնուամենայնիվ, դրանից հետո Մերիենը չհամարեց իրեն ազատված միսիոներության կանչից: Նա վերադարձրեց այն գումարը, որը նրա ընտանիքն ուղարկել էր իրեն Միացյալ Նահանգներ վերադարձնելու համար, և շարունակեց գործել որպես ամուսնի միսիոներ, նույնիսկ Առաջին Համաշխարհային պատերազմի սկզբից հետո: Նա խոստովանում էր, որ կորցնում էր ամեն ինչ Ավետարանի համար՝ ներառյալ իր կողակցին, աշխատակիցներին, ֆինանսները և ընկերներին: Հետագայում նա պատմում էր իր միայնության մասին. «Թեև ես բաժանված էի իմ սիրելիներից, ես բարորություն էի ցանկանում նրանց: Բայց Աստված վերցրեց իմ բոլոր հենարանները»⁷⁶: Նրա միսիոներական կայանը միակն էր, որը բաց էր մնացել Կենիայում ողջ պատերազմի ընթացքում. մնացած բոլորը փակ էին:

Արձակուրդից հետո, 1920թ.-ին Մերիենը վերադարձավ Աֆրիկա՝ քարոզելու և սովորեցնելու նորոգված վճռականությամբ: Նա ամուսնացավ Օտտո Կելլերի հետ (1888-1942թթ.), ով իր առաջին ամուսնու ընկերն էր և փորձված միսիոներ էր: Մի քանի տասնամյակ շարունակ նրանք քարոզեցին Ավետարանը և հարյուրավոր եկեղեցիներ հիմնեցին այն տեղացիների հետ, որոնց իրենք մարզել էին ծառայության համար:

Ամփոփում

Վաղ հոգեգալստականները համաձայն էին, որ համաշխարհային ավետարանչությանը հրատապ առաջադրանքը հնարավոր կլինի իրականացնել միայն նրանց միջոցով, ովքեր կանչված են և ուղարկված են Սուրբ Հոգու զորությամբ: Էլիս Լուսը մտորում էր Հոգեգալստական շարժման վաղ շրջանի միսիոներական աստվածաբանության և գործելակերպի արդյունքների շուրջ, երբ գրում էր. «Սուրբ Հոգին գալիս է այս օրինյալ Մկրտությամբ, որպեսզի լինի զորություն՝ ծառայության համար, և գրի մեր սրտերում Աստծո նամակն այն մարդկանց, ովքեր չեն ճանաչում Նրան: Այնպես որ, այս նամակն առաջին հերթին ուղղված չէ մեզ, այլ ուրիշներին, թեև մենք, անկասկած, վախելում ենք դրա օրինությունը»⁷⁷: Աժ պատմաբան Գարի ՄակԳին գրում է, որ կանանց ակնառու դերը ծառայության մեջ հատուկ է այնպիսի արթնությանը, որում «ցանկացած մարդ կարող է ընտրվել Հոգու կողմից որոշակի ծառայության համար»⁷⁸:

Կին միսիոներների ժառանգությունը ցույց է տալիս Հոգու զորությունը, որը գործում է մի խմբի միջոցով, որը զրկված է իր կարողությունից մշակույթի

և կրոնի պատճառով: Նրանք անցան մշակութային և կրոնական արգելքները: Նրանք իրականացրին Գործք 2.17-ի մարգարեությունն այն մասին, որ Աստված զորացնելու է կանանց այնպես, ինչպես և տղամարդկանց՝ Իր վկաները լինելու համար: Նրանց հարմարվող և հոժարական ծառայությունը դռներ բացեց չավետարանված կամ անտեսված ազգերի մեջ: Այս կանայք տարան Ավետարանը անհրաժեշտ մարդասիրական ծառայությունների հետ՝ վերափոխելով տեղաբնակների վարքագծերը, մշակույթները և հասարակական ակնկալիքները:

«Աստծո ժողովները» հաստատվել է ողջ աշխարհով մեկ վաղ շրջանի հոգեգալստական արթնությունների ժամանակակից, մասամբ շնորհիվ կանանց եռանդի և ինքնագոհաբերող ծառայության: Թույլ տալով իր հետևորդների մեծ մասին (կանանց) քարոզել Ավետարանը՝ Աժ-ն արձակեց զորացված կին ծառայողների այլք, որին անթիվ եկեղեցիներ և ծառայություններ ողջ աշխարհով մեկ պարտական են իրենց գոյությանը:



Ռոզմարի Դահեր Կովալսկին Գիտությունների դոկտոր է, «Աստծո ժողովների» նշանակված ծառայող, և ժամանակավոր դասախոս «Հյուսիս-Արևմտյան Համալսարանում» (Կիրկլենդ, Վաշինգտոն) և ԱՄԿԱՄ-ում (Սինգապոր): Նա ապրում է իր ամուսնու՝ Վալդեմարի հետ Բաղդոս-գում, Ինդոնեզիայում:

Էլիս Լուսը մտորում էր Հոգեգալստական շարժման վաղ շրջանի միսիոներական աստվածաբանության և գործելակերպի արդյունքների շուրջ, երբ գրում էր. «Սուրբ Հոգին գալիս է այս օրինյալ Մկրտությամբ, որպեսզի լինի զորություն՝ ծառայության համար, և գրի մեր սրտերում Աստծո նամակն այն մարդկանց, ովքեր չեն ճանաչում Նրան: Այնպես որ, այս նամակն առաջին հերթին ուղղված չէ մեզ, այլ ուրիշներին, թեև մենք, անկասկած, վախելում ենք դրա օրինությունը»⁷⁷:

ՆՇՈՒՄՆԵՐ

¹ Այս հոդվածը վերամշակված է Ռոզմարիի ատենախոսությունից, որի վերնագիրն է՝ «Ո՛ւմ ուղարկեմ: Եվ Ո՛վ կգնա Մեզ համար. Սուրբ Հոգու զորացումը վաղ շրջանի հոգեգալստական կին միսիոներների համար» (Գիտությունների Դոկտոր, «Աստծո ժողովների» Աստվածաբանական սեմինարիա, 2012թ.):

² «Կանանց աշխատանքը՝ կանանց համար». սա 19-րդ դարի կարգախոս էր, որը խթանում էր կին կամավորականների և հատուկ պատրաստված օգնականների ծառայությունը աղքատ և կարիքավոր կանանց, որոնց տղամարդ օգնականները չէին կարող ծառայել: Նրանց թվում էին կանայք, ովքեր մեկուսացված էին ընտանիքի անդամ չհանդիսացող տղամարդկանցից մուսուլմանական հասարակություններում, մարմնավաճառները, այրիները, որբերը և այլ կանանք այնպիսի շրջաններում, որտեղ տղամարդկանց աշխատանքը նրանց հետ ողջունելի կամ մշակութապես թույլատրելի չէր:

³ Աննա Ս. Ռեյֆ. «Ինդիաներ՝ մտածելու և աղոթելու համար», «*Վերջին անձրևի Ավետարան*», նոյեմբեր, 1922թ., էջ 12:

⁴ Տկն. Վերնոն Մորիսոն. «Քսանյոթ տեղաբնակ մկրտվել է», «*Վերջին անձրևի Ավետարան*», մայիս, 1927թ., էջեր 15-16:

⁵ Ջուլիա ՄակՌիչարդսոն. «Աստծո փրկությունն Աֆրիկայի սրտում», «*Վերջին անձրևի Ավետարան*», հունիսի 1, 1926թ., էջեր 10-11:

⁶ Ինես Սփենս. «Երգն իր սրտում. Բլանշ Էփրի» Հաղթանակի հերոսները, հատ. 1 (Սփրինգֆիլդ, Միսուրի, «Աստծո ժողովների» Արտաքին միսիայի բաժին, ամսաթիվը նշված չէ), էջ 6:

⁷ Էփրիին և Քանյոլը նշված են «Միսիոներական օրագիր, 1924թ.»-ում («Կանտոնի, Հարավային Չինաստանի միսիոներական համաժողով», Կանտոն, Չինաստան), էջ 54:

⁸ Բլանշ Էփրի. «Քույր Շամի հրաշալի պատմությունը», «*Հոգեգալստական Ավետարան*», օգոստոսի 4, 1928թ., էջ 9:

⁹ Տրինիդադ Է. Սեյնթ. «Ֆիլիպինների «Աստծո ժողովներ» կազմակերպությունը և վաղ միսիոներների դերը», «Հոգեգալստական հետազոտությունների ասիական ամսագիր» հմ. 8:2 (2005թ.), էջ 274: Սփենս, էջեր 3-14:

¹⁰ Բլանշ Էփրի. «Ինչպես մենք ազատվեցինք Լոս Բանոսի բանտարկությունից», «*Հոգեգալստական Ավետարան*», հունիսի 16, 1945թ., էջ 1:

¹¹ Բլանշ Էփրի. «Ես հիշում եմ», «*Հոգեգալստական Ավետարան*», մայիսի 24, 1964թ., էջ 5:

¹² Ուեյն Ուորներ. «Երկրորդ Համաշխարհային պատերազմի հավատքի հերոսները», «Աստծո ժողովների ժառանգություն», հմ. 24.4 (ձմեռ, 2004-2005թթ.), էջ 3:

¹³ Բլանշ Ռ. Էփրի. «Հողվածներ, լուրեր, և այլն», ՖՀԺԿ:

¹⁴ Բերնիս Ս. Լի. «Դիմում միսիոներական ծառայության նշանակելու համար» (1921(")): Նույնը:

¹⁵ «Արդյո՞ք այս փարոսը կմնա», «*Վերջին անձրևի Ավետարան*», հունիս, 1920թ., էջեր 13-14:

¹⁶ Սառա Կոքս. «Սահառանպուր, Ն. Հնդկաստան», «*Հոգեգալստական Ավետարան*», մայիսի 14, 1921թ., էջ 13:

¹⁷ Բերնիս Լի. «Աշխատանքը բորոտների հետ Ուսկա Բագարում», «*Հոգեգալստական Ավետարան*», նոյեմբերի 23, 1929թ., էջ 6:

¹⁸ Էլիս Վուդ. «Էլիս Քրիստի Վուդ» (ինքնակենսագրությունը նրա Աժ-ի Համաշխարհային միսիայի գործի մեջ), 1923թ., էջ 3:

¹⁹ Ադել Ֆլուտեր Դալտոն. «Ռիսկի դիմել Քրիստոսի համար», «*Woman's Touch*», նոյ-դեկ., 1983թ., Լ6: «Արգենտինա», Սթենլի Մ. Բերդիսի և Էդուարդ Մ. Վան դեր Մասսի խմբ. (Գրանդ Ռեփիդս, «Ձոն-դերվան», 2002թ.), էջ 23: Նրա գործունեությունը Վենեսուելայում ավարտվեց այն ժամանակ, երբ ժերար Բեյլին՝ նրա տղամարդ միսիոներ գործակիցը, չքանկացավ աշխատել ծառայող կանանց հետ:

²⁰ Դերիլ Պլատ և Քիթսոն Լ. Հոլլանդ. «Բողոքական շարժման սկզբնավորման ժա-

մանակագրություն. Արգենտինա», 2002թ., www.prolades.com/cra/regions/sam/arg/arg-chron.pdf (մուտքը՝ դեկտեմբերի 2, 2008թ.):

²¹ «Աստծո ժողովների միության համառոտ պատմություն», «*Աստծո ժողովների միություն*» (խսպ.), <http://www.uad.org.ar/folders/informacion.html> (մուտքը՝ դեկտեմբերի 2, 2008թ.):

²² Էլիս Վուդ, օրագիր, դեկտեմբերի 9, 1914թ.:

²³ Բերգես և Վան դեր Մասս, էջ 889: Տես նաև Անն Վ. Էնս. «Մանը, Միլյուն և մի-սիան Արգենտինայում. Եկեղեցու աճի մանրակրկիտ դիտարկում» (Գրանդ Ռեփիդս, «Վ. Բ. Էրդմանս», 1971թ.), էջեր 76-77:

²⁴ «*Աստծո ժողովների միություն. Արգենտինա*» (խսպ.), <http://www.uad.org.ar/index.html> (մուտքը՝ հունվարի 2, 2009թ.):

²⁵ Էլիս Վուդ, օրագիր, մայիսի 17, 1912թ.:

²⁶ Էլիս Վուդ, «Ձորավոր դրսևորում», «*Հոգեգալստական Ավետարան*», փետրվարի 3, 1934թ., էջ 7:

²⁷ Նոռա Բ. Բլան. «Հիսուն տարի առանց արձակուրդի», «*Հոգեգալստական Ավետարան*», օգոստոսի 28, 1960թ., էջ 5:

²⁸ Ջորջ Մ. Քեյլի. «Սայնամ, Հարավային Չինաստան», «*Շաբաթական Ավետարան*», դեկտեմբերի 8, 1917թ., էջ 10:

²⁹ Նույնը:

³⁰ Մարգարեթ Քեյլի, դիմում նշանակման համար, ՖՀԺԿ:

³¹ Ջորջ Քեյլի. «*Էկկլեսիա. Մարգարեթ Քեյլի. հիշատակի թիվ*» (Հոնկ Կոնգ, Չինաստան. «Կանտոն Քրիստեն Թեմփլ», 1933թ.), էջ 7: «Ֆլուտեր» Հոգեգալստական ժառանգության կենտրոն. տես նաև էջ 11, որտեղ մեջբերվում է Մարգարեթի նամակը՝ ուղարկված 1932թ.-ի հուլիսի 21-ին. «Բազմաթիվ հրաշալի բժշկություններ: Մարդիկ բժշկվում էին իրենց նստատեղերի վրա, երբ լսում էին հոսքը: Ամեն օր մի քանիսը լցվում էին Սուրբ Հոգով, և մեկ օրում 10 մարդ մկրտություն ստացավ», տես նաև էջ 12, որտեղ Մարգարեթը գեղուցում էր, թե ինչպես էր քարոզում 30 երիտասարդ կանանց և մի քանի բժիշկների Ֆու Յի Յեն հիվանդանոցում (1932թ.-ի դեկտեմբերի 20) մի նամակում, որը գրվել էր նրա մահից օրեր առաջ:

³² Տկն. Ջորջ Մ. Քեյլի. «Աստված պատասխանում է մի չինացու աղոթքին տասնչորս տարի անց», «*Վերջին անձրևի Ավետարան*», հունվար, 1917թ., էջ 10:

³³ Տկն. Ջորջ Քեյլի. «Քարոզելով և ապրելով Ավետարանը Հարավային Չինաստանում», «*Հոգեգալստական Ավետարան*», սեպտեմբերի 8, 1923թ., էջ 2:

³⁴ Սթենլի Հ. Ֆրոդշեմ. «Մեր միսիոներների օրհասական վիճակը Չինաստանում», «Քրիստոնեական Ավետարան», հունիսի 1, 1918թ., էջ 11:

³⁵ Մերի Լեդգեթեր, նամակ Նոել Պերկինին, փետրվարի 11, 1933թ., ԱժՀՄ Պահոց: Մարկ Վ. Քեյլի. «Միսիոների ամունությունը և քաղաքացիական պատերազմը.

Ջորջ Քեյլին և Եվգենիա Վանը Չինաստանում, 1935-1950թթ.», (հետազոտական հոդված, Հյուսիսային Կարոլինայի Պետական համալսարան, ամսաթիվը նշված չէ), էջ 22: Ջորջը շարունակեց ծառայել որպես անկախ հավատքի միսիոներ, և ամունանացավ մի չինացի կին հովվի՝ Եվգենիա Վանի հետ: Քսան տարվա միասնական կյանքից հետո Ջորջը վերադարձավ՝ հովվելու մի մեթոդիստական եկեղեցի Հյուսիսային Կարոլինայում իրենց որդի Ջոնի հետ՝ թողնելով Եվգենիային և իրենց որդեգրված դստերը՝ Լիլիին: Նա «արձակեց» Եվգենիային իրենց ամունանական երդումներից, և 1955թ.-ին՝ 67 տարեկանում, ամունանացավ իր երրորդ կնոջ հետ, ով ամերիկայից էր, և ապրեց նրա հետ քսան տարի՝ մինչև իր մահը 1975թ.-ին:

³⁶ Ձեռագիր նշում Յ. Ն. Քեյլի կողմից, Ռուբի Կլարիսսա Ֆեաչայլը. «Դիմում միսիոներական ծառայության նշանակելու համար», հունիս, 1919թ.: «Հրաշալի է նրա տարիքի համեմատ, և նա պատրաստվում է ամունանայ միսիոների հետ, թեև նա երիտասարդ է. ես հաստատում եմ նրա մեկնումը, Յ. Ն. Բ.»:

³⁷ Ռուբի Նայքոդեմ Պետերսեն. «Ֆրենկ Նայքոդեմ» (կենսագրությունը՝ նրա այրու կողմից), փետրվարի 18, 1954թ., ԱժՀՄ Պահոց: Տես նաև «Նոր դպրոց տղաների համար Հնդկաստանում», «*Հոգեգալստական Ավետարան*», օգոստոսի 21, 1926թ., էջեր 10-11:

³⁸ Ֆրենկ Նայքոդեմ. «Հնդկաստանը քաղաքակիրթ չէ», «*Հոգեգալստական Ավետարան*», հունիսի 24, 1922թ., էջ 12: Ֆրենկ Նայքոդեմն ապշել էր՝ տեսնելով, որ մի տասնյոթամյա տղա «լավ ընտանիքից» մահացավ այրոցներից, երբ նրա հագուստը սկսեց այրվել: Նրա մոտ կանգնածներից ոչ մի մարդ չօգնեց նրան հանգցնել կրակը, որովհետև նրանք մտածում էին, որ այդ տղան դե էր: Նման «անմարդկային վարքը» դրդեց Ֆրենկին մի նամակ գրել՝ պարսավելով «քաղաքակրթության» բացակայությունը Հնդկաստանում: Նեպալի նման փակ երկրները բացվում էին Արևմուտքի մարդաբանների և այլ դիտորդների համար Ռուբիի նման միսիոներների տեղեկությունների միջոցով: Տես նույնպես Պրն. և Տկն. Ֆրենկ Նայքոդեմ. «Նեպալի կարիքը», «*Հոգեգալստական Ավետարան*», հոկտեմբերի 30, 1926թ., էջեր 10-11: Ռուբի Կ. Նայքոդեմ. «Հապաղումը՝ ծրագրված սատանայական ուժերի կողմից», «*Հոգեգալստական Ավետարան*», սեպտեմբերի 28, 1940թ., էջ 8, և Ռուբի Կ. Նայքոդեմ. «Վերադարձ դեպի Երկիրը», «*Լուրեր Հյուսիսային Հնդկաստանի դաշտից*», 4.2 (ապրիլ, 1941թ.), էջեր 6-7:

³⁹ «Նայքոդեմը՝ Հիսուսի հետ», «*Հոգեգալստական Ավետարան*», սեպտեմբերի 19, 1936թ., էջ 7:

⁴⁰ «Եղբայր Ֆրենկ Նայքոդեմը գրում է...», «*Հոգեգալստական Ավետարան*», հունիսի 26, 1920թ., էջ 12: Տես նաև «Մի քանի շա-

բաթ առաջ...», «Հոգեգալստական Ավետարան», սեպտեմբերի 2, 1922թ., էջ 13:

⁴² Ռուբի Նայթըրեմ. «Այն «մայրերին», ովքեր կարողում են «Ավետարան» թերթը», «Հոգեգալստական Ավետարան», հունվարի 13, 1934թ., էջ 11: Ռուբի Նայթըրեմ. «Խնդրանք մայրերին», «Վերջին անձրևի Ավետարան», փետրվար, 1934թ., էջ 2:

⁴³ «Քրիստոսի հետ 73 տարեկանում. Տկն. Ռուբի Կ. Պետերսեն», «Հոգեգալստական Ավետարան», դեկտեմբերի 23, 1973թ, էջ 27: Նրանց երեք երեխաները մնացին եկեղեցում և ծառայության մեջ, իսկ նրանց որդին՝ Ֆրենկ Կրոստերը, հետագայում դարձավ «Ավետարանականների ազգային միության» գանձապահը:

⁴⁴ Մեյնարդ Լ. Քեթչամ. «Մահախոսական Տկն. Ռուբի Պետերսենի համար» (Սփրինգֆիլդ, Միսուրի, «Թիմե» Սգո սրահ, հոկտեմբերի 24, 1973թ.):

⁴⁵ Պիտեր Ումբո, նամակ Լյոյդ Փեյջին, մարտի 8, 1924թ. ՖՀԺԿ:

⁴⁶ «Եղբ. Ալբերտ Թ. Փեյջը գրում է...», «Հոգեգալստական Ավետարան», հուլիսի 27, 1918թ, էջ 10:

⁴⁷ «Եղբ. և Քույր Փեյջերը գրում են...», «Հոգեգալստական Ավետարան», ապրիլի 16, 1918թ, էջ 11: Տեն նաև Իվին Կարլսոն. «Ինչ-որ մեկի հիշատակը. պատմություն Ֆիջիի առաջագնաց միսիոներների մասին», «Հոգեգալստական Ավետարան», դեկտեմբերի 31, 1989թ, էջ 21:

⁴⁸ Սառա Լ. Դաուլ. «Քույր Լու Փեյջը ննջեց Քրիստոսում», «Հոգեգալստական Ավետարան», մայիսի 3, 1919թ, էջ 4:

⁴⁹ ՕԼիվ Փեյջ Դելանո. «Վերադարձ դեպի վաղը», չիրատարակված ձեռագիր, 1986թ.: ԱժՀՄ Պահոց:

⁵⁰ Հ. Բ. Գարլոք, նամակ Էլբերտ Ֆիլիպսին, հուլիսի 6, 1968թ., որտեղ նա մեջբերում է մի նամակից, որն ուղարկել էր նրան Ջոն Պերկինսը հունիսի 8-ին, 1944թ-ին. «Մեր արձակուրդի ժամանակ՝ 1906-1907թթ.-ին, մենք հոգեգալստական վերապրում ունեցանք, և Մ. Ե. (Մեթոդիստական Երիցական) Խորհուրդը հրաժարվեց կրկին ուղարկել մեզ: Բայց մենք՝ զգալով, վստահելով և հավատալով, որ Աստված ցանկանում էր մեր վերադարձը, վերադարձանք որպես անկախ միսիոներներ՝ վստահելով Տիրոջը մեր մատակարարման համար»: Տեն նաև Սթենլի Հ. Ֆրոդշեմ. «Նշաններ, որոնք հեղուկ են. Հոգեգալստական արթնության պատմությունը քսաներորդ դարում», վերն. հրատ. (Սփրինգֆիլդ, Միսուրի, «Ավետարան» հրատարակչություն, 1946թ.), էջեր 171-172:

⁵¹ Ֆրոդշեմ, էջ 172:

⁵² Ջոն և Ջեսի Պերկինսներ. «Աղոթքի կարիք ունենալով», «Փեսասցուի ավետարեթը», դեկտեմբեր, 1934թ., էջ 3:

⁵³ Ջոն Պերկինսի միսիոներական գործը, ԱժՀՄ Պահոց:

⁵⁴ Մարգարեթին անվանում էին Փիվիս, երբ նա ամուսին էր ծառայության մեջ, և Շայրեր՝ ամուսնանալուց հետո և մինչև իր միսիոներական կարիերայի վերջը:

⁵⁵ Բեյլ Մալիդի ստորագրությունը հայտնվեց Ալստերի Ուլստի Կանանց հոչակագրի ցուցակում 1912թ.-ի սեպտեմբերի 28-ին Իռլանդիայի Դոուլգալ քաղաքում, որը Մարգարեթի ծննդավայրն է: Ալստերի ունիոնիստները հակառակ էին Իռլանդիայի ինքնավարությանը: Ռոբերտ Ա. Մալիդ. «Ալստերի ուլստը», Մալիդի ազգաբանությունը և ընտանեկան պատմությունը. http://malseed.com/malseeds/records/ireland/pronilster_covenant/ulster_covenant.htm (մուտք՝ հուլիսի 19, 2011թ.):

⁵⁶ Ադել Ֆլաուեր Դալտոն. «Հարցազրույց Մարգարեթ Փիվիս Շայրերի հետ», ամառ, 1976թ., էջ 1: Տպագրված ձեռագիր, ԱժՀՄ Պահոց:

⁵⁷ Դալտոն. «Հարցազրույց Մարգարեթ Փիվիս Շայրերի հետ», էջ 2: «Ինձ Աֆրիկա ուղարկեց մի անկախ հոգեգալստական եկեղեցի: Հոգու թափումը նոր էր եղել, և դա լիովին նոր եկեղեցի էր: Ես ասացի հովվին և մյուսներին, որ Աֆրիկա գնալու կանչ ունեի, բայց չգիտեի, թե որտեղ: Նրանք ասացին. «Գնա և պատրաստվիր. վերադարձիր մեզ մոտ այն ժամանակ, երբ պատրաստ լինես: Մենք կաջակցենք քեզ»: Այնպես որ, ես ուսումնասիրում էի Աստվածաշունչն ամեն գիշեր և պատրաստվում էի»:

⁵⁸ Մարգարեթ Փիվիս Շայրերի. «Դիմում միսիոներական ծառայության հաստատելու համար», նոյեմբերի 11, 1919թ.:

⁵⁹ Նույնը: Շայրերը խելամուտ էր և վաղ տարիքից սեր ուներ ուսման հանդեպ: Այն, որ անցյալում նա լրջորեն զբաղվել էր ինքնակրթությամբ և քաջ էր նոր բաների համար, օգնեց նրան առաջադիմել ուսման մեջ և սովորեցնել միսիոներական դաշտում: Նա դարձավ ակնառու թարգմանիչ, ավետարանիչ և եկեղեցիներ հիմնադրող:

⁶⁰ Հ. Մ. Ռայթ. «Միսիոներական թիմն ապահով կերպով ժամանել է», «Հոգեգալստական Ավետարան», մարտի 19, 1921թ, էջ 19:

⁶¹ Նույնը: Տեն նաև Դալտոն. «Հարցազրույց Մարգարեթ Փիվիս Շայրերի հետ», էջ 4:

⁶² Դալտոն. «Հարցազրույց Մարգարեթ Փիվիս Շայրերի հետ», էջ 6:

⁶³ Նույնը, էջ 8:

⁶⁴ Նույնը, էջ 7:

⁶⁵ «Իմ սովորություն էր՝ պատվել գյուղի առաջնորդին, նույնիսկ եթե նա քրիստոնյա չէր... Երբ ես որևէ գյուղ էի գնում, առաջին հերթին ես այցելում էի առաջնորդին: Նա ասում էր իր մարդկանց. «Թմբկահարներ և ասացե՛ք իմ երեխաներին, որ այս սպիտակամորթ կինն այստեղ է և ինչ-որ բան է ցանկանում ասել նրանց»: Մինչ նրանք թմբկահարում էին, ես նստում և զրուցում էի առաջնորդի հետ: Նրանցից շատերն ասում էին ինձ. «Սպիտակամորթ կին, մենք քրիստոնյա չենք, բայց մենք ցանկանում ենք, որ դու իմանաս, որ մենք համակրում ենք քրիստոնեությանը: Մենք արդեն ծեր ենք, բայց մենք ցանկանում ենք, որ դու վերցնես մեր տղաներին և սովորեցնես նրանց: Նույնը:

⁶⁶ Նույնը, էջ 7:

⁶⁷ Նույնը, էջեր 7-11: Մարգարեթը մեծ հարգանքով էր վերաբերվում Լյոյդին և աջակ-

ցում էր նրան. «Իմ ամուսինը շատ տաղանդներ ունեցող մարդ էր: Նա կարող էր անել գրեթե ամեն ինչ: Նա առաջինը սկսեց տպագրությունը Գանայում»:

⁶⁸ «Միսիոներներ, որոնք արդեն Քրիստոսի հետ են. Մարգարեթ Շայրեր», «Հոգեգալստական Ավետարան», փետրվարի 26, 1984թ, էջ 29:

⁶⁹ Տկն. Ջորջ Ս. Սլեյգեր. «Բժշկված՝ Չինաստանում ծառայելու համար», «Վերջին անձրևի Ավետարան», հուլիս, 1918թ, էջ 21:

⁷⁰ Էրիզելլ Սլեյգեր. միսիոներական գործը, ԱժՀՄ Պահոց:

⁷¹ Էրիզելլ Սլեյգեր. «Վտանավոր օրեր Չինաստանում», Հոգեգալստական Ավետարան», մայիսի 14, 1927թ, էջ 4: Տեն նաև Ջորջ Ս. Սլեյգեր. «Պատերազմի սարսափները Չինաստանում՝ պատմված միսիոների կողմից», Հոգեգալստական Ավետարան», դեկտեմբերի 18, 1937թ, էջ 6:

⁷² Էրիզելլ Սլեյգեր. «Առաջին բժշկական ստուգումն արձակուրդի ընթացքում», օգոստոսի 28, 1947թ., ԱժՀՄ Պահոց: Նրա բժիշկն առաջարկեց նրան չվերադառնալ, քանի որ նա բազմաթիվ հիվանդություններ ուներ:

⁷³ Էրիզելլ Սլեյգեր, միսիոներական գործ:

⁷⁴ Սյուզեն Հիլ Լինդլի. «Դուք քայլ եք արել՝ դուրս գալով ձեր սովորական միջավայրից. Պարմություն կանանց և կրոնի մասին Ամերիկայում» (Լոսիսմիլ, Կենտակի, «Վեստմինստերի Ջոն Նոքսի հրատարակչություն», 1996թ.), էջ 75: «Մարդկանց համար անհավատալի էր, որ կինը կարող է դիմանալ ճանապարհորդության, բնակության և աշխատանքի դժվարություններին «ոչ քաղաքակիրթ» վայրում առանց ամուսնու պաշտպանության և առաջնորդության, և եթե մեկը սխալմամբ հավատար, որ նա կարող է անել դա, ապա նրա ճշմարիտ կանացիության հատկանիշները միանշանակ կերպով կասկածի էին ենթարկվելու: Հնարավոր էին բացառություններ ամուսին կնոջ համար, ով կարող էր ճանապարհորդել և ապրել ամուսնացած զոյգի հետ, բայց նման բացառություններ արվում էին հազվադեպ և դժվամորեն:

⁷⁵ Մերիեն Է.Վիտտի. «Լինել առաջագնաց պատերազմի վտանգների միջև», «Վերջին անձրևի Ավետարան», հունիս, 1919թ, էջ 6: Այստեղ, ինչպես և այլուր պահոցային փաստաթղթերի մեջ, ամերիկյան միսիոներներն անվանում էին տեղացի տղամարդ օգնականներին «տղաներ»՝ անկախ նրանց տարիքից կամ փորձառությունից, ինչն արտացոլում էր Արևմուտքի մարդկանց մեծամիտ վերաբերմունքն այլ մշակույթների հանդեպ:

⁷⁶ Նույնը, էջ 7:

⁷⁷ Էլիս Է. Լուս. «Կենդանի ուղերձներ». «Հավատքի հաղթանակները», հոկտեմբեր, 1921թ., էջեր 226-227:

⁷⁸ Գարի Բ. ՄակԳի. «Ավետարանը պետք է քարոզվի. «Աստուծո ժողովների» Արտաքին միսիայի պատմությունը և աստվածաբանությունը մինչև 1959թ.-ը» (Սփրինգֆիլդ, Միսուրի, «Ավետարան» հրատարակչություն, 1986թ.), էջ 46:

Վերջին ձեռքբերումները

«Տյուներ» Հոգեգալստական ժառանգության կենտրոնը (ՖՀԺԿ) տպագիր նյութերի, բանավոր պատմությունների, լուսանկարների և մշակութային ու պատմական արժեք ունեցող առարկաների զարմանալի հավաքածու ունի: Բազմաթիվ չափանիշներով, այն մեծագույն հոգեգալստական պահոցն է աշխարհում: Շատ աստվածաբաններ և եկեղեցական առաջնորդներ, ովքեր ցանկանում են գրել Հոգեգալստական շարժման պատմության մասին, անցկացնում են իրենց առաջին հետազոտությունը ՖՀԺԿ-ում: Մենք պարտավոր ենք հարյուրավոր մարդկանց, ովքեր նվիրաբերել են բազմաթիվ նյութեր ՖՀԺԿ-ին նախորդ տարվա ընթացքում: Ստորև պատմվում է ստացված հավաքածուներից վեցի մասին:

Դոկտոր Սթենլի Մ. Հորտոնի հավաքածուն



Դոկտոր Սթենլի Հորտոն, ցուցադրում է իր գրքերի մի մասը ԱՄՆ-ում:

Իսկ «Աստծո ժողովների» գլխավոր վերակազմը Վեսլի Սթիվերզը նրա քեռին էր:

«Հարվարդի» շրջանավարտ Դոկտոր Հորտոնը «Աստծո ժողովների» Աստվածաբանական սեմինարիայի (ԱՄԱՍ) Աստվածաշնչի և Աստվածաբանության Պատվավոր և Վաստակավոր Պրոֆեսոր էր: Նա դասավանդեց ԱՄՆ-ում 1978-1991թթ.-ին: Նախկինում նա Աստվածաշնչի ուսումնասիրության բաժնի ամբիոնի վարիչ էր «Կենտրոնական Աստվածաշնչյան քոլեջում» 1948-1978թթ.-ին, և պրոֆեսոր «Մետրոպոլիտեն» Աստվածաշնչյան ինստիտուտում 1945-1948թթ.-ին: Ավելի, քան 25 տարվա ընթացքում նա կազմում էր «Աստծո ժողովների» Կիրակնօրյա դպրոցի ուսումնական ծրագիրը չափահաս անդամների համար: 1980թ.-ին նա նախագահեց «Հոգեգալստական հետազոտությունների ընկերությունը»: Դադարելով դասավանդել 1991թ.-ին՝ նա շարունակեց զբաղեցնել «Լոգոն փրենսի» կողմից հրատարակվող հոգեգալստական դասագրքերի շարքի գլխավոր խմբագրի պաշտոնը Սփրինգֆիլդում մինչև 2.000թ.-ը: Իր դասավանդման կարիերայի ընթացքում Հորտոնը հյուրընկալվող պրոֆեսոր էր տարբեր համալսարաններում և սեմինարիաներում, բոլոր աշխարհամասերում՝ բացի Ավստրալիայից և Անտարկտիկայից: Հորտոնը և նրա հանգուցյալ կինը՝ Էվելինը, երեք երեխա ունեցան:

Դոկտոր Հորտոնն ավանդեց իր անձնական նամակները և փաստաթղթերը ՖՀԺԿ-ին: Այդ հավաքածուն բաղկացած է նրա նամակագրությունից, թե՛ ուսանողական, և թե՛ պրոֆեսորական ժամանակվա նշումներից, նրա գրավոր նյութերից և այլ նյութերից՝ կապված նրա եկեղեցական և ակադեմիական պաշտոնավարության հետ:

Մայր Լիզի Ռոբինսոնի և Վերայ. Էլայջա Լ. Հիլլի հավաքածուն



ՖՀԺԿ-ի տնօրեն Դարին Ռոջերսը և Էլայջա Լ. Հիլլը (աջ կողմում):

Մայր Լիզի Ռոբինսոնը (1860-1945թթ.)՝ «Աստծո եկեղեցին Քրիստոսում» հարանվանության (ԱԵՔ) Կանանց մասնաճյուղի հիմնադիրը, ծառայել էր Չարլզ Հ. Մեյսոնի կողքին և տասնամյակներ շարունակ կարևոր դեր էր ունեցել ԱԵՔ-ի կազմավորման մեջ: Որպես կանանց օժանդակ ծառայությունների ղեկավար՝ նա հիմնադրեց Ադոլֆի և Աստվածաշնչի ուսումնասիրության թիմը և

Կարուձևի շրջանը: Նա նույնպես օգնեց հիմնադրել Միսիոներական բաժինը (որը սկզբնականորեն հայտնի էր որպես Ներքին և Արտաքին միսիայի թիմ): Էլայջա Հիլլը, ով ԱԵՔ հարանվանության ծառայող և պատմաբան է, ավանդեց Ռոբինսոնի անձնական փաստաթղթերը ՖՀԺԿ-ին:

Մայր Լիզի Ռոբինսոնի և Վերայ. Էլայջա Լ. Հիլլի հավաքածուն ընդգրկում է Ռոբինսոնի և նրա դստեր՝ Իդա Ֆ. Բեյքերի անձնական փաստաթղթերը, ինչպես նաև այլ հրատարակություններ, որոնք Հիլլը հավաքել է: Այս հավաքածուն ընդգրկում է մոտավորապես 500 օրագինալ լուսանկար (մոտ 1899թ.-ից 1960-ական թթ.-ը), մոտավորապես 100 ԱԵՔ հրատարակություն և Հիլլի հետազոտումների արդյունքում ձեռք բերած նյութերը և փաստաթղթերը Ռոբինսոնի մասին:

Այս հավաքածուն նվիրաբերվեց 2013թ.-ի հոկտեմբերի 4-ին՝ ուրբաթ օրը, «Աստծո ժողովների» Աստվածաբանական սեմինարիայի Վիլյամ Սեյմուրի աղոթքատանը: Հիլլը, ով յոթ գրքի հեղինակ է և ում աշխատությունների թվում է Ռոբինսոնի կենսագրությունը, խոսեց Մայր Ռոբինսոնի կյանքի և ժառանգության մասին: Գլենդա Գուդսոնը, ով կազմել է ԱԵՔ առաջագնաց կին միսիոներների պատմությունը, ներկայացրեց պատմական ակնարկ ԱԵՔ շարժման ծառայող կանանց մասին: Խմբային քննարկումը, որին մասնակցում էին Հիլլը, Գուդսոնը, ՖՀԺԿ-ի տնօրեն Դարին Ռոջերսը և «Աստծո ժողովների» միսիայի պատմաբան Բարբարա Կավանես Փարքսը, նույնպես տեսագրվել է: Այս ծառայությունը և խմբային քննարկումը կարելի է դիտել agtv.ag.org կայքում:



Փոլ և Ջեն Քրաուչների հավաքածուն

Փոլ (1934-2013թթ.) և Ջեն (1938-) Քրաուչները, որոնք հայտնի են որպես քրիստոնեական հեռուստատեսության հիմնադիրներ, խոր արմատներ ունեն «Աստծո ժողովների» մեջ: Փոլի ծնողները էնդրյու և Սառա Քրաուչները, միսիոներներ էին Եգիպտոսում, և «Աստծո ժողովների» հիմնադիր անդամներ: Ջենի ծնողները՝ միջազգային ավետարանիչներ և հովիվներ Էդգար և Լորի Բեթանիները, օգնեցին հիմնադրել «Հարավ-Արևելյան Աստվածաշնչյան ինստիտուտը» (այժմ՝ «Հարավ-Արևելյան Համալսարան» Լեյքլենդում, Ֆլորիդայում): Էդգար Բեթանին նույնպես ծառայեց որպես «Աստծո ժողովների» գործադիր երեց մինչև իր մահը 1975թ.-ին:

«Կենտրոնական Աստվածաշնչյան համալսարանն» ավարտելուց հետո (1955թ.), Քրաուչն աշխատեց որպես մենեջեր մի շարք ռադիո և հեռուստատեսային կայաններում: «Աստծո ժողովները» հանձնարարեց Քրաուչին կազմակերպել և ղեկավարել իր նոր ստեղծված Հեռուստատեսության և ֆիլմերի պատրաստման բաժինը, որը գտնվում էր Բերբանկում՝ Կալիֆոռնիայում: Նա զբաղեցրեց այդ պաշտոնը 1961-1965թթ.-ին: 1975թ.-ին Քրաուչները հիմնադրեցին «Երրորդություն հեռարձակման ցանցը» (ԵՀՅ կամ ԹԻԲԻԷՆ): «ԹԻԲԻԷՆ»-ը աճեց դառնալով ամենամեծ կրոնական հեռուստատեսային ցանցն աշխարհում:

«ԹԻԲԻԷՆ»-ն ավանդեց 80 արկղ նյութեր ՖՀԺԿ-ին, որոնց թվում էր Ս. Ս. Ուորդի անձնական գրադարանը, ով «Արթնության ժամը» ռադիո հաղորդման հաղորդավարն էր 1953-1978թթ.-ին:

Հենրի Ջեռոյանի հավաքածուն



Հենրի Ջեռոյան, մոտ 1965թ.:

առաջնորդ Լևի Պեթրոսի ազդեցությունը՝ ՔԺԸ-ն աճեց՝ հասնելով մոտ 100 եկեղեցու ԱՄՆ-ում, և 100-ի՝ Կանադայում:

Ջեռոյանը մեծացել է ֆինն գաղթականների համայնքում, Միչիգանում: Նա երկու տարի սովորեց «Սուոմի» քոլեջում, մինչև «Մինեսոտա-Դոլուս» համալսարանում պատմության բակալավրի աստիճան ստանալը: Դրանից հետո նա ստացավ Ծառայության Դոկտորի աստիճան «Հյուսիսային Մկրտական Աստվածաբանական համալսարանում», Լոնբարդում, Իլինոյսում: Նա և նրա կինը՝ Մաքսինը, չորս որդի են ունեցել: Ջեռոյանը հաջորդեց Էլմեր Էրիկսոնին՝ որպես Դոլուսի (Մինեսոտա) Ավետարանի «Խորան» եկեղե-

Փոլ և Ջեն Քրաուչների հավաքածուն

ցու հովիվ, որը ՔԺԸ-ն գլխավոր համայնքներից մեկն է: Նա նույնպես ծառայեց այլ եկեղեցիներում՝ Միչիգանի Լաուրիում քաղաքում, Մինեսոտայի Կլոկետ քաղաքում և Իլինոյսի Կրիստալ Լեյք քաղաքում:

Ջեռոյանը ՔԺԸ-ի անվանափոխության, մանրակրկիտորեն մշակված վարդապետական հայտարարությունների և քաղաքականության հեղինակն էր 1950-1980-ական թվականներին: Ջեռոյանի ընկերներից մեկը՝ աստվածաբան Ռոբերտ Վեբերը, գրել է, որ նա «շատ խոհեմ և խոր մարդ է»: Նրա խորությունն արտահայտվում էր ամեն ինչում, ինչ նա անում էր՝ ներառյալ քարոզելը, գրավոր աշխատությունները և անձնական հարաբերությունները: Նա կամուրջներ կառուցեց տարբեր ավանդությունների հարող քրիստոնյաների միջև և գործուն մասնակցություն ունեցավ խարիզմատիկ նորոգման մեջ:

Ավելի, քան 60 տարի շարունակ Ջեռոյանը հավաքել էր ՔԺԸ-ին վերաբերվող նյութերի մի հարուստ պահոց: Նա հարցազրույցներ էր վերցրել անթիվ մարդկանցից, կուտակել էր հազվագյուտ հրատարակություններ և գրել էր ծավալուն նյութեր պատմական աշխատության համար, որը, թեև ծրագրում էր, բայց այդպես էլ չհրատարակեց: Ջեռոյանն ավանդեց իր հավաքածուն ՖՀԺԿ-ին, որպեսզի այլ մարդիկ շարունակեին այնտեղից, որտեղ նա կանգ էր առել: Այս հավաքածուն թույլ է տալիս թափանցել Հոգեգալստական շարժման կարևոր հատվածներից մեկի մեջ, որը եզակի ներդրում ունեցավ ամերիկյան և համաշխարհային քրիստոնեության մեջ ազդեցիկ տեղական եկեղեցիների, հրատարակությունների և միսիոներական գործունեության միջոցով:

«Պատտեն» համալսարանի պահոցը



Քրիստոնեություն, մոտ 1931թ.

«Պատտեն» համալսարանը, որը հիմնադրվեց որպես «Օբլենդի Աստվածաշնչյան ինստիտուտ» 1944թ.-ին նշանավոր կին ավետարանիչ Դոկտոր Քրիստոնեի կողմից (1913-2004թթ.), երկար ժամանակ է, ինչ Կալիֆոռնիա նահանգի Օբլենդ քաղաքի կարևոր մասն էր: Պատտենը սկսեց իր ավետարանչական ծառայությունը, երիտասարդ տարիքում: Նա ավարտեց «ԿՅԱՆՔ» Աստվածաշնչյան քոլեջը 1933թ.-ին և ծառայության նշանակվեց «Քառակողմ Ավետարանի միջազգային եկեղեցու» կողմից 1934թ.-ին: 1944թ.-ին, Օբլենդում հաջողությամբ պատկաված արթնության հավաքույթների արդյունքում, ստեղծվեց «Օբլենդի Աստվածաշնչյան համալսարանը», «Պատտեն» Քրիստոնեական կրթության ակադեմիան և «Քրիստոնեական տաճարը»: Նա նույնպես կազմեց «Ամերիկայի Քրիստոնեական Ավետարանական եկեղեցիները» (ԱՔԱԵ), որը ծառայության էր նշանակում համալսարանի ավարտած ուսանողներին և «Ավետարանականների ազգային միության» անդամ էր:

2013թ.-ին՝ այն բանից հետո, երբ խիստ ֆինանսական դժվարությունների պատճառով «Յունիվերսիթի Նաու» շահույթ հետապնդող կրթական ընկերությունը ձեռք բերեց «Պատտեն» համալսարանը, այն քրիստոնեականից վերածվեց աշխարհիկ հաստատության: Համալսարանը ձեռք բերելուց հետո համալսարանական պահոցը տեղափոխվեց ՖՀԺԿ: Վերջին տարիներին այդ պահոցն ավելի զարգացավ շնորհիվ Դոկտոր Աբրահամ Ռուելլասի, ով տարիներ շարունակ աշխատել է

Շարունակելի էջ 78-ում

թափում «գրեթե ամեն քրիստոնեական շարժման վրա Միացյալ Նահանգներում»: Երկրորդը՝ նա հավատում էր, որ «այն արթնությունը, որն» օտար երկրներում է, Ամերիկա կբերի «այն արթնությունը, որը պետք է գա»: Նա կանխատեսում էր, որ «ամբողջ աշխարհում ապրող մեր եղբայրների պարզությունը, նախանձավորությունը և հոգևոր գործունեությունը» ի վերջո կբերի «նոր այցելության մեր հայրենի երկրում»⁶:

«Աստծո ժողովներն» աճում է Ամերիկայում, ինչի իրական պատճառն ԱՄ-ի ազգային ձևափոխությունն է: Այն սկսում է ընդգրկել ավելի քիչ սպիտակամորթ հետևորդներ և ավելի արտացոլել այն ազգային, լեզվական և հասարակական բազմազանությունը, որը գոյություն ունի համաշխարհային եկեղեցում: ԱՄ-ի հիմնադիր հայրերը և մայրերը հիմք դրեցին այս ազգային փոփոխության համար 1914թ.-ին, երբ նվիրեցին այս Ընկերակցությունը «մեծագույն ավետարանչական աշխատանքին, որն այս աշխարհը երբևէ տեսել է»: 1921թ.-ին, ԱՄ-ն ընդունեց տեղաբնակների կողմից կառավարվող եկեղեցու սկզբունքը՝ որպես իր պաշտոնական միսիոներական ռազմավարություն, համաշխարհային ավետարանչությունն ավելի արդյունավետ կերպով իրականացնելու համար: Շնորհիվ այս ռազմավարության իրագործման (այն որ ամեն մի ազգային եկեղեցի ինքնավար է և չի վերահսկվում Արևմուտքի կողմից)՝ բարձրացան ազդեցիկ ազգային եկեղեցիներ և առաջնորդներ: Եվ այժմ, իրադարձությունների ներկա զարգացման պայմաններում, հնարավոր է, որ այդ եկեղեցիները նորոգում բերեն Ամերիկային:

Դարին Ջ. Ռոջերսը, ով Հումանիտար գիտությունների մագիստրոս և Իրավագիտության դոկտոր է, «Ֆլաուեր» հոգեգալստական ժառանգության կենտրոնի տնօրենն է և «Աստծո ժողովների ժառանգություն» ամսագրի խմբագիրը:

ՆՇՈՒՄՆԵՐ

- ¹ Ջորջ Օ. Վուդ. «Աստծո ժողովների Համաշխարհային ընկերակցությունը. Միաբանվել՝ մեր առաքելությամբ. Հոգեգալստական համագործակցությունը համաշխարհային ավետարանչության մեջ» հոդվածում, խմբ. Արտո Համալայնեն և Գրանտ ՄակՔլանգ (Քլիվլենդ, Թենեսի, «Pathway Press», 2012թ.), էջեր 123-130: Տե՛ս նաև Վիլյամ Մոուլնար. «Աստծո ժողովների Համաշխարհային ընկերակցությունը. Միաբանված միսիոներական հոգով», «Աստծո ժողովների ժառանգություն», հմ. 31 (2011թ.), էջեր 40-47:
- ² Թոմաս Ֆ. Տիմմերման. «Մտորումներ՝ կապված հոբեյլանի հետ», «Հոգեգալստական Ավետարան», ապրիլի 5, 1964թ., էջ 2:
- ³ Քեյթ Թրեյսի. «Հինգ պատճառ, թե ինչու Հարավային Մկրտական եկեղեցիների մեծ մասը գրեթե չի մկրտում «հազարամյակայինների»», «Christianity Today», Մայիսի 29, 2014թ., <http://www.christianitytoday.com/gleanings/2014/may/five-reasons-why-southern-baptist-baptize-millennials-sbc.html> (մուտքը՝ հունիսի 21, 2014թ.):
- ⁴ «Աստծո ժողովները (ԱՄՆ) տոնում է 24 տարի տևող աճը: Համաշխարհային աճը հասնում է 67.5 միլիոնի», «ԱՄ-ի Նորություններ», հունիսի 16, 2014թ.:
- ⁵ Կառլ Բրյումբաք. «Հանկարծակի երկնքից. Աստծո ժողովների պատմությունը» (Սփրինգֆիլդ, Միսուրի, «Ավետարան» հրատարակչություն, 1961թ.), էջեր 350-351:
- ⁶ Նույնը, էջեր 352-354:

որպես դասախոս և ադմինիստրատոր «Պատտեն համալսարանում»: Նա նույնպես «Կասկածի ոչ մի նշույլ. Բիբլի Պատմության կյանքը և ծառայությունը» գրքի հեղինակն է («Սեյմուր փրենս», 2012թ.): Պատտենի հավաքածուն ընդգրկում է համալսարանական դասագրքեր, դասընթացների ծրագրեր և պարբերականներ, ծավալուն նամակագրություն Պատտենի և նրա ամուսնու՝ Կառլ Թոմաս Պատտենի միջև, լուսանկարների պրոմներ և գրանցամատյաններ, ինչպես նաև այլ հրատարակություններ և նյութեր: Բիբլի Պատտենն աներևակայելի անձնավորություն էր, և այս հավաքածուի նյութերի մեծ մասը կապ ունի նրա և նրա ընտանիքի հետ:

Վերպ. Ջորջ Վ. Սաուրվիկի հավաքածուն



Ջորջ Վ. Սաուրվիկ

Ջորջ Վ. Սաուրվիկը (1918-2006թթ.) հայտնի անձնավորություն էր Հարավային Կալիֆորնիայի հոգեգալստական եկեղեցիներում: Տարբեր ժամանակներում նա ծառայող է եղել հետևյալ չորս ընկերակցություններում. «Քառակողմ Ավետարանի միջազգային եկեղեցի», «Աստծո ժողովներ», «Ով ցանկանում է» և «Առաքելական

արթնություն»: Ավարտելով «ԿՅԱՆՔ» Աստվածաշնչյան քոլեջը Լոս Անջելեսում, նա սկսեց ուսուցանել Աստծո խոսքը և հավաքել աստվածաբանական գրքեր և պարբերականներ: 1975թ.-ին նա և նրա կինը Լեոնան, հիմնադրեցին «Աստվածաշնչի ուսուցման ծառայությունը», որն ուղարկում էր իր ուսումնական լսաժապավենները ողջ աշխարհով մեկ: Իր բոլոր առաքինությունների հետ մեկտեղ, նրան հիշում են իր քաղցրաբար վարքով և Հոգեգալստական և Անգլո-իսրայելական ուղերձները հավատարմորեն ուսուցանելով:

Սաուրվիկը նշանակալի հավաքածու էր կազմել, որը բաղկացած էր 4.000 գրքից, ինչպես նաև բազմաթիվ պարբերականներից, գրքուկներից, թոռցիկներից, լուսանկարներից և այլ պահոցային նյութերից: Նրա մահից հետո նրա ընտանիքը հանձնեց այդ հավաքածուն Չարլզ Ջենինգսին, ով հովիվ էր Օվասոյում՝ Օլյահոմայում: Ջենինգսն ավանդել էր այդ հավաքածուն ՖՀԺԿ-ին: Սաուրվիկը հարում էր Միարարական, Անգլո-իսրայելական, Կալվինական և «Վերջին անձրևի» համոզմունքներին, և նրա հավաքածուի մեծ մասը ներկայացնում էր այդ փոքրիկ ավանդությունները Հոգեգալստական շարժման մեջ: Այս կարևոր հավաքածուն ընդգրկում է բազմաթիվ հրատարակություններ, որոնք այլպես հասանելի չէին լինի հետազոտողների համար: Բազմաթիվ գրքեր, որոնք չէին համապատասխանում ՖՀԺԿ-ի չափանիշներին, փոխանցվեցին «Աստծո ժողովներին» Աստվածաբանական սեմինարիայի գրադարան: Անգլո-իսրայելական հավաքածուն, որը նրա հավաքածուի մի մասն է և որը որոշվել է չդնել շրջանառության մեջ, տեղադրվելու է գրադարանի Հատուկ հավաքածուների սրահում, իսկ մյուս նյութերն ընդգրկվել են շրջանառվող հավաքածուների թվում: ✠

Շարունակելի էջ 35-ից / Ո՞վ ով էր Հոթ Սփրինգսում

191 «Հովիվների և երեցների ցուցակը»: Հոթ Սփրինգսի լուսանկարը (L0303): «Աժ Կազմակերպչական հավաքույթի մի քանի մասնակիցներ, ովքեր մինչ օրս կենդանի են», էջեր 6-7: Ֆլաուեր, չիրապարակված ցուցակ, 1939թ.:

192 Պրն. և Տկն. ՄակԿենզիների դուստրը, հետագայում ամուսնացած Վիլյամ Կլարենս Վիլերսի հետ: Հոթ Սփրինգսի լուսանկարը (L0303) (ինքնություն անորոշ է): Միլի (Վիլերս) Դեյ, անձնական հարցազրույց Գլեն Գորիի հետ, ապրիլի 10, 2014թ.:

193 Հոթ Սփրինգսի լուսանկարը (L0303) (ինքնություն անորոշ է): Միլի (Վիլերս) Դեյ, անձնական հարցազրույց Գլեն Գորիի հետ, ապրիլի 10, 2014թ.:

194 Հոթ Սփրինգսի լուսանկարը (L0303) (ինքնություն անորոշ է): Միլի (Վիլերս) Դեյ, անձնական հարցազրույց Գլեն Գորիի հետ, ապրիլի 10, 2014թ.:

195 Վ. Ա. Մերսեր Կրտ., նամակ Ուեյն Ուորնտերին, նոյեմբերի 19, 1987թ.:

196 Դուեյն Միլեր, անձնական հարցազրույց Գլեն Գորիի հետ, ապրիլի 14, 2014:

197 Կուլնը:

198 Ջոշուա և Վիլի Միլներների դուստրը, հետագայում ամուսնացած Թոմաս Հ. Գրանտի հետ: Վերա. Էռնեստ Սթրոնգ, անձնական այցելություն Աժ Պահոց, մարտի 23, 1993թ.: Փեն Գրին (Տկն. Թոմ), անձնական հարցազրույց Գլեն Գորիի հետ, հունվարի 31, 2001թ.: Հոթ Սփրինգսի լուսանկարը (L0303).

199 «Հովիվների և երեցների ցուցակը»: Հոթ Սփրինգսի լուսանկարը (L0303): «Աժ Կազմակերպչական հավաքույթի մի քանի մասնակիցներ, ովքեր մինչ օրս կենդանի են», էջեր 6-7: Բրյուսթաբ., էջեր 67, 162-190: Մենգիս, էջեր 97-107: Ֆլաուեր, չիրապարակված ցուցակ, 1939թ.: Պատվիրակների լուսանկարը 23 տարի անց (L7209): «Քսանհինգ ծառայող», էջ 8: Բարնետ. «Քառասուն տարի առաջ»: «Թաքնված ծառայություն Գլխավոր խորհրդի Ընկերակցության համար», էջեր 6, 10: Վայնհաուս, «Աստծո ժողովները», էջեր 31-32, 35: Բարնետ. «Աստծո ժողովների վաղ շրջանի պատմությունը», էջեր 8-11: «Առաջին Աստծո ժողովը, Վան Բյուրեն, Արկանզաս. Ընծայման օրը՝ հունիսի 9, 1985թ.», էջեր 8-9: Բուրլե. «Ինչպես տափաստանային կրակը», էջեր 40-42: Բարնետ. «Պատվիրակները կազմում են Աստծո ժողովները», էջեր 5, 8, 9:

200 Վերա. Էռնեստ Սթրոնգ, անձնական այցելություն Աժ Պահոց, մարտի 23, 1993թ.: Փեն Գրին, հարցազրույց, հունվարի 31, 2001թ.: Հոթ Սփրինգսի լուսանկարը (L0303): Բուրլե. «Ինչպես տափաստանային կրակը», էջեր 40-42:

201 Պատվիրակների լուսանկարը 50 տարի անց (L4351):

202 «Քսանհինգ ծառայող», էջ 8:

203 Ֆորեստ Գ. Բարլերի քույրը: Վերա. Էռնեստ Սթրոնգ, անձնական այցելություն Աժ Պահոց, մարտի 23, 1993թ.: Փեն Գրին, հարցազրույց, հունվարի 31, 2001թ.: Հոթ Սփրինգսի լուսանկարը (L0303): Բուրլե. «Ինչպես տափաստանային կրակը», էջեր 40-42:

204 «Հովիվների և երեցների ցուցակը»:

205 «Հովիվների և երեցների ցուցակը»:

206 Հոթ Սփրինգսի լուսանկարը (L0303): Պատվիրակների լուսանկարը 50 տարի անց (L4351): «Աժ Կազմակերպչական հավաքույթի մի քանի մասնակիցներ, ովքեր մինչ օրս կենդանի են», էջեր 6-7: Ուորնտեր. «Հոթ Սփրինգսի կանչը, Արկանզաս», էջեր 1, 6: Ֆլաուեր, չիրապարակված ցուցակ, 1939թ.: Պատվիրակների լուսանկարը 23 տարի անց (L7209): «Քսանհինգ ծառայող», էջ 8: «Թաքնված ծառայություն Գլխավոր խորհրդի Ընկերակցության համար», էջեր 6, 10: Վիլի Թ. Միլսենս, հարցազրույց «Առաջնորդների Ազգային ինստիտուտում», դեկտեմբեր, 1973թ.: Վիլի Թ. Միլսենս, «Մեր Աստծո ժողովների ժառանգությունը» հուլիսի 12, 1989թ.: Վիլի Թ. Միլսենս. «Ժամանակակիցություն», 1896-1914թթ., ձեռագրով, տարեթիվը նշված չէ: Ջեյ Կարնիլ.

«Վիլի Թ. Միլսենս. Հոգեբանական առաջնացումը Ապալաչիայում (Սենթ Փոլ, Վիրջինիա, հրատարակված հեղինակի կողմից, 1980թ.): «Տղամարդիկ, ովքեր մասնակցել էին Առաջին հորրորդին, կրկին հանդիպում են 66 տարի անց», էջ 26: Քանիզգեն, էջեր 12-13, 38: Ուորնտեր. «Այցելություն մեր պատմական վայրերը»: Հարցազրույցներ բանավոր պատմությունների մասին Վերա Ռայլի, Դոլի Սմիթ, Վիլի Միլսենսի, Դեյվիդ Լի Ֆոլոյի հետ. Ինդիանա, Ինդիանա, «Ուսուցիչների համաժողով», օգոստոսի 8, 1989թ.: Միլսենս, «Վիլի Միլսենսը հիշում է 2. Հ. Մեյսոնին», էջ 8: ՄակԳի. «Սթրեյթը բռնում են իրար ձեռքերը», էջեր 4-13:

207 «Հովիվների և երեցների ցուցակը»: «Գլխավոր խորհրդի արձանագրություն», ապրիլ 1914թ.:

208 «Հովիվների և երեցների ցուցակը»: Հոթ Սփրինգսի լուսանկարը (L0303): Ֆլաուեր, չիրապարակված ցուցակ, 1939թ.: «Թաքնված ծառայություն Գլխավոր խորհրդի Ընկերակցության համար», էջեր 6, 10:

209 «Առաջին Աստծո ժողովը, Վան Բյուրեն, Արկանզաս. Ընծայման օրը՝ հունիսի 9, 1985թ.», էջեր 8-9:

210 «Հովիվների և երեցների ցուցակը»: Դ. Վ. Մեր-ֆի. «Ջեյնուց Օլկահոմայից», «Շաբաթական Ավետարան», մայիսի 22, 1915թ., էջ 3:

211 Տկն. Դոն ՄակՄեյնս (Ուոլտեր Օլիվերի դուստրը), հետախուսային հարցազրույց Գլեն Գորիի հետ, հունիսի 1, 1994թ.:

